

Ա. Մ. Նիկոլյսկի, Մ. Կ. Պոտապով,
Ն. Ն. Ռեշետնիկով, Ա. Վ. Շևկին

Մաթեմատիկա

6

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԳՊՐՈՑԻ
ԴԱՍԱԳԻՐՔ

Մաս 1

Վերահրատարակություն

Թարգմանված հրատարակությունը լույս է
տեսել «Պրոսվեշչենիե» հրատարակչության
լիցենզիայի համաձայն



Անտարես

Երևան

2020

ՀՏԴ 373.167.1:511.1 (075)
ԳՄԴ 22.130գ72

Դասագիրքը հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Սույն դասագիրքը նախատեսված է տարածել Հայաստանի Հանրապետությունում
և Սփյուռքում:

Սույն հրատարակությունը համապատասխանում է ՀՀ ԿԳՆ առարկայական
չափորոշչին և ամբողջովին մշակվել, խմբագրվել ու կատարելագործվել է:

Վերամշակող խմբագիր՝ *Գագիկ Աղեկյան*

Նիկոլսկի Ա. Մ. և ուրիշ.

Մաթեմատիկա.– Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի
դասագիրք. մաս 1 (վերահրատարակություն) / Ա. Մ. Նիկոլսկի, Մ. Կ.
Պոտապով, Ն. Ն. Ռեշետնիկով, Ա. Վ. Շևկին.–Եր.: Անտարես, 2020 –
120 էջ:

Պայմանական նշաններ՝

- 14.** – բանավոր պատասխանով առաջադրանքներ
- 23.** – առավել դժվար առաջադրանքներ
- * – ոչ պարտադիր նյութ:

ISBN 978-9939-76-519-8

© Նիկոլսկի Ա. Մ. և ուրիշ., 2020

© «Պրոսվեչենիե», 2005, 2020


© «Անտարես», 2020

© Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման
տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ
(տպաքանակի սեփականության իրավունքով), 2020

Բոլոր իրավունքները պաշտպանված են



Անտարես



ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏՈԿՈՍՆԵՐ

1.1. ԹՎԵՐԻ ԵՎ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

0-ից տարբեր a և b թվերի քանորդն անվանում են նաև **a և b թվերի հարաբերություն**: a և b թվերն անվանում են **հարաբերության անդամներ**:

Օրինակ՝

$8:2$ -ը կամ $\frac{8}{2}$ -ը 8 թվի հարաբերությունն է 2 թվին,

$\frac{1}{3}:\frac{1}{5}$ -ը $\frac{1}{3}$ -ի հարաբերությունն է $\frac{1}{5}$ -ին:

Քանորդի հիմնական հատկությունից հետևում է հարաբերության հետևյալ հատկությունը.

Հարաբերությունը չի փոխվում, եթե նրա անդամները բազմապատկենք կամ բաժանենք զրոյից տարբեր միևնույն թվին:

$$a:b=(a \cdot c):(b \cdot c) \text{ կամ } \frac{a}{b}=\frac{a \cdot c}{b \cdot c} (c \neq 0):$$

Երկու մեծությունների քանորդն անվանում են նաև այդ մեծությունների **հարաբերություն**: Իրենք՝ մեծությունները, կոչվում են **հարաբերության անդամներ**:

Նույն անվանումն ունեցող մեծությունների (օրինակ՝ չափման նույն միավորներով արտահայտված երկարությունների, արագությունների, գների և այլն) հարաբերությունը **թիվ է**: Օրինակ՝

ա) $\frac{5 \text{ կմ}}{3 \text{ կմ}}=\frac{5 \cdot 1 \text{ կմ}}{3 \cdot 1 \text{ կմ}}=\frac{5}{3}$, կարճ՝ $\frac{5 \text{ կմ}}{3 \text{ կմ}}=\frac{5}{3}$,

բ) $\frac{2 \text{ դմ}}{1 \text{ սմ}}=\frac{2 \cdot 10 \text{ սմ}}{1 \text{ կմ}}=20$:

Այդպիսի մեծություններն անվանում են **համասեռ մեծություններ**:

Տարբեր անվանում ունեցող մեծությունների (երկարության և ժամանակի, ապրանքի արժեքի և նրա քանակության, մարմնի զանգվածի և նրա ծավալի և այլն) հարաբերությունը **նոր մեծություն է**:

Օրինակներ.

1) (5 կմ) ճանապարհի հարաբերությունը (3 ժ) ժամանակին նոր մեծություն է՝ արագություն, որն արտահայտված է արագության $\left(\frac{\text{կմ}}{\text{ժ}}\right)$ միավորով՝

$$\frac{5 \text{ կմ}}{3 \text{ ժ}} = \frac{5}{3} \cdot 1 \frac{\text{կմ}}{\text{ժ}} = \frac{5 \text{ կմ}}{3 \text{ ժ}},$$

2) մարմնի (520 կգ) զանգվածի հարաբերությունը նրա (2 մ³) ծավալին նոր մեծություն է՝ նյութի խտություն, որն արտահայտված է խտության $\left(\frac{\text{կգ}}{\text{մ}^3}\right)$ միավորով՝

$$\frac{520 \text{ կգ}}{2 \text{ մ}^3} = 260 \cdot 1 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} = 260 \frac{\text{կգ}}{\text{մ}^3},$$

3) համանման ձևով՝ տրված նյութի զանգվածի (օրինակ՝ 12 կգ) աղի հարաբերությունը այդ նյութը պարունակող լուծույթի (3 մ³) ծավալին նոր մեծություն է՝ **լուծույթի թանձրություն (կոնցենտրացիա)**, որը չափվում է թանձրության $\left(\frac{\text{կգ}}{\text{մ}^3}\right)$ միավորով՝

$$\frac{12 \text{ կգ}}{3 \text{ մ}^3} = 4 \cdot 1 \frac{\text{կգ}}{\text{մ}^3} = 4 \frac{\text{կգ}}{\text{մ}^3}.$$

Անգամ մեզ լավ ծանոթ մի մեծություն՝ **գինը**, տրված ապրանքի արժեքի հարաբերությունն է նրա զանգվածին կամ թվաքանակին և ուրեմն նոր մեծություն է: Այսպես, եթե 2 կգ ապրանքի դիմաց վճարել են 3000 դրամ, ապա ապրանքի գինը կլինի

$$\frac{3000 \text{ դ}}{2 \text{ կգ}} = 1500 \frac{\text{դ}}{\text{կգ}},$$

իսկ եթե նույն գրքի 30 օրինակի համար վճարել են 24000 դրամ, ապա մեկ գրքի գինը կլինի

$$\frac{24000 \text{ դ}}{30 \text{ հատ}} = 800 \frac{\text{դ}}{\text{հատ}}:$$

Սովորաբար գնի միավորի հայտարարը չեն գրում, այլ գրում և կարդում են՝ «1 կգ ապրանքի գինը 1500 դրամ է», «գրքի մեկ օրինակի գինը 800 դրամ է»:

Արագության $\frac{\text{կմ}}{\text{ժ}}$, $\frac{\text{մ}}{\text{ր}}$, $\frac{\text{մ}}{\text{վ}}$ միավորները և այլ մեծությունների միավորները հաճախ գրում են թեք գծիկով՝ կմ/ժ, մ/ր, մ/վ, ... :

1. Ի՞նչն են անվանում.
ա) a թվի հարաբերություն b-ին, բ) հարաբերության անդամներ:
Բերե՛ք օրինակներ:
2. Ի՞նչ է ա) նույն անվանումն ունեցող, բ) տարբեր անվանումներ ունեցող մեծությունների հարաբերությունը: Բերե՛ք օրինակներ:
3. Օգտագործելով «հարաբերություն» բառը՝ կարդացե՛ք գրառումը.
ա) 7:2, բ) $\frac{3}{5}$, գ) 1:5, դ) $\frac{1}{6}$:
4. Գրե՛ք հարաբերությունը, նշե՛ք նրա անդամները.
ա) 7-ը 3-ին, բ) 5-ը 9-ին, գ) 12-ը 4-ին, դ) 10-ը 1000-ին:
5. Գտե՛ք հարաբերությունը.
ա) 3-ը $\frac{1}{2}$ -ին, բ) 5-ը $\frac{10}{13}$ -ին, գ) $\frac{7}{8}$ -ը $\frac{21}{32}$ -ին, դ) $\frac{12}{17}$ -ը $\frac{48}{51}$ -ին:
6. Կարդացե՛ք հարաբերությունը, նշե՛ք նրա անդամները, հարաբերության հատկության օգնությամբ պարզեցրե՛ք այն.

ա) $40:50=4:5$:

բ) 99:18, գ) 450:250, դ) 720:81:
7. Հարաբերությունը գրե՛ք կոտորակի տեսքով (որտեղ հնարավոր է, պարզեցրե՛ք այն).
ա) 3:5, բ) 49:28, գ) 35:700,
դ) 5:7, ե) 520:460, զ) 27:81:
8. Կարելի՞ է արդյոք տրված հարաբերությունն արտահայտել բնական թվով.
ա) 40:20, բ) 30:60, գ) 1000:100,
դ) 600:30, ե) 20:40, զ) 100:1000:
9. Կոտորակային թվերի հարաբերությունը փոխարինե՛ք բնական թվերի հարաբերությունով՝ ելնելով բերված *անուշային օրինակից*.

$\frac{1}{2}:\frac{1}{3}$: I եղանակ $\frac{1}{2}:\frac{1}{3}=\frac{1\cdot 3}{2\cdot 1}=\frac{3}{2}$:

II եղանակ հարաբերության անդամներից յուրաքանչյուրը բազմապատկենք 6-ով

$$\frac{1}{2}:\frac{1}{3}=\frac{6}{2}:\frac{6}{3}=3:2:$$

- ա) $\frac{1}{4}:\frac{1}{5}$, բ) $\frac{3}{7}:\frac{4}{5}$, գ) $\frac{2}{5}:\frac{3}{7}$,

$$\eta) \frac{12}{17} : 1\frac{1}{2}, \quad \text{ե) } 1\frac{1}{2} : \frac{3}{8}, \quad \text{զ) } 2\frac{1}{2} : 1\frac{2}{3}:$$

Պարզեցրե՛ք մեծությունների հարաբերությունը **(10, 11)**.

10. ա) $\frac{35 \text{ մ}}{28 \text{ ս}},$ բ) $\frac{45 \text{ կգ}}{36 \text{ կգ}},$ գ) $\frac{420 \text{ կմ}}{720 \text{ կմ}},$

դ) $\frac{450 \text{ տ}}{540 \text{ տ}},$ ե) $\frac{320 \text{ ժ}}{48 \text{ ժ}},$ զ) $\frac{480 \text{ ր}}{840 \text{ ր}}:$

11. ա) $\frac{12 \text{ ս}}{15 \text{ դս}},$ բ) $\frac{18 \text{ կգ}}{540 \text{ գ}},$ գ) $\frac{490 \text{ սմ}}{35 \text{ դս}},$

դ) $\frac{450 \text{ կգ}}{2 \text{ տ}},$ ե) $\frac{3500 \text{ սմ}^3}{21 \text{ դս}^3},$ զ) $\frac{9900 \text{ դս}^3}{18 \text{ ս}^3}:$

12. Օգտվելով *անուշային օրինակից՝* պարզեցրե՛ք հարաբերությունը.

$$\text{ա) } \frac{350 \text{ կմ}}{5 \text{ ժ}} = \frac{350}{5} \cdot \frac{\text{կմ}}{\text{ժ}} = 70 \text{ կմ/ժ}:$$

բ) $\frac{720 \text{ կմ}}{8 \text{ ժ}},$ գ) $\frac{360 \text{ ս}}{3 \text{ ր}},$ դ) $\frac{420 \text{ կգ}}{4 \text{ ս}^3},$

ե) $\frac{2250 \text{ կգ}}{3 \text{ ս}^3},$ զ) $\frac{720 \text{ մ}}{20 \text{ վ}},$ է) $\frac{450 \text{ գ}}{5 \text{ սս}^3}:$

13. Գտե՛ք անցած S ճանապարհը, եթե հայտնի են հավասարաչափ շարժման v արագությունը և t ժամանակը.

ա) $v = 2 \text{ մ/վ}, \quad t = 3 \text{ վ},$ բ) $v = 2 \text{ մ/վ}, \quad t = \frac{1}{20} \text{ ր}:$

14. Գտե՛ք հավասարաչափ շարժման v արագությունը, եթե հայտնի են անցած S ճանապարհը և շարժման t ժամանակը.

ա) $S = 6 \text{ մ}, \quad t = 3 \text{ վ},$ բ) $S = 6 \text{ մ}, \quad t = \frac{1}{20} \text{ ժ}:$

15. Հետիոտնի արագությունը $5\frac{1}{5}$ կմ/ժ է: Գտե՛ք նրա անցած ճանապարհը

ա) 2 ժամում, բ) $1\frac{1}{2}$ ժամում, գ) 45 րոպեում, դ) 125 րոպեում:

16. $1\frac{1}{2}$ կմ հեռավորությունը հետիոտնն անցավ 20 րոպեում: Գտե՛ք նրա արագությունը: Պատասխանը գրե՛ք հետևյալ միավորներով.

ա) կմ/ժ, բ) կմ/ր, գ) մ/ժ, դ) մ/ր, է) մ/վ:

17. Մարդատար մեքենայի արագությունը 72 կմ/ժ է: Ի՞նչ ճանապարհ այն կանցնի.

ա) $\frac{2}{3}$ ժամում, բ) 45 րոպեում, գ) 50 րոպեում, դ) 165 րոպեում:

18. Մարդատար մեքենայի արագությունը 1200 մ/ր է: Քանի՞ ժամում մեքենան կանցնի.

ա) 144 կմ, բ) 36 կմ, գ) 8 կմ, դ) 54 կմ:

19. Գտե՛ք մեքենայի արագությունը, եթե 80 կմ ճանապարհն այն անցնում է.

- ա) 1 ժ-ում, բ) $\frac{4}{5}$ ժ-ում, գ) $\frac{4}{3}$ ժ-ում, դ) $\frac{8}{7}$ ժ-ում:
 ե) 150ր-ում, զ) 65 ր-ում, է) 90 ր-ում, ը) 54 կմ:

20. Երկու չմշկորդ միաժամանակ մեկնարկեցին 400 մ շրջագիծ ունեցող շրջանաձև սահքուղու նույն կետից՝ 20 կմ/ժ և 21 կմ/ժ արագություններով: Երկրորդ չմշկորդը, անցնելով 10000 մ, առաջինից մեկ պտույտից ավելի արած կլինի՞: Իսկ երկու պտույտից ավելի:

1.2. ՄԱՍՇՏԱՔ

Թղթի վրա տարբեր առարկաներ նկարելիս հաճախ նկարի չափերը չեն համընկնում այդ առարկաների իրական չափերին: Հարմար է լինում մեծ առարկաները պատկերել փոքրացրած տեսքով, իսկ փոքրերը՝ մեծացրած:

Բայց նկարը, գծագիրը կամ հատակագիծը պետք է պատկերացում տա առարկայի իրական չափերի մասին: Այդ նպատակով գծագրերի և հատակագծերի վրա հատուկ գրառում են անում՝ նշելով գծագրի մի որևէ հատվածի երկարության հարաբերությունը նրա իրական երկարությանը:

Օրինակ, եթե տան հատակագծի վրա 1 սմ երկարությամբ հատվածն իրականում ունի 2 մ երկարություն, ապա գրում են.

1 սմ-ում 2 մ, կամ 1 սմ : 200 սմ, կամ 1 : 200:

Հատակագծի որևէ գծի երկարության հարաբերությունը համապատասխան իրական գծի երկարությունը կոչվում է մասշտաբ:


Եթե առարկայի և հատակագծում նրա պատկերի չափերն արտահայտված են չափման նույն միավորներով, ապա մասշտաբն արտահայտվում է թվերի հարաբերությամբ:

Վերը բերված օրինակում մասշտաբը 1 : 200 է:

Թվերի հարաբերությամբ արտահայտված մասշտաբն անվանում են **թվային մասշտաբ**:

Աշխարհագրական քարտեզներում թվային մասշտաբն արտահայտում են կոտորակով (նկար 1): Այդ կոտորակի համարիչը 1 է, իսկ հայտարարը՝ այն թիվը, որ ցույց է տալիս, թե քարտեզում վերցրած ցանկացած հեռավորություն քանի անգամ է փոքր տեղանքի համապատասխան հեռավորությունից:

Օրինակ՝ $\frac{1}{20000}$ կամ 1:20000 գրառումը նշանակում է, որ քարտեզում վերցրած 1 սմ-ը համապատասխանում է տեղանքի 20000 սմ-ին:




Նկար 1


Տեղանքում սովորաբար չափումները կատարվում են մետրերով կամ կիլոմետրերով: Հարմարության համար հաճախ քարտեզի վրա պատկերում են մի հատված և մետրերով կամ կիլոմետրերով նշում նրան համապատասխանող հեռավորությունը տեղանքում:

21. Ի՞նչ է ցույց տալիս հետևյալ թվային մասշտաբը.
 ա) 1 : 100, բ) 1 : 1000, գ) 1 : 20000:
22. Գտե՛ք թվային մասշտաբը, եթե հայտնի է, որ հատակագծի (կամ աշխարհագրական քարտեզի) 1 սմ-ը պատկերում է.
 ա) 10 սմ, բ) 50 սմ, գ) 6 դմ, դ) 10 մ,
 ե) 100 մ, զ) 1 կմ, է) 6 կմ, ը) 10 կմ
- երկարության հատված տեղանքում:
23. Երկու քաղաքների հեռավորությունը 200 կմ է: Գտե՛ք այդ քաղաքների պատկերների հեռավորությունը քարտեզում, եթե թվային մասշտաբը հավասար է.
 ա) 1 : 1 000 000, բ) 1 : 200 000,
 գ) $\frac{1}{5\,000\,000}$, դ) $\frac{1}{20\,000\,000}$:

24. Քարտեզում թվային մասշտաբը $\frac{1}{50\,000}$ է: Տեղանքում գտե՛ք այն հեռավորությունը, որը քարտեզի վրա հավասար է.
- ա) 1 սմ, բ) 5 սմ, գ) 22 սմ,
 դ) 37 մմ, ե) $1\frac{1}{5}$ դմ, զ) 146 մմ:
25. Սենյակի հատակագիծն ունի ուղղանկյան տեսք, որի կողմերն են 40 մմ և 31 մմ: Գտե՛ք սենյակի երկարությունն ու լայնությունը, եթե հատակագծի թվային մասշտաբը 1 : 200 է:
26. Բանջարանոցն ունի 340 մ երակությամբ և 220 մ լայնությամբ ուղղանկյան տեսք: Ի՞նչ չափեր կունենա այդ բանջարանոցի պատկերը 1 : 500 մասշտաբով հատակագծում:
27. 72 սմ և 36 սմ կողմերով ուղղանկյունը հատակագծում ներկայացնում է վարսակով ցանված դաշտ: Գտե՛ք հատակագծի մասշտաբը, եթե դաշտի մեծ կողմը 360 մ է: Գտե՛ք դաշտի փոքր կողմը:
28. Օգտվելով տեղանքի հատակագծից (նկար 2)՝ գտե՛ք.
- ա) A-ից B հեռավորությունը,
 բ) A-ից ու B-ից մինչև կամուրջ եղած հեռավորությունները,
29. Քանի՞ ժամում զրոսաշրջիկները A-ից կհասնեն B (նկար 3), եթե շարժվեն.
- ա) 5 կմ/ժ, բ) 4 կմ/ժ արագությամբ:




Նկար 2



Նկար 3

30. Գծե՛ք ձեր դասարանի հատակագիծը 1:100 թվային մասշտաբով:
31. Գծե՛ք ձեր սենյակի հատակագիծը 1:50 թվային մասշտաբով: Գծե՛ք ձեր դպրոցի շենքի հատակագիծը 1:250 թվային մասշտաբով:
33. Կարելի՞ է արդյոք 50 մ երկարությամբ և 20 մ լայնությամբ ուղղանկյան տեսք ունեցող հիմքով շենքի հատակագիծը 1:50 մասշտաբով գծել տետրի էջում: Ի՞նչ մասշտաբ է հարմար ընտրել, որպեսզի հատակագիծը տեղավորվի տետրի էջում:

34. Նկար 4-ում մոծակը պատկերված է 4:1 մասշտաբով: Գտե՛ք մոծակի թևի իրական երկարությունը:
35. Գտե՛ք՝ մեծացրած է, թե փոքրացրած առարկան, եթե այն պատկերված է
- ա) 1:100, բ) 10:1, գ) 1:20, դ) 4:1 մասշտաբով:



Նկար 4

1.3. ԹՎԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՏՐՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

Թիվը տրված հարաբերությամբ մասերի բաժանելը դիտարկենք օրինակով:

Ենթադրենք պահանջվում է 60 կոնֆետը 2:3 հարաբերությամբ բաժանել երկու ընկերների միջև:

Եթե համարենք, որ 60 կոնֆետը $2+3=5$ մաս է, ապա 1 մասին կհամապատասխանի $60:5=12$ կոնֆետ: Բայց այդ ժամանակ 2 մասին կհամապատասխանի $12 \cdot 2=24$, իսկ 3 մասին՝ $12 \cdot 3=36$ կոնֆետ: Ուրեմն, առաջինը պիտի ստանա 24, իսկ երկրորդը՝ 36 կոնֆետ:

Լուծումը գրենք հետևյալ տեսքով.

$$1) \frac{60}{2+3} \cdot 2 = 24, \quad 2) \frac{60}{2+3} \cdot 3 = 36:$$

Այսպիսով՝ 60 թիվը 2:3 հարաբերությամբ բաժանելու համար կարելի է 60-ը բաժանել հարաբերության անդամների $2+3$ գումարին և արդյունքը բազմապատկել հարաբերության յուրաքանչյուր անդամով:

Այս կանոնով ցանկացած թիվ կարելի է բաժանել տրված հարաբերությամբ մասերի: Օրինակ, c թիվը բաժանենք $a:b$ հարաբերությամբ մասերի, երբ $a \neq 0$, $b \neq 0$, $c \neq 0$: Կստանանք.

$$\frac{c \cdot a}{a+b} \text{ և } \frac{c \cdot b}{a+b}:$$

Խնդիր 1: Բաժնեթղթեր գնելու համար երկու եղբայր իրենց փողերը միացրին: Մեծ եղբայրը ներդրեց 50 000, իսկ փոքրը՝ 30 000 դրամ: Որոշ ժամանակից հետո նրանք բաժնեթղթերը վաճառեցին 100 000 դրամով: Ինչպե՞ս պետք է նրանք այդ գումարը բաժանեն միմյանց միջև:

Լուծում: Բնականաբար, 100 000 դրամը պետք է բաժանել այն հարաբերությամբ, որով որ նրանք կատարել են ներդրումը, այսինքն՝ $50\,000:30\,000$ կամ $5:3$: Ուրեմն՝

$$1. \text{ Մեծ եղբորը կհասնի } \frac{100\,000}{5+3} \cdot 5 = 62\,500 \text{ (դրամ),}$$

$$2. \text{ Փոքր եղբորը կհասնի } \frac{100\,000}{5+3} \cdot 3 = 37\,500 \text{ (դրամ):}$$

Պատասխան՝ մեծ եղբորը՝ 62 500 դրամ, փոքրին՝ 37 500 դրամ:

Խնդիր 2: Երեք հոգի ցանկանում են 2 600 000 դրամ արժողությամբ մի տուն գնել, որն ունի 13 միատեսակ (հավասար արժողությամբ) սենյակ: Առաջինը ցանկանում էր ունենալ 6 սենյակ, երկրորդը՝ 4, երրորդը՝ 3: Որքա՞ն դրամ պետք է ներդնի յուրաքանչյուրը:

Լուծում: Բնական է, որ ամեն մեկը պետք է ներդնի իր ձեռք բերելիք սենյակների քանակին համապատասխան գումար:

Առաջինի ներդրած գումարը պետք է լինի 6 մաս, երկրորդինը՝ 4 մաս, երրորդինը՝ 3 մաս: Այսպիսով՝ 2 600 000 դրամը պետք է բաժանել 6:4:3 հարաբերությամբ: Ուրեմն՝

$$1. \text{ առաջինը պետք է վճարի } \frac{2\,600\,000}{6+4+3} \cdot 6 = 1\,200\,000 \text{ (դրամ),}$$

$$2. \text{ երկրորդը պետք է վճարի } \frac{2\,600\,000}{6+4+3} \cdot 4 = 800\,000 \text{ (դրամ),}$$

$$3. \text{ երրորդը պետք է վճարի } \frac{2\,600\,000}{6+4+3} \cdot 3 = 600\,000 \text{ (դրամ):}$$

Պատասխան՝ առաջինը՝ 1 200 000 դրամ, երկրորդը՝ 800 000 դրամ, երրորդը՝ 600 000 դրամ:

Նկատենք, որ երրորդի գումարը կարելի էր հաշվել հանման միջոցով:

Խնդիր 3: Առաջին մեքենագրուհին 90 էջը կարող է մեքենագրել 10, իսկ երկրորդը՝ 15 ժամում: Ինչպե՞ս նրանց մեջ բաժանել 90 էջը, որպեսզի նրանք այն մեքենագրեն կարճագույն ժամանակում:

Լուծում:

1) Քանի՞ էջ է մեքենագրում 1 ժամում առաջին մեքենագրուհին.

$$90 : 10 = 9 \text{ (էջ):}$$

2) Քանի՞ էջ է մեքենագրում 1 ժամում երկրորդ մեքենագրուհին.

$$90 : 15 = 6 \text{ (էջ):}$$

90 էջը բաժանենք $9:6=3:2$ հարաբերությամբ: Դա հնարավոր կդարձնի միաժամանակ սկսել և միաժամանակ ավարտել աշխատանքը: Այդ դեպքում, բնականաբար, աշխատանքը կավարտվի կարճագույն ժամանակում:

3) Քանի՞ էջ պետք է տալ առաջին մեքենագրուհուն.

$$\frac{90 \cdot 3}{3+2} = 54 \text{ (էջ):}$$

4) Քանի՞ էջ պետք է տալ երկրորդ մեքենագրուհուն.

$$90 - 54 = 36 \text{ (էջ):}$$

Պատասխան՝ առաջին մեքենագրուհուն՝ 54 էջ, երկրորդին՝ 36:

36. 90 000 դրամը բաժանե՛ք ա) 5:4, բ) 2:3 հարաբերությամբ:
37. Նշված թիվը բաժանե՛ք տրված հարաբերությամբ.
- | | | | |
|--------|-----------------------------|---------|-----------------------------|
| ա) 12, | 1:3; | բ) 15, | 2:3; |
| գ) 48, | 3:5; | դ) 100, | $\frac{1}{2}:\frac{1}{3}$; |
| ե) 96, | $\frac{1}{3}:\frac{1}{5}$; | զ) 90, | $\frac{1}{4}:\frac{1}{5}$; |
38. Բացատրե՛ք, թե ինչպես 24 թիվը բաժանել 1:2:3 հարաբերությամբ:
39. Առաջին մեքենագրուհին տպագրում է ժամում 10 էջ, երկրորդը՝ 8: Ինչպե՛ս բաժանել նրանց միջև 90 էջանոց ձեռագիրը, որպեսզի հնարավոր լինի միաժամանակ սկսել և միաժամանակ վերջացնել աշխատանքը:
40. *Հին խնդիր:* Ապակի պատրաստելու համար վերցնում են 10 մաս պոտաշ, 31 մաս ավազ և 2 մաս կավիճ: Ինչքա՞ն է պետք այդ նյութերից 86 փութ ապակի ստանալու համար:
41. Հեծանվորդի արագությունը 5 անգամ մեծ է հետիոտնի արագությունից: Նրանք միաժամանակ իրար ընդառաջ շարժվեցին երկու վայրից, որոնց հեռավորությունը 30 կմ էր: Հանդիպման պահին ինչքա՞ն ճանապարհ էր անցել հեծանվորդը:
42. Մոտոցիկլավարը երկու վայրի միջև եղած 60 կմ հեռավորությունն անցնում է 2, իսկ հեծանվորդը՝ 6 ժամում: Մի անգամ նրանք միաժամանակ միմյանց ընդառաջ դուրս եկան այդ վայրերից: Հանդիպման պահին քանի՞ կմ ճանապարհ էր անցել նրանցից յուրաքանչյուրը: Խնդիրը լուծե՛ք երկու եղանակով:
43. Առաջադրանքը կատարելու համար 3 օր աշխատեց 5 հյուսնից բաղկացած առաջին բրիգադը, և 4 օր էլ աշխատեց երկրորդ բրիգադը, որը բաղկացած էր 4 հյուսնից: Ամբողջ աշխատանքի համար վճարեցին 390 000 դրամ: Քանի՞ դրամ կստանա առաջին բրիգադը, եթե բոլոր հյուսներն աշխատել են միևնույն արտադրողականությամբ:
44. ա) 84 թիվը բաժանե՛ք 7 : 5 : 2 հարաբերությամբ:
 բ) 125-ը բաժանե՛ք այնպիսի 4 մասի, որ I մասը հարաբերի II-ին ինչպես 2 : 3, II-ը III-ին՝ ինչպես 3 : 5, իսկ III-ը IV-ին՝ ինչպես 5 : 6:
 գ) 125-ը բաժանե՛ք 4 այնպիսի մասի, որ I մասը հարաբերի II-ին, ինչպես 2 : 3, II-ը III-ին՝ ինչպես 4 : 5, իսկ III-ը IV-ին՝ ինչպես 6 : 11:
 դ) Մի առևտրային գործարք վարելու համար երեք վաճառական ընկերություն հիմնեց: Այդ նպատակով առաջին վաճառականը ներդրեց 1 500 000, երկրորդը՝ 1 000 000, իսկ երրորդը՝ 1 250 000

դրամ: Առևտրական գործարքի ավարտին նրանք ստացան 750 000 դրամ ընդհանուր շահույթ: Քանի՞ դրամ կստանա այդ շահույթից յուրաքանչյուր վաճառականը:

ե) Երկաթուղային շինարարությունում աշխատում էին բանվորների 3 բրիգադ՝ բաղկացած համապատասխանաբար 27, 32 և 15 բանվորներից: I բրիգադն աշխատեց 20 օր, II-ը՝ 18, իսկ III-ը՝ 16: Ամբողջ աշխատանքի համար 3 բրիգադը միասին ստացավ 4 068 000 դրամ: Քանի՞ դրամ ստացավ յուրաքանչյուր բրիգադը, եթե բոլոր բանվորները հավասարազոր աշխատողներ են:

1.4. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Երբեմն երկու հարաբերություններ կարող են հավասար լինել:

Օրինակ՝ $20 : 4$ և $\frac{1}{3} : \frac{1}{15}$ հարաբերությունները հավասար են: Գրում են՝

$$20 : 4 = \frac{1}{3} : \frac{1}{15}$$

Երկու հարաբերությունների հավասարությունն անվանում է **համեմատություն**:

$a : b = c : d$, կամ $\frac{a}{b} = \frac{c}{d}$ համեմատությունը կարդում են հետևյալ ձևով՝ «a-ի հարաբերությունը b-ին հավասար է c-ի հարաբերությանը d-ին», կամ «a-ն հարաբերում է b-ին, ինչպես c-ն հարաբերում է d-ին»:

a և d թվերն անվանում են համեմատության **եզրային անդամներ**, իսկ b և c թվերը՝ համեմատության **միջին անդամներ**.

միջին անդամներ

$$a : b = c : d$$

եզրային անդամներ

Այս անվանումները պայմանական են. բավական է համեմատությունը գրել հակառակ կարգով (աջից ձախ), և եզրային անդամները կդառնան միջին, իսկ միջին անդամները՝ եզրային:

Համեմատության հիմնական հատկությունն այն է, որ

համեմատության եզրային անդամների արտադրյալը հավասար է նրա միջին անդամների արտադրյալին

եթե $\frac{a}{b} = \frac{c}{d}$, ապա $a \cdot d = b \cdot c$

Իրոք, $\frac{a}{b} = \frac{c}{d}$ հավասարությունը բազմապատկելով $b \cdot d$ -ով, կստանաք

$$\frac{a \cdot b \cdot d}{b_1} = \frac{c \cdot b \cdot d^1}{d_1}, \text{ կամ } a \cdot d = b \cdot c:$$

Ճիշտ է նաև հակառակ պնդումը: Դիցուք a -ն, b -ն, c -ն և d -ն ոչ զրո թվեր են: Այդ դեպքում, եթե $a \cdot d = b \cdot c$ ապա $\frac{a}{b} = \frac{c}{d}$,
 Իրոք, եթե $a \cdot d = b \cdot c$ հավասարությունը բաժանենք $b \cdot d$ -ի, ապա կստանանք՝

$$\frac{a \cdot d}{b \cdot d} = \frac{b \cdot c}{b \cdot d}, \text{ կամ } \frac{a}{b} = \frac{c}{d}:$$

Նկատենք, որ $\frac{a}{b} = \frac{c}{d}$ համեմատությունից հետևում է $\frac{b}{a} = \frac{d}{c}$ համեմատությունը, որովհետև, եթե կտոորակները հավասար են, ապա նրանց հակադարձ կտոորակներն էլ են հավասար:

Եթե համեմատության չորս անդամներից մեկն անհայտ է, և պետք է այն գտնել, ապա ասում են, թե պետք է լուծել համեմատությունը:

Օրինակ: Լուծենք $\frac{30}{x} = \frac{5}{8}$ համեմատությունը:

Լուծում: Համեմատության հիմնական հատկության համաձայն՝ նրա եզրային անդամների արտադրյալը հավասար է միջին անդամների արտադրյալին՝ $x \cdot 5 = 30 \cdot 8$ որտեղից $x = \frac{30 \cdot 8}{5} = 48$:

45. Ի՞նչն են անվանում համեմատություն: Բերե՛ք համեմատության օրինակ, նշե՛ք եզրային և միջին անդամները: Ձևակերպե՛ք համեմատության հիմնական օրենքը:

46. Գրե՛ք համեմատության տեսքով.

ա) 2-ը հարաբերում 3-ին, ինչպես 10-ը հարաբերում է 15-ին,

բ) $\frac{1}{3}$ հարաբերում է 6-ին, ինչպես 1-ը հարաբերում է 18-ին,

գ) 3-ը այնքան անգամ է մեծ 2-ից, որքան անգամ 6-ը մեծ է 4-ից,

դ) 7-ը այնքան անգամ է մեծ $3\frac{1}{2}$, որքան անգամ 9-ը մեծ է $\frac{9}{2}$ -ից:

47. Կարելի՞ է համեմատություն կազմել հետևյալ հարաբերություններից.

ա) $6 : 3$ և $24 : 12$,

բ) $1 : 5$ և $17 : 85$,

գ) $2 : 5$ և $10 : 4$,

դ) $20 : 8$ և $35 : 14$:

Ճիշտ է արդյոք հավասարությունը (48–50).

48. ա) $\frac{3}{4} = \frac{15}{20}$, բ) $7:5 = \frac{77}{55}$, գ) $\frac{12}{18} = 14:21$:

49. ա) $\frac{2}{3} : \frac{4}{5} = 10:12$, բ) $\frac{3}{7} : \frac{4}{9} = 27:28$,
 գ) $\frac{4}{11} : \frac{5}{6} = 48:110$, դ) $\frac{1}{2} : \frac{2}{3} = 4:3$:

50. ա) $\frac{1}{7} : \frac{3}{4} = \frac{1}{14} : \frac{3}{8}$, բ) $\frac{2}{3} : \frac{4}{5} = \frac{1}{3} : \frac{2}{5}$,
 գ) $1\frac{1}{2} : 5 = 3:10$, դ) $1\frac{4}{5} : 2 = 10:9$:

51. Հավասարությունը փոխարինե՞ք համեմատությունով.

ա) $12 \cdot 2 = 6 \cdot 4$, բ) $15 \cdot 6 = 9 \cdot 10$,

գ) $42 \cdot 4 = 84 \cdot 2$, դ) $24 \cdot 10 = 2 \cdot 120$:

52. Տրված համեմատությունից ստացե՞ք նորը՝ փոխելով եզրային անդամների (միջին անդամների) տեղերը.

ա) $\frac{25}{13} = \frac{50}{26}$, բ) $28:25 = 84:75$,

Լուծե՛ք համեմատությունը (53–58).

53. ա) $\frac{x}{2} = \frac{3}{7}$, բ) $\frac{x}{3} = \frac{2}{5}$, գ) $\frac{x}{12} = \frac{7}{10}$, դ) $\frac{x}{16} = \frac{9}{32}$:

54. ա) $\frac{7}{8} = \frac{x}{6}$, բ) $\frac{13}{15} = \frac{x}{10}$, գ) $\frac{12}{21} = \frac{x}{14}$, դ) $\frac{48}{51} = \frac{x}{34}$:

55. ա) $\frac{15}{x} = \frac{5}{8}$, բ) $\frac{24}{x} = \frac{8}{7}$, գ) $\frac{12}{x} = \frac{4}{5}$, դ) $\frac{25}{x} = \frac{5}{7}$:

56. ա) $\frac{3}{5} = \frac{7}{x}$, բ) $\frac{8}{7} = \frac{15}{x}$, գ) $\frac{1}{7} = \frac{12}{x}$, դ) $\frac{8}{1} = \frac{3}{x}$:

57. ա) $x : \frac{1}{2} = 3:5$, բ) $x : \frac{2}{3} = 3:4$, գ) $x:5 = 7 : \frac{1}{2}$, դ) $x:6 = \frac{1}{3}:8$:

58. ա) $14:15 = 3:x$, բ) $12:29 = \frac{1}{58}:x$,

գ) $12:25 = \frac{7}{15}:x$, դ) $144:125 = 1\frac{1}{2}:x$:

59. Ապացուցե՛ք, որ եթե $\frac{a}{b} = \frac{c}{d}$, ապա.

ա) $\frac{d}{b} = \frac{c}{a}$, բ) $\frac{d}{c} = \frac{b}{a}$, գ) $\frac{a+c}{b+d} = \frac{c}{d}$, դ) $\frac{a}{b} = \frac{a+c}{b+d}$

Լուծե՛ք համեմատությունը (60, 61).

60. ա) $\frac{2 \cdot x}{3} = \frac{4}{9}$, բ) $\frac{3 \cdot x}{35} = \frac{9}{10}$, գ) $\frac{8}{15} = \frac{6 \cdot x}{9}$, դ) $\frac{12}{13} = \frac{18 \cdot x}{39}$,

61. ա) $\frac{1}{5}=2:(3 \cdot x)$, բ) $\frac{21}{25}=\frac{49}{50 \cdot x}$, գ) $\frac{8}{15}=\frac{6 \cdot x}{9}$, դ) $\frac{19}{19}=32:(38x)$:

1.5. ՈՒՂԻՂ ԵՎ ՀԱԿԱԳԱՐՁ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրենք գրքի մեկ օրինակը արժե 300 դրամ: Այդ դեպքում նույն գրքի երկու, երեք և այլ քանակով օրինակների արժեքը հեշտությամբ կարող ենք հաշվել.

Գրքերի քանակը (հատ)	1	2	3	4	5	6
Գրքերի արժեքը (դրամ)	300	600	900	1200	1500	1800

Գրքերի քանակը մի քանի անգամ մեծացնելիս նրանց գինը մեծանում է նույնքան անգամ:

Երկու մեծություն կոչվում են ուղիղ համեմատական, եթե մեծություններից մեկը մի քանի անգամ մեծացնելիս մյուսը մեծանում է նույնքան անգամ:

Դիտարկված օրինակում գրքերի արժեքը ուղիղ համեմատական է նրանց քանակին:

Բերենք մեկ այլ օրինակ:

Հավասարաչափ շարժման դեպքում ծախսած ժամանակն ու այդ ընթացքում անցած ճանապարհը ուղիղ համեմատական մեծություններ են: Եթե մեքենան 2 ժամում անցնում է 120 կմ, ապա 3 անգամ մեծ ժամանակում կանցնի 3 անգամ մեծ ճանապարհ՝ 360 կմ:

Նկատեք, որ ուղիղ համեմատական մեծությունների համապատասխան արժեքների հարաբերությունը հաստատուն է:

Ենթադրենք ունենք 1200 դրամ և ցանկանում ենք գնել այս կամ այն գրքի մի քանի օրինակ: 1200 դրամով գնված գրքերի քանակը՝ կախված մեկ գրքի գնից, կարելի է տալ հետևյալ աղյուսակով.

Գրքի մեկ օրինակի արժեքը (դրամ)	100	200	300	400	600	1200
Գրքերի քանակը (հատ)	12	6	4	3	2	1

Այս դեպքում գրքի գինը մի քանի անգամ մեծացնելիս գրքերի այն քանակը, որ կարելի է գնել 1200 դրամով, նույնքան անգամ փոքրանում է:

Երկու մեծություն անվանում են հակադարձ համեմատական, եթե մեծություններից մեկը մի քանի անգամ մեծացնելիս, մյուսը նույնքան անգամ փոքրանում է:

Դիտարկված օրինակում գնված գրքերի քանակը հակադարձ համեմատական է մեկ գրքի արժեքին:

Հավասարաչափ շարժման արագությունն ու ժամանակը ճանապարհի տվյալ տեղամասում հակադարձ համեմատական մեծություններ են: Եթե մեքենան 50 կմ/ժ արագությամբ մի ճանապարհահատված անցնում է 4 ժամում, ապա 25 կմ/ժ արագությամբ նույն ճանապարհահատվածը կանցնի 8 ժամում (քանի որ արագությունը փոքրացել է 2 անգամ, ուրեմն ժամանակը կմեծանա 2 անգամ):

Նկատեք, որ հակադարձ համեմատական մեծությունների համապատասխան արժեքների արտադրյալը հաստատուն է:

Խնդիր 1: Շարժվելով հաստատուն արագությամբ (այսինքն՝ հավասարաչափ)՝ գնացքը 2 վայրկյանում անցավ 60 մետր: Ի՞նչ ճանապարհ կանցնի գնացքը 15 վայրկյանում:

Լուծում: Հաստատուն արագության դեպքում ճանապարհն ուղիղ համեմատական է շարժման ժամանակին: Համարելով, որ գնացքը 15 վ-ում անցել է x մ՝ խնդրի պայմանը հակիրճ կգրվի այսպես.

$$\begin{array}{c} \downarrow 60 \text{ մ} - 2 \text{ վ} \downarrow \\ \downarrow x \text{ մ} - 15 \text{ վ} \downarrow \end{array}$$

Համուղղված սլաքներով ցույց է տրվում, որ մեծությունները ուղիղ համեմատական են: Ժամանակը մեծացել է $\frac{15}{2}$ անգամ, իսկ ճանապարհը՝ $\frac{x}{60}$ անգամ: Քանի որ մեծություններն ուղիղ համեմատական են, ապա $\frac{15}{2}$ և $\frac{x}{60}$ հարաբերությունները հավասար են.

$$\frac{15}{2} = \frac{x}{60}:$$

Լուծելով ստացված համեմատությունը՝ կստանանք

$$2x = 15 \cdot 60, \quad x = \frac{15 \cdot 60}{2}, \quad x = 450:$$

Պատասխան՝ 450 մ:

Խնդիր 2: 45 կմ/ժ արագություն ունեցող գնացքը մի ճանապարհահատված անցնելու համար ծախսեց 4 ժ: Ինչքա՞ն ժամանակ կծախսի ապրանքատար գնացքը նույն ճանապարհը 40 կմ/ժ արագությամբ անցնելու դեպքում:

Լուծում: Նույն ճանապարհի դեպքում արագությունը և շարժման ժամանակը հակադարձ համեմատական մեծություններ են: Համարելով, որ ապրանքատարն այդ ճանապարհն անցել է x ժամում՝ խնդրի պայմանը կարձ կգրվի՝

ա) Քանի՞ ժամում կանցնի նույն հեռավորությունը հետիոտնը, որի արագությունը 3 անգամ փոքր է հեծանվորդի արագությունից:

բ) Քանի՞ ժամում կանցնի նույն հեռավորությունը մոտոցիկլավարը, որի արագությունը 5 անգամ մեծ է հեծանվորդի արագությունից:

Գտե՛ք նշված մեծությունների համեմատականության բնույթը (ուղիղ, հակադարձ) **(68–70)**.

68. ա) Մատիտի գնի և մի քանի այդպիսի մատիտների արժեքի՝ նրանց հաստատուն քանակի դեպքում:

բ) Միատեսակ մատիտների քանակի և այդ քանակության արժեքի՝ մատիտի հաստատուն գնի դեպքում:

գ) Տրված հաստատուն գումարով գնած միատեսակ մատիտների քանակի և մատիտի գնի:

69. ա) Հավասարաչափ շարժման արագության և հաստատուն ժամանակամիջոցում անցած ճանապարհի:

բ) Ծախսած ժամանակի և անցած ճանապարհի՝ շարժման հաստատուն արագության դեպքում:

գ) Հավասարաչափ շարժման ժամանակի և արագության՝ հաստատուն ճանապարհի դեպքում:

70. ա) Միատեսակ տրակտորների քանակի և այն մակերեսի, որ նրանք կհերկեն մեկ օրում:

բ) Տրակտորի աշխատած օրերի և այն մակերեսի, որ նա կհերկի այդ ընթացքում:

գ) Միատեսակ տրակտորների քանակի և այն օրերի քանակի, որոնց ընթացքում նրանք կհերկեն տրված դաշտը:

71. ա) Դպրոցի համար գնում են միատեսակ տետրեր: Ի՞նչ կախվածություն կա գնված տետրերի քանակի և այդ քանակության արժեքի միջև:

բ) Մեկը ցանկանում է հաստատուն արագությամբ անցնել երկու քաղաքների միջև եղած հեռավորությունը: Ինչպիսի՞ն է շարժման արագության և ժամանակի միջև կախվածությունը:

72. Գնացքը հաստատուն արագությամբ 6 ժամում անցավ 480 կմ: Քանի՞ կմ էր անցել գնացքն առաջին 2 ժամում:

73. Բալի մուրաբա եփելու համար 6 կգ մրգի հետ վերցնում են 4 կգ շաքարավազ: Քանի՞ կգ շաքարավազ պետք է վերցնել 12 կգ մրգի դեպքում:

74. Բալի մուրաբա եփելու համար 6 կգ մրգի հետ վերցնում են 4 կգ շաքարավազ: Քանի՞ կգ միրգ պետք է վերցնել 12 կգ շաքարավազի դեպքում:

75. ա) 100 գ լուծույթը պարունակում է 4 գ աղ: Որքա՞ն աղ է պարունակում 300 գ այդպիսի լուծույթը:

բ) 4000 գ լուծույթը պարունակում է 80 գ աղ: Որքա՞ն աղ է պարունակվում այդ լուծույթի 200 գրամում:

76. Երկու քաղաքների հեռավորությունն առաջին գնացքն անցավ 3 ժամում՝ 80 կմ/ժ արագությամբ: Քանի՞ ժամում երկրորդ գնացքը կանցնի նույն հեռավորությունը 60 կմ/ժ արագությամբ:
77. 5 ներկարար կարող է ցանկապատը ներկել 8 օրում: Քանի՞ օրում նույն ցանկապատը կարող է ներկել. ա) 10 ներկարարը, բ) 1 ներկարարը, եթե բոլոր ներկարարները հավասարազոր աշխատողներ են:
78. 8 մ մահուդն արժե այնքան, որքան 63 մ չիթը: Քանի՞ մետր չիթ կարելի է գնել 14 մ մահուդի փոխարեն:
79. *Հին ինտիլի:* Մի շոգ օր 6 հնձվորով 8 ժամում խմեցին մի տակառիկ թան: Պետք է իմանալ, թե քանի՞ հնձվորով 3 ժամում կխմեն մեկ նույնպիսի տակառիկ թանը:
80. *Հին ինտիլի:* 8 արշին մահուդն արժե 30 ռուբլի: Ի՞նչ արժե 15 արշին մահուդը:
81. Ապրանքատար գնացքը 80 կմ/ժ արագությամբ անցավ 720 կմ: Նույն ժամանակամիջոցում ի՞նչ հեռավորություն կանցնի մարդատար գնացքը, որի արագությունը 60 կմ/ժ է:
82. ա) Բեռնատարը քաղաքների միջև հեռավորությունը 60 կմ/ժ արագությամբ անցավ 8 ժամում: Քանի՞ ժամում նույն հեռավորությունը կանցնի մարդատարը 80 կմ/ժ արագությամբ:
բ) 4 հոգանոց բրիգադը առաջադրանքը կարող է կատարել 10 օրում: Քանի՞ օրում կկատարի նույն առաջադրանքը 5 հոգանոց մի այլ բրիգադ, եթե բոլոր 9 հոգին էլ հավասարապես լավ են աշխատում:
83. Մեկ կիլոգրամ մետաղի ջարդոնը կարող է փոխարինել $2\frac{1}{2}$ կիլոգրամ երկաթով հարստացված հանքաքարին: Որքա՞ն հանքաքարի կփոխարինի 4 տոննա ջարդոնը:
84. ա) Վարորդը նկատեց, որ 60 կմ/ժ արագությամբ նա կամուրջն անցավ 40 վայրկյանում: Վերադառնալիս նա նույն կամուրջն անցավ 30 վայրկյանում: Ի՞նչ արագություն ուներ ավտոմեքենան վերադառնալիս:
բ) 60 կմ/ժ արագությամբ մեքենան թունելն անցում է 1 րոպեում: Քանի՞ րոպեում նա կանցնի այդ թունելը 50 կմ/ժ արագությամբ:
85. Երկու ատամնանիվ շղթայակցված են: Առաջինը, որն ունի 60 ատամ, 1 րոպեում 50 պտույտ է կատարում: Բոպեում քանի՞ պտույտ է կատարում երկրորդ ատամնանիվը, եթե այն ունի 40 ատամ:
86. Այն ժամանակամիջոցում, երբ խառատը պատրաստում է 6 մանրակ, նրա աշակերտը պատրաստում է ընդամենը 4 մանրակ:
ա) Քանի՞ մանրակ կպատրաստի աշակերտն այն ժամանակահատվածում, որի ընթացքում խառատը պատրաստում է 27 մանրակ:
բ) Որքա՞ն ժամանակ կծախսի աշակերտն այն առաջադրանքի համար, որը խառատը կարող է կատարել 1 ժամում:

87. Միևնույն ժամանակում հետիոտնն անցավ 6 կմ, իսկ հեծանվորդը՝ 18 կմ:
 ա) Քանի՞ կմ կանցնի հեծանվորդն այն ժամանակամիջոցում, որի ընթացքում հետիոտնն անցնում է 10 կմ:
 բ) Որքա՞ն ժամանակ կծախսի հեծանվորդն այն ճանապարհն անցնելու համար, որը հետիոտնն անցնում է 2 ժամում:
88. 6 մարդ մի աշխատանք կատարում են 18 օրում: Քանի՞ օրում կկատարեն այդ աշխատանքը 9 մարդ, եթե բոլոր 15-ը հավասարազոր աշխատողներ են:
89. ա) 6 ներկարար աշխատանքը կկատարեն 5 օրում: Նույն արտադրողականությունն ունեցող քանի՞ ներկարար ևս պետք է հրավիրել, որպեսզի բոլորով միասին այդ նույն աշխատանքը կատարեն 3 օրում:
 բ) Երկու աշխատող կարող էին առաջադրանքը կատարել 10 օրում: Քանի՞ նույնպիսի աշխատող ևս պետք է հրավիրել առաջադրանքը 4 օրում անելու համար:
90. *Լ. Փ. Մագնիցկիի «Թվաբանություն» գրքից:* Ոմն պարոն կանչեց ատաղձագործին և պատվիրեց պալատ կառուցել: Տվեց նրան 20 աշխատող և հարցրեց, թե քանի օրում նրանք կպատրաստեն իր պալատը: Ատաղձագործը պատասխանեց՝ 30 օրում: Այնինչ պարոնին անհրաժեշտ էր 5 օրում կառուցել, և նա հարցրեց ատաղձագործին.
 – Քանի՞ աշխատող է քեզ պետք ունենալ, որ նրանց հետ պալատը կառուցես 5 օրում:
 Եվ ատաղձագործը, շվարելով, հարցնում է քեզ, մաթեմատիկոս՝ քանի՞ աշխատող է պետք իրեն, որ այդ պալատը կառուցի 5 օրում:

1.6. ԳԱՂԱՓԱՐ ՏՈՎՈՍԻ ՄԱՍԻՆ

Թվի (մեծության) մեկ հարյուրերորդ մասն անվանում են այդ թվի (մեծության) մեկ տոկոս:

Գտնել թվի (մեծության) 1 տոկոսը նշանակում է գտնել այդ թվի (մեծության) $\frac{1}{100}$ մասը, ինչը կարելի է անել՝ թիվը (մեծությունը) $\frac{1}{100}$ -ով բազմապատկելով կամ հարյուրի բաժանելով:

Օրինակ՝ 300 կգ-ի 1 տոկոսը 3 կգ է, որովհետև $300 : 100 = 3$, կամ

$300 \cdot \frac{1}{100} = 3$: 10 կմ-ի 1 տոկոսը 100 մ է, որովհետև

$$10 \text{ կմ} \cdot \frac{1}{100} = 10 \text{ 000 մ} \cdot \frac{1}{100} = 100 \text{ մ:}$$

«Տոկոս» բառի փոխարեն մաթեմատիկայում օգտագործում են «%» նշանը: Այսպես, «15 տոկոս» բառերի փոխարեն գրում են «15%»:

Այսպիսով, եթե a -ն որևէ մեծություն է կամ թիվ, ապա a -ի 1% նշանակում է $a \cdot \frac{1}{100}$, a -ի 39% նշանակում է a -ի $\frac{39}{100}$ մաս և հավասար է $a \cdot \frac{39}{100}$: Ինքը՝ a -ն, իր $\frac{1}{100}$ մասերից պարունակում է ճիշտ 100-ը, ուրեմն ինքն իր 100%-ն է՝ $a = 100 \cdot \left(\frac{1}{100} \cdot a\right)$:

Առավել հաճախ դիտարկում են տոկոսի հետ կապված հետևյալ երեք տեսակ խնդիրները.

- 1) տրված թվի տրված տոկոսի որոշումը,
- 2) այն անհայտ թվի որոշումը, որի որոշակի տոկոսը հայտնի է,
- 3) որոշումը, թե տրված թվերից մեկի որ տոկոսն է հավասար մյուսին: Այսպիսի խնդիրները լուծելու համար բավական է իմանալ, որ 1% նշանակում է $\frac{1}{100}$ մաս:

Խնդիր 1: Գտե՛ք 600 մ-ի 1%-ը:

Լուծում: 600 մ-ի 1%-ը հավասար է 600 մ-ի $\frac{1}{100}$ մասին՝

$$600 \cdot \frac{1}{100} = 6 \text{ (մ):}$$

Պատասխան՝ 6 մ:

Խնդիր 2: Գտե՛ք 36 մ-ի 25%-ը:

Լուծում: 36 մ-ի 25%-ը հավասար է 36 մ-ի $\frac{25}{100}$ մասին՝

$$36 \cdot \frac{25}{100} = 36 \cdot \frac{1}{4} = \frac{36}{4} = 9 \text{ (մ):}$$

Պատասխան՝ 9 մ:

Խնդիր 3: Գտե՛ք այն թիվը, որի 1%-ը 5 է:

Լուծում: Քանի որ թվի 1%-ը 5 է, ուրեմն թիվն ինքը 100 անգամ մեծ է՝

$$5 \cdot 100 = 500:$$

Պատասխան՝ 500:

Խնդիր 4: Գտե՛ք այն թիվը, որի 30%-ը 60 է:

Լուծում: Քանի որ թվի 30%-ը 60 է, ապա 1%-ը $\frac{60}{30}$ է, իսկ ինքը՝ թիվը, 100 անգամ մեծ է՝

$$100 \cdot \frac{60}{30} = 100 \cdot 2 = 200:$$

Պատասխան՝ 200:

Խնդիր 5: Դասարանի 30 աշակերտից 12-ն ընդգրկված է տարբեր խմբակներում: Աշակերտների ո՞ր տոկոսն է ընդգրկված խմբակներում:

Լուծում: Խմբակներում ընդգրկված է դասարանի աշակերտների $\frac{12}{30}$ մասը: Խնդիրն այն է, որ $\frac{12}{30}$ -ն արտահայտվի տոկոսներով, այսինքն որոշվի, թե $\frac{12}{30}$ -ը քանի $\frac{1}{100}$ է:

$$\frac{12}{30} = \frac{12 \cdot 100}{30} \cdot \frac{1}{100} = \frac{12 \cdot 100}{30} \% = 40\%:$$

Պատասխան՝ 40%:

Որոշելու համար, թե առաջին թիվը երկրորդ թվի որ տոկոսն է, կարելի է առաջին թիվը բաժանել երկրորդին և արդյունքը բազմապատկել 100-ով:

Խնդիր 6: Գտե՛ք, թե 125 թիվը 200-ի որ տոկոսն է:

Լուծում: 125-ը բաժանենք 200-ի և արդյունքը բազմապատկենք 100-ով.

$$\frac{125}{200} \cdot 100\% = 62\frac{1}{2}\%:$$

Պատասխան՝ $62\frac{1}{2}\%$:

«1% = $\frac{1}{100}$ մաս» կարճ գրությունը նշանակում է, որ որևէ թվի (մեծության) 1%-ը այդ թվի (մեծության) $\frac{1}{100}$ մասն է: «p% = $\frac{p}{100}$ մաս» կարճ գրությունը նշանակում է, որ որևէ թվի (մեծության) p%-ն այդ թվի (մեծության) $\frac{p}{100}$ մասն է: Դրա համար էլ հաճախ ասում են, որ տոկոսը կարելի է գրել մասի տեսքով, իսկ մասը՝ տոկոսի: Օրինակ՝ գրում են.

$$13\% = \frac{13}{100} \text{ մաս}, \frac{99}{100} \text{ մաս} = 99\%:$$

91. Ի՞նչ է տոկոսը:

92. Ինչպե՞ս գտնել տրված թվի տոկոսը:

93. Տրված տոկոսները գրե՛ք մասի տեսքով.

1% , 5% , 70% , 100% , 120% , 150% , 200% , 1020% :

94. Կարդացեք նախադասությունը: Վերաձևակերպե՛ք այն՝ տոկոսը փոխարինելով կոտորակով (մասով): Կարդացե՛ք ստացված նախադասությունը:

ա) 25 թիվը 100-ի 25%-ն է:

- բ) 20 թիվը 40-ի 50%-ն է:
 գ) 200-ի 10%-ը 20 է:
 դ) 500 թիվը մեծացրին 10%-ով և ստացան 550:
- 95.** Արտահայտե՛ք տոկոսներով.
- ա) $\frac{1}{100}$, $\frac{3}{100}$, $\frac{5}{100}$, $\frac{10}{100}$, $\frac{1}{10}$, $\frac{1}{20}$,
 բ) $\frac{1}{50}$, $\frac{1}{5}$, $\frac{1}{2}$, $\frac{1}{4}$, 2, $1\frac{15}{100}$:
- 96.** XX դարի սկզբում Ռուսաստանում տնտեսության մեջ ներգրավված յուրաքանչյուր 100 մարդուց 9-ը աշխատում էր արդյունաբերությունում, 75-ը՝ գյուղատնտեսությունում, 9-ը զբաղվում էր առևտրով: Տնտեսության մեջ ներգրավված մարդկանց ո՞ր տոկոսն է ընդգրկված արդյունաբերությունում, ո՞րը՝ գյուղատնտեսությունում և որը՝ առևտրի ոլորտում:
- 97.** Գտե՛ք հետևյալ մեծության 1%-ը.
 ա) 1 մետր, բ) 1 ցենտներ, գ) 1 կիլոգրամ:
- 98.** Գտե՛ք հետևյալ մեծության 5%-ը, 17%-ը, 23%-ը.
 ա) 1 մետր, բ) 1 ցենտներ, գ) 1 կիլոգրամ:
- 99.** Գտե՛ք
 ա) 100-ի 1%-ը, բ) 300-ի 1%-ը, գ) 40-ի 5%-ը,
 դ) 200-ի 7%-ը, ե) 15-ի 20%-ը, զ) 48-ի 25%-ը,
 է) 49-ի 100%-ը, ը) 250-ի 120%-ը, թ) 300-ի 200%-ը:
- 100.** Ծառայողն իր ձեռնարկությունից գնեց 50 000 դրամի բաժնետոմս և ստացավ 20% շահույթ: Քանի՞ դրամ շահույթ նա ստացավ:
- 101.** Թվի ո՞ր մասն է նրա.
 ա) 1%-ը, բ) 5%-ը, գ) 10%-ը, դ) 20%-ը,
 է) 25%-ը, զ) 50%-ը, ե) 75%-ը, ը) 100%-ը:
- 102.** Հաշվե՛ք.
 ա) 400-ի 50%-ը, բ) 20-ի 10%-ը,
 գ) 16-ի 25%-ը, դ) 8-ի 75%-ը:
- 103.** Շաքարի ձակնդեղից ստանում են շաքար, որի զանգվածը ձակնդեղի զանգվածի 18%-ն է: Որքա՞ն շաքար կստացվի
 ա) 40 տ, բ) 30 տ, գ) 500 տ ձակնդեղի մշակումից:
- 104.** Երկաթահանքը պարունակում է 70% մաքուր երկաթ: Քանի՞ տոննա մաքուր երկաթ է պարունակում 13 տ երկաթահանքը:
- 105.** Ձուլվածքը պարունակում է 62% անագ և 38% կապար: Քանի՞ գրամ անագ և քանի՞ գրամ կապար է պարունակում 400 գ ձուլվածքը:
- 106.** Հայրիկս իր 20 000 դրամ մրցանակը ծախսել է մայրիկիս և մեզ՝ երեխաներիս, նվերներ գնելու համար: Մայրիկիս նվերի համար

նա ծախսել է այդ գումարի 40%-ը, իսկ իմ և քրոջս նվերների համար՝ 30-ական տոկոս: Ամբողջ գումարն է ծախսել արդյոք հայրը: Չկա՞ն արդյոք խնդրում ավելորդ տվյալներ:

107. ա) Դասարանի աշակերտների 25%-ը մրցակցում էր բարձրացատկի մարզաձևում, ևս 75%-ը՝ հեռացատկի: Դասարանի բոլոր՝ աշակերտներն են արդյոք մասնակցում մրցումներում:

բ) Ջրոսաշրջիկները նախատեսած երթուղու 80%-ն անցան գնացքով, իսկ 15%-ը՝ ավտոբուսով: Արդյոք ամբողջ երթուղին անցան:

գ) Մարինեն իր ունեցած գումարի 70%-ը ծախսեց գրքեր, իսկ 30%-ը՝ տետրեր գնելու համար: Ամբողջ գումարը ծախսեց Մարինեն:

108. Ուսուցչուհին հայտարարեց. «Ստուգողական աշխատանքը ձիշտ է կատարել մեր դասարանի աշակերտների 100%-ը»: Ինչպե՞ս դա հասկանալ:

109. ա) Գումարի 80%-ը ծախսել են: Գումարի քանի՞ տոկոսն է մնացել:

բ) Տղամարդիկ գործարանի բոլոր աշխատակիցների 75%-ն են: Աշխատակիցների ո՞ր տոկոսն են կանայք:

գ) Աղջիկները դասարանի 40%-ն են: Դասարանի ո՞ր տոկոսն են տղաները:

110. ա) Գտե՛ք 36 թվի 15%-ը:

բ) Գտե՛ք այն թիվը, որի 15%-ը 36 է:

111. Գտե՛ք այն թիվը, որի.

ա) 1%-ը 3 է, բ) 10%-ը 40 է,

գ) 15%-ը 30 է, դ) 50%-ը 250 է:

112. Կոտորակն արտահայտե՛ք տոկոսով.

ա) $\frac{3}{5} = \frac{3 \cdot 20}{5 \cdot 20} = \frac{60}{100} = 60\%$,

բ) $\frac{5}{3} = \frac{5}{3} \cdot 100\% = \frac{500}{3}\% = 166 \frac{2}{3}\%$,

գ) $\frac{4}{5}$, դ) $\frac{5}{4}$, ե) $\frac{3}{4}$, զ) $\frac{13}{25}$, է) $\frac{17}{20}$, ը) $\frac{4}{3}$:

113. ա) Խանութը ստացավ էլեկտրական լամպեր: Նրանց մեջ հայտնաբերվեց 16 ջարդված լամպ, որն ամբողջ թվաքանակի 2%-ն էր: Քանի՞ լամպ էր ստացել խանութը:

բ) Ցանել էին սիսեռի սերմեր: Նրանցից 270-ը ծլեցին: Դա ցանած սերմերի ամբողջ քանակի 90%-ն է: Քանի՞ սերմ էին ցանել:

114. 16 կգ թարմ տանձից ստացել են 4 կգ չիր: Թարմ տանձի զանգվածի ո՞ր մասն է տանձի չրի զանգվածը: Այդ մասն արտահայտե՛ք տոկոսով: Ջանգվածի ո՞ր տոկոսն է կորչում չորացման ընթացքում:

115. 50-ի ո՞ր տոկոսն է 40: 40-ի ո՞ր տոկոսն է 50:

116. ա) Ցանել են 50 սերմ: Նրանցից 47-ը ծլել են: Գտե՛ք սերմերի ծլունակության տոկոսը:

$$\frac{35}{x} = \frac{100}{8}, \quad x = \frac{35 \cdot 8}{100} = \frac{14}{5} = 2\frac{4}{5}:$$

Պատասխան՝ $2\frac{4}{5}$:

Օրինակ 2: Գտնենք այն թիվը, որի 12%-ը 3 է:

Լուծում: Ենթադրենք x -ը որոնելի թիվն է, այդ դեպքում.

$$\begin{array}{c} \downarrow \quad x - 100\% \quad \downarrow \\ \downarrow \quad 3 - 12\% \quad \downarrow \end{array}$$

$$\frac{x}{3} = \frac{100}{12}, \quad x = \frac{3 \cdot 100}{12} = 25:$$

Պատասխան՝ 25:

Օրինակ 3. Գտնենք թե 8-ը 40-ի որ տոկոսն է:

Լուծում: Ենթադրենք 8-ը 40-ի $x\%$ -ն է, այդ դեպքում.

$$\begin{array}{c} \downarrow \quad 40 - 100\% \quad \downarrow \\ \downarrow \quad 8 - x\% \quad \downarrow \end{array}$$

$$\frac{40}{8} = \frac{100}{x}, \quad x = \frac{8 \cdot 100}{40} = 20:$$

Պատասխան՝ 20%:

120. ա) Խանութ առաքեցին 2500 կգ լոլիկ: Առաջին օրը վաճառեցին այդ ամբողջ ավարանքի 30%-ը: Քանի՞ կգ լոլիկ մնաց վաճառելու:
բ) Դպրոցում 400 աշակերտ է սովորում, որի 52%-ը աղջիկներն են: Գտե՛ք տղաների քանակը:
121. Տանձի չրի զանգվածը թարմ տանձի զանգվածի 20%-ն է: Քանի՞ կգ չիր կստացվի 100 կգ, 350 կգ, 25 կգ թարմ տանձից: Քանի՞ տոկոս զանգված է կորչում թարմ տանձի չորացման ընթացքում:
122. Խաղողը չորացնելիս կորցնում է իր զանգվածի 70%-ը: Ինչքա՞ն չամիչ (չորացրած խաղող) կստացվի 100 կգ, 250 կգ, 80 կգ թարմ խաղողից:
123. Համաձուլվածքի 40%-ը անագ է, 2%-ը՝ ոսկի, իսկ մնացած մասը՝ կապար: Քանի՞ գրամ անագ, ոսկի և կապար կա այդ համաձուլվածքի 300 գ-ում:
124. Խառատը մինչև ընդմիջում տաշեց 24 մանրակ, ինչը հերթափոխային պլանի 60%-ն է: Քանի՞ մանրակ է տաշում խառատը մեկ հերթափոխում:
125. Զբոսաշրջիկները անցան երթուղու 75%-ը, և նրանց մնում էր անցնել ևս 5 կմ: Ինչքա՞ն է երթուղու երկարությունը:

126. Ո՞րն է մեծ.
ա) 40-ի 30%-ը, թե՞ 30-ի 40%-ը,
բ) 60-ի 80%-ը, թե՞ 70-ի 60%-ը:
127. Առանց հաշվարկների որոշե՛ք՝ որն է մեծ.
ա) 34-ի 12%-ը, թե՞ 34-ի 13%-ը,
բ) 49-ի 12%-ը, թե՞ 50-ի 12%-ը:
128. Ապրանքն արժեր 5000 դրամ: Նրա գինը բարձրացավ 20%-ով: Քանի՞ դրամով բարձրացավ գինը:
129. Գազիկն ունի 80 փոստանիշ, Դավիթը՝ Գազիկից 20%-ով ավելի, իսկ Գեղամը Գազիկից 25%-ով պակաս: Քանի՞ փոստանիշ ունի Դավիթը և քանի՞ Գեղամը:
130. Մեծացրե՛ք.
ա) 60-ը 10%-ով, բ) 80-ը 25%-ով,
գ) 40-ը 50%-ով, դ) 425-ը 4%-ով:
131. Փոքրացրե՛ք.
ա) 60-ը 10%-ով, բ) 80-ը 25%-ով,
գ) 90-ը 50%-ով, դ) 125-ը 20%-ով:
132. ա) 80 թիվը մեծացրե՛ք. 25%-ով, 30%-ով, 65%-ով, 80%-ով:
բ) 60 թիվը փոքրացրե՛ք. 15%-ով, 20%-ով, 25%-ով, 75%-ով:
133. Միսը եփելիս կորցնում է իր զանգվածի 40%-ը:
ա) Ինչքա՞ն եփած միս կստացվի 6 կգ թարմ մսից:
բ) Ինչքա՞ն թարմ միս պետք է եփել, որ ստացվի 6 կգ եփած միս:
134. Ակցիայի արդյունքում ապրանքների գներն իջել են 20%-ով: Ինչքա՞ն պետք է վճարել վերնաշապիկի համար, եթե նրա սկզբնական գինը 8000 դրամ էր:
135. Ծրագրավորողի աշխատավարձը բարձրացել է 15%-ով: Ինչքա՞ն է նոր աշխատավարձը, եթե մինչև բարձրացումը 300 000 դրամ էր:
136. 4 տաբատը 8%-ով էժան է մեկ վերակուից: Քանի՞ տոկոսով է թանկ 5 տաբատը մեկ վերակուից:
137. 3 կգ խնձորը թանկ է 1 կգ անանասից 11%-ով: Քանի տոկոսով է 4 կգ խնձորը թանկ 1 կգ անանասից:
138. Գրքի էջերի քանակի 1%-ը 4 է: Դավիթը կարդացել է այդ գրքի 30%-ը: Քանի՞ էջ է մնացել կարդալու Դավիթին:
139. Մեկը իր ունեցած գումարից 4000 դրամ նվիրաբերց մանուկների ֆոնդին: Ինչքա՞ն գումար ուներ այդ մարդը, եթե նվիրել է իր ունեցածի 2%-ը:
140. Գտեք այն թիվը, որի 25%-ը հավասար է 640-ի 45%-ին:
141. Նորածնի քաշը 3 կգ էր: Մեկ ամիս հետո նա կշռում էր 4 կգ 200գ: Քանի՞ տոկոսով է ավելացել նրա քաշը:
142. Բարձրագույն կրթություն ունեցողների միջին աշխատավարձը 225000 դրամ է, չունեցողներինը՝ 150 000 դրամ: Քանի՞ տոկոսով


է բարձրագույն կրթություն ունեցողների միջին աշխատավարձը ավելի բարձրագույն կրթություն չունեցողների միջին աշխատավարձից:

- 143. Տունը վերանորոգելու համար գնել են 360 000 դրամի շինանյութ, որը վերանորոգման գումարի 30 տոկոսն է: Ինչքա՞ն գումար է ծախսվել տան վերանորոգման համար:


1.8. ՍՅՈՒՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԴԻԱԳՐԱՄՆԵՐ

Հաճախ համեմատականություններ ուսումնասիրելիս օգտագործում են **սյունակային դիագրամներ**: Իրանք հարմար են չափումների, սոցիալական հարցումների և այլ ճանապարհներով ստացված տվյալների համեմատության միջոցով ցույց տալու, թե ժամանակից կախված ինչպես են փոփոխվում մեզ հետաքրքրող երևույթները:

Օրինակ: Ստորև բերված սյունակային դիագրամում ցույց է տրված, թե գյուղի այգիներում քանի տոննա միրգ է հավաքվել ամառվա ամիսների ընթացքում: Ելնելով դիագրամի տվյալներից՝ կարող ենք հեշտությամբ գտնել մեզ հետաքրքրող շատ հարցերի պատասխանները, ինչպես, օրինակ, քանի՞ տոննա միրգ է հավաքվել օգոստոսին, որքա՞ն բալ է հավաքվել ողջ ամառվա ընթացքում, ընդամենը որքա՞ն միրգ է հավաքվել ամռանը, ո՞ր ամսին է ամենաշատ միրգը հավաքվել և այլն:




Ամբողջի և նրա մասերի հարաբերություններն ակնառու են դառնում, երբ օգտվում են շրջանային դիագրամներից: Օրինակ, եթե հայտնի է, որ 5-րդ դասարանում սովորում են 18 աղջիկ և 18 տղա, ապա դասարանի բոլոր աշակերտներին կարելի է համապատասխանեցնել ամբողջ շրջանը, իսկ տղաներին և աղջիկներին՝ այդ շրջանի կեսերը (նկար 5): Ամեն մի տղայի և ամեն աղջկա դիագրամում կհամապատասխանի՝ շրջանի կենտրոնը որպես գագաթ ունեցող անկյուն (կենտրոնական անկյուն), որի մեծությունը





Նկար 5

կլիների $180 : 18 = 10^\circ$, իսկ դասարանի բոլոր աշակերտներին՝ 360° -ի լրիվ անկյունը (նկար 6):



Նկար 6



Նկար 7

Շրջանային դիագրամի միջոցով ցույց տանք մաթեմատիկայի ստուգողական աշխատանքի արդյունքները 6-րդ դասարանում.

Դասարանի 30 աշակերտներից «5» ստացել է 4 հոգի, «4»՝ 14 հոգի, «3»՝ 12 հոգի: Բոլոր 30 աշակերտներին համապատասխանեցնելով 360° -ի մեծությամբ լրիվ անկյունը՝ ամեն մի աշակերտի համար կստանանք $360^\circ : 30 = 12^\circ$ -ի կենտրոնական անկյուն, «5» ստացողներին կհամապատասխանի $4 \cdot 12^\circ = 48^\circ$ -ի կենտրոնական անկյուն, «4» ստացողներին՝ $14 \cdot 12^\circ = 168^\circ$ -ի, «3» ստացողներին՝ $12 \cdot 12^\circ = 144^\circ$ -ի կենտրոնական անկյուն (նկար 7):

Երբեմն շրջանային դիագրամում նշում են ոչ թե մեծությունների արժեքները, այլ թե դրանք ամբողջի որ տոկոսն են: Օրինակ՝ նկար 8-ի դիագրամում ներկայացված է Ն քաղաքի բնակիչների մասնակցությունը քաղաքապետի ընտրություններին. ընտրելու իրավունք ունեցողների 80%-ը մասնակցել է ընտրություններին, 20%-ը՝ ոչ: Դիագրամը կազմելու համար հարկավոր է որոշել ընտրողների 20%-ին համապատասխանող կենտրոնական անկյունը.

$$360^\circ : 100 \cdot 20 = 72^\circ:$$

144. Աղյուսակում ներկայացված են 2016 թվականի մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի արդյունքները:

Երկիր/մեդալ	Ոսկի	Արծաթ	Բրոնզ
Հայաստան	-	1	4
Ադրբեջան	-	-	1
Վրաստան	-	-	1
Իրան	-	3	3
Թուրքիա	-	2	4
Ռուսաստան	4	1	1


Կազմեք այդ աղյուսակին համապատասխանող սյունակային դիագրամ:

145. Սյունակային դիագրամում (նկար 9) ներկայացված է լայնաշերտ ինտերնետ հասանելիությամբ բաժանորդների քանակը 2008-2015 թվականներին: Օգտվելով այդ դիագրամից՝ պատասխանեք հետևյալ հարցերին.


ա) Քանի՞ բաժանորդ էր օգտվում լայնաշերտ ինտերնետից 2010 թվականին:

բ) Քանի՞ բաժանորդով է աճել լայնաշերտ ինտերնետից օգտվողների քանակը 2008-2011 թվականների ընթացքում:

գ) Նախորդ տարվա հետ համեմատած ո՞ր թվականին է եղել լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների ամենամեծ աճը:



Նկար 8




Նկար 9

146. Սյունակային դիագրամում (նկար 10) ներկայացված է 2018-2019 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլերի մասնակիցների քանակը ըստ մարզերի: Օգտվելով այդ դիագրամից՝ պատասխանեք հետևյալ հարցերին.

ա) Քիմիայի օլիմպիադայի Լոռու մարզի մասնակիցները ինչքանով են ավելի ֆիզիկայի օլիմպիադայի նույն մարզի մասնակիցներից:


բ) Քանի՞ աշակերտ է մասնակցել Շիրակի մարզից մաթեմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի օլիմպիադաներին միասին:

գ) Ամենաշատը ո՞ր մարզից և քանի՞ հոգի են մասնակցել ֆիզիկայի օլիմպիադայի հանրապետական փուլին:



Նկար 10

147. Քանի՞ աստիճան է փոփոխված անկյունը: Քանի՞ աստիճան է լրիվ անկյունը:



148. Օգտվելով նկար 11-ի դիագրամից՝ ասացե՛ք, քանի՞ մեկ, քանի՞ երկու և քանի՞ երեքսեյականոց բնակարան կա շենքում:

149. Նկար 12-ի շրջանային դիագրամում տրված է N քաղաքի բնակչության տոկոսային կազմությունը: Քանի՞ տղամարդ, քանի՞ կին և քանի՞ երեխա է ապրում այդ քաղաքում, եթե ընդամենը այնտեղ ապրում է 48 հազար մարդ:

150. Նկար 13-ի շրջանային դիագրամը ցույց է տալիս մետաղների տոկոսային պարունակությունը մի ձուլվածքում: Քանի՞ գրամ անագ, քանի՞ գրամ կապար և քանի՞ գրամ այլ մետաղներ է պարունակում 200 գ այդպիսի ձուլվածքը:

151. Կառուցե՛ք 30-հոգանոց դասարանի հայոց լեզվից ստուգողական աշխատանքի արդյունքների շրջանային դիագրամ, եթե 3 հոգի ստացել են «5», 12-ը՝ «4», 15-ը՝ «3»:

152. Կառուցե՛ք «Իմ օրվա ռեժիմը» շրջանային դիագրամը:

1.9. ՏՐՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵԼՔԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՀԱՇՎՈՒՄ

Դիտարկենք խնդիրներ, որոնցում անհրաժեշտ է լինում հատ–հատ դիտարկել բոլոր հնարավոր տարբերակները կամ հաշվել նրանց քանակը:

Խնդիր 1: Գրե՛ք բոլոր եռանիշ թվերը, որոնց գրելաձևում օգտագործվում են 1, 2, 3 թվանշաններն առանց կրկնության:

Լուծում: Խնդրին բավարարող բոլոր թվերը գրենք աճման կարգով.
123, 132, 213, 231, 312, 321:

Խնդիր 2: Քանի՞ երկնիշ թիվ կարելի է գրել՝ օգտագործելով միայն 1, 2, 3 թվանշանները:

Լուծում: Ի տարբերություն նախորդ խնդրի՝ այստեղ կարելի է թվանշանները կրկնել: Հարցին պատասխանելու համար կարելի է բոլոր երկնիշ թվերի ցուցակից դուրս գրել խնդրի պայմանների բավարարողները և հաշվել դրանց քանակը:


Սակայն խնդիրը կարելի է լուծել նաև հետևյալ դատողություններով. երկնիշ թվի առաջին թվանշանը կարող է լինել երեք թվանշաններից մեկը՝ 1, 2 կամ 3:

Հնարավոր երեք դեպքից յուրաքանչյուրում երկրորդ թվանշանը կարող է լինել 1, 2, 3 թվանշաններից որևէ մեկը: Ուրեմն, առաջին թվանշանի երեք դեպքից ամեն մեկը ունի երեք ելք (տարբերակ, շարունակություն) երկրորդ թվանշանի համար: Այսպիսով՝ 1, 2, 3 թվանշաններով կարելի է գրել $3 \cdot 3 = 9$ երկնիշ թիվ:

Պարասխան՝ 9:

Նման եղանակով համոզվենք, որ խնդիր 1-ում կարելի է կազմել միայն 6 թիվ: Հիշենք որ պետք է գրել եռանիշ թվեր և դրանցից յուրաքանչյուրում արգելվում է կրկնել թվանշանները: Պարզ է, որ եռանիշ թվի առաջին թվանշանը կարող է լինել 1, 2, 3 թվանշաններից ցանկացածը (3 հնարավորություն): Այդ 3 դեպքերից ամեն մեկում երկրորդ թվանշանը կարող է լինել մյուս երկու թվանշաններից որևէ մեկը (2 հնարավորություն): Այդ $3 \cdot 2 = 6$ դեպքերից ամեն մեկում երրորդ թվանշանի համար մնում է 1 հնարավորություն՝ չօգտագործված վերջին թվանշանը: Ուրեմն, հնարավոր է գրել միայն 6 եռանիշ թիվ (տե՛ս նկար 14):

Խնդիր 3: Շրջանագծի վրա նշված են իրարից տարբեր 5 կետ՝ A, B, C, D, E: Դրանցից ամեն մեկը



միացրած է մնացածներից յուրաքանչյուրի հետ: Քանի՞ հատված է ստացվել:


Լուծում: Նկար 15-ում հատվածներն ուղղակի կարելի է հաշվել՝ 10-ն են: Բայց կետերի մեծ քանակության դեպքում այդ եղանակով հաշվելը դժվար կլինի:

Խնդիրը լուծենք այլ եղանակով, որը հարմար է նաև շատ կետերի դեպքում: A կետից դուրս է գալիս 4 հատված՝ AB, AC, AD, AE: B կետից նույնպես 4 հատված է դուրս գալիս՝ BA, BC, BD, BE:

Եվ այդպես, յուրաքանչյուր կետից դուրս է գալիս 4 հատված: Բայց եթե բազմապատկենք կետերի քանակը նրանցից դուրս եկող հատվածների քանակով՝ $4 \cdot 5$, ապա կստանանք իրական քանակից 2 անգամ շատ, քանի որ այդ քանակի մեջ յուրաքանչյուր հատված հաշվված է 2 անգամ (օրինակ AB-ն հաշվված է և՛ A կետից դուրս եկածների, և՛ B-ից դուրս եկածների մեջ): Ուրեմն, հատվածները $\frac{4 \cdot 5}{2} = 10$ հատ են:

Լուծման ուրիշ մի տարբերակ էլ կարելի է առաջարկել: A կետից դուրս է գալիս 4 հատված՝ AB, AC, AD, AE: B կետից նույնպես 4 հատված է դուրս գալիս՝ BA, BC, BD, BE, բայց դրանցից BA-ն նույն AB-ն է: Ուրեմն, նոր հատվածները 3 են: C-ից դուրս եկող 4 հատվածներից միայն 2-ն են նոր, մյուս երկուսը արդեն կան A-ից ու B-ից դուրս եկողների մեջ: Վերջապես, D-ից դուրս եկող 4 հատվածներից միայն 1-ն է նոր: Ուրեմն, հատվածների քանակը $4+3+2+1 = 10$ է:


Պատասխան՝ 10 հատված:




Նկար 15

153. Գրե՛ք բոլոր երկնիշ թվերը, որոնք գրվում են.
 ա) 1, 3, 9 թվանշաններով, առանց նիշերը կրկնելու,
 բ) 1, 3, 9 թվանշաններով, եթե նիշերը կարելի է կրկնել,
 գ) 2, 4, 6 թվանշաններով, առանց նիշերը կրկնելու,
 դ) 2, 4, 6 թվանշաններով, եթե նիշերը կարելի է կրկնել:
154. Գրե՛ք բոլոր երկնիշ թվերը, որոնք գրվում են 0, 1, 5 թվանշաններով, եթե.
 ա) նիշերը չի կարելի կրկնել, բ) նիշերը կարելի է կրկնել:
155. Քանի՞ երկնիշ թիվ կարելի է գրել 9, 8, 7 թվանշաններով, եթե.
 ա) նիշերը չի կարելի կրկնել, բ) նիշերը կարելի է կրկնել:


- 156.** Քանի՞ երկնիշ թիվ կարելի է գրել 0, 2, 4, 6 թվանշաններով, եթե.
 ա) նիշերը չի կարելի կրկնել, բ) նիշերը կարելի է կրկնել:
- 157.** Չորս ընկերուհի կինոյի չորս տոմս գնեց: Քանի՞ տարբեր եղանակներով կարող են նրանք զբաղեցնել իրենց տեղերը կինոսրահում:
- 158.** Քանի՞ երկնիշ, քանի՞ եռանիշ, քանի՞ քառանիշ թիվ կարելի է գրել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով, եթե նիշերը չի կարելի կրկնել:
- 159.** Քանի՞ երկնիշ, քանի՞ եռանիշ, քանի՞ քառանիշ թիվ կարելի է գրել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով, եթե նիշերը կարելի է կրկնել:
- 160.** ա) Բոլոր քառանիշ թվերը, որ կարելի է կազմել 1, 2, 3, 4 թվանշաններով, չկրկնելով նիշերը՝ համարակալել են աճման կարգով: Ո՞ր համարն է 4312 թիվը:
 բ) Բոլոր հնգանիշ թվերը, որ կարելի է կազմել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով, չկրկնելով նիշերը՝ համարակալել են աճման կարգով: Ո՞ր համարն է 54312 թիվը:
 գ) Բոլոր հնգանիշ թվերը, որ կարելի է կազմել 1, 2, 3, 4, 5 թվանշաններով, չկրկնելով նիշերը՝ դուրս են գրել աճման կարգով: Քանի՞ թիվ կա այդ ցուցակում: Ո՞րերորդը կլինի այդ ցուցակում 54321 թիվը:
- 161.** Կլոր սեղանի շուրջը դրված է 4 աթոռ: Քանի՞ եղանակով կարելի է նստեցնել այդ աթոռներին. ա) չորս երեխայի, բ) երեք երեխայի, գ) երկու երեխայի:
- 162.** Մի տղայի և երկու աղջկա պետք է նստեցնել կլոր սեղանի շուրջը դրված չորս աթոռներին այնպես, որպեսզի աղջիկները չհայտնվեն կողք կողքի: Քանի՞ եղանակով դա կարելի է անել:
- 163.** Երկու տղայի և երկու աղջկա պետք է նստեցնել կլոր սեղանի շուրջը դրված չորս աթոռներին այնպես, որ աղջիկները չհայտնվեն կողք կողքի: Քանի՞ եղանակով դա կարելի է անել:
- 164.** Նետեցին երկու զառ: Առաջին զառի արդյունքը 3 էր, երկրորդինը՝ 6 (նկար 16): Քանի՞ տարբեր հնարավորություն կա, որոնցում զառերի արդյունքների գումարը 9 է: Գտեք նաև երկու զառը նետելիս արդյունքների գումարը 11, 12 ստացվելու տարբեր հնարավորությունների քանակները:



- 165.** ա) Շրջանագծի վրա նշել են 6 կետ (նկար 17): Քանի՞ հատված կստացվի, եթե ամեն կետ միացվի մնացածներից յուրաքանչյուրի հետ:
 բ) Հանդիպեցին 6 ընկեր (նկար 18): Բոլորը ձեռքով բարևեցին միմյանց: Քանի՞ ձեռքսեղմում կատարվեց:



Նկար 17



Նկար 18

166. Ութ ընկեր որոշեցին շախմատի մրցում անցկացնել այնպես, որ ամեն մեկը մեկ պարտիա խաղա մնացածներից յուրաքանչյուրի հետ: Քանի՞ պարտիա կխաղացվի:

1.10. ՊԵՏԱՀՈՒՅԹԻ ՀՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առօրյա խոսակցությունների և գրույցների ժամանակ հաճախ ենք լսում. «դա միանգամայն հավանական է», կամ «դա քիչ է հավանական», կամ «դա անհավանական է»: Այս և այլ արտահայտություններում հանդիպում է «հավանական» բառը: Ի՞նչ է նշանակում հավանականություն:

Օրինակ 1: Ենթադրենք սեղանին մետաղադրամ են նետում: Արդյունքում հանդես կգա նկար 19-ում ցույց տրված պատահույթներից մեկնումեկը:

Պետք է ենթադրել, որ մետաղադրամը կատարյալ է՝ ունի միանգամայն կանոնական ձև, պատրաստված է համասեռ մետաղից: Այդ դեպքում Թ (թիվ) և Զ (զինանշան) պատահույթները հավասարահնարավոր կլինեն, և նրանցից մեկը անպայմանորեն կկայանա: Ընդունված է ասել, որ Թ պատահույթին մեկ ելք է նպաստում, Զ պատահույթին նույնպես մեկ ելք է նպաստում, իսկ հնարավոր ելքերը երկուսն են: Թ պատահույթի հավանականությունը որոշվում է որպես Թ պատահույթին նպաստող ելքերի քանակի հարաբերություն բոլոր հավասարահնարավոր ելքերի քանակին, որոնցից մեկն անպայմանորեն կկայանա:

Այսպիսով՝ Թ պատահույթի հավանականությունը $\frac{1}{2}$ է:

Ակնհայտ է, որ օրինակ 1-ում Զ պատահույթի հավանականությունը նույնպես $\frac{1}{2}$ է:



Թ պատահույթ
«հանդես է եկել թիվ»



Զ պատահույթ
«հանդես է եկել զինանշան»

Նկար 19

«Մետաղադրամը կանգնել է կողքի վրա» դեպքը համարվում է անհնարին և հաշվի չի առնվում:

Ընդհանրապես






A պատահույթին նպաստող ելքերի քանակի հարաբերությունը բոլոր հավասարահնարավոր ելքերի քանակին, որոնցից մեկն անպայմանորեն կկայանա, անվանում են A պատահույթի հավանականություն:

Օրինակ 2: Ենթադրենք սեղանին գառ են նետում (որն ունի խորանարդի ձև): Համարենք, որ գառը կատարյալ է, այսինքն՝ մեծ թվով նետումների արդյունքում ոչ մի թիվ մյուսներից հաճախ չի հանդես գալիս: Մեկ նետման արդյունքում հնարավոր է 6 ելք՝ 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 6-ի հանդես գալը: Այդ ելքերը հավասարահնարավոր են, և յուրաքանչյուր նետման արդյունքում նրանցից մեկը անպայմանորեն կկայանա:






Մեկ նետման արդյունքում զույգ թիվ ստացվելու պատահույթը նշանակենք C, իսկ 3-ի բազմապատիկ հանդես գալու պատահույթը՝ B: C պատահույթին նպաստում էին երեք ելք՝ 2-ը, 4-ը և 6-ը, B պատահույթին՝ երկու ելք՝ 3-ը և 6-ը: C պատահույթի հավանականությունը հավասար է նրան նպաստող ելքերի քանակի (3-ի) հարաբերությանը բոլոր հավասարահնարավոր ելքերի քանակին (6-ին): Այսպիսով՝ C պատահույթի հավանականությունը $\frac{3}{6} = \frac{1}{2}$ է: Նման ձևով կստանանք, որ B պատահույթի հավանականությունը $\frac{2}{6} = \frac{1}{3}$ է:





Օրինակ 3: Երկու ընկեր մեկ զույգ գառ են նետում: Նետման արդյունքում ստացված թվերի գումարը 8 լինելու դեպքում առաջին ընկերը ստանում է 1 բալ, 9-ը լինելու դեպքում՝ 1 բալ տրվում է երկրորդին: Խաղացողների՝ բալ ստանալու շանսերը հավասար են:

Լուծում: Դիտարկենք գումարում 8 տվող բոլոր հնարավոր ելքերը և գումարում 9 տվող բոլոր հնարավոր ելքերը:





A պարահույք 1)  2)  3)  4)  5) 

«գումարը հավասար է 8-ի»

B պարահույք 1)  2)  3)  4) 

«գումարը հավասար է 9-ի»

Նկար 20

Նկար 20-ի A և B պատահույթներից յուրաքանչյուրի համար հաշվենք նպաստող ելքերի քանակը: A պատահույթն ունի 5 նպաստող ելք, B-ն՝ 4: A-ի և B-ի հավանականությունները հաշվելու համար մնում է գտնել զույգ զառի նետման բոլոր հավասարահնարավոր ելքերի քանակը, որոնցից մեկն անպայմանորեն կկայանա: Առաջին զառի վրա հանդես կգա 6 թվերից մեկը: Դրանցից ամեն մեկի դեպքում երկրորդ զառի վրա հանդես կգա 6 թվերից մեկը, և բոլոր ելքերի քանակը կլինի $6 \cdot 6 = 36$:

A պատահույթի հավանականությունը կլինի $\frac{5}{36}$, B-ինը՝ $\frac{4}{36}$: Քանի որ $\frac{5}{36} > \frac{4}{36}$, ուրեմն A-ի և B-ի հավանականությունները հավասար չեն, և խաղացողների՝ բալ վաստակելու շանսերը հավասար չեն:

167. Նետում են զառ: Հաշվե՛ք պատահույթի հավանականությունը.

- ա) «հանդես կգա 5 թիվը»,
- բ) «հանդես կգա զույգ թիվ»,
- գ) «հանդես կգա կենտ թիվ»,
- դ) «հանդես կգա 3-ի բաժանվող թիվ»:

168. *Դպրատների խնդիրներից:* ա) Մետաղադրամը նետել են երկու անգամ: Ինչի՞ է հավասար հավանականությունը, որ գոնե մեկ անգամ կընկնի (հանդես կգա) գինանշան:


բ) Մետաղադրամը նետել են երեք անգամ: Որքա՞ն է հավանականությունը, որ առնվազն մեկ անգամ թիվ կընկնի:

169. 2 սև և 5 սպիտակ գնդակ պարունակող արկղից պատահականորեն հանվել է 1 գնդակ: Ինչի՞ է հավասար հավանականությունը, որ հանվել է.

ա) սև գնդակ, բ) սպիտակ գնդակ:

170. Մետաղադրամը նետեք 50 անգամ՝ ամեն անգամ գրանցելով արդյունքը: Քանի՞ անգամ գինանշան ընկավ:

171. Արտաքնապես միմյանցից չտարբերվող երկու քարտերից մեկի վրա գրել են «ո» տառը, մյուսի վրա՝ «չ»: Այնուհետև այդ քարտերը իրար կողքի պատահական դասավորությամբ դրել են սեղանին՝ տառերը դեպի ներքև (նկար 21, ա): Ինչի՞ է հավասար հավանականությունը, որ քարտերն իրենց տեղերում շրջելուց հետո կստացվի «ոչ» բառը (նկար 21, բ):



ա)

Նկար 21


բ)

172. Երեք քարտերի վրա գրել են «յ», «ա», «ո» տառերը (ամեն քարտի վրա մեկ տառ): Այնուհետև այդ քարտերը իրար կողքի պատահական դասավորությամբ շարել են սեղանին՝ տառերը ներքև: Որքա՞ն է հավանականությունը, որ քարտերը շրջելուց հետո կստացվի «այո» բառը:
173. Չորս քարտերի վրա գրել են «ե», «ա», «վ», «հ» տառերը: Այնուհետև այդ քարտերը պատահական դասավորությամբ կողք կողքի շարել են սեղանին՝ տառերը դեպի ներքև: Որքա՞ն է հավանականությունը, որ քարտերը շրջելուց հետո կստացվի «Վահե» բառը:
174. Չորս քարտերի վրա գրեցին «ա», «թ», «ա», «գ» տառերը և քարտերը պատահական հերթականությամբ շարեցին սեղանին: Որքա՞ն է հավանականությունը, որ քարտերը շրջելուց հետո կստացվի «գաթա» բառը:
175. Հայտնի է, որ եկող շաբաթ լինելու է 2 արևոտ և 5 ամպամած օր: Ո՞ր պատահույթն է հավանական. «կիրակին կլինի արևոտ օր», թե՞ «կիրակին կլինի ամպամած օր»:
176. Դոմինոյի 28 քարերից պատահականորեն վերցնում են մեկը (նկար 22-ում պատկերված է քարերից մեկը, որի միավորների գումարը 11 է): Որքա՞ն է հավանականությունը, որ վերցված քարի միավորների գումարը լինի.
ա) 0, բ) 2, գ) 6, դ) 10:
177. Նետում են երկու գառ: Որքա՞ն է հետևյալ պատահույթի հավանականությունը.
ա) «միավորների գումարը 2 է», բ) «միավորների գումարը 10 է»,
գ) «միավորների գումարը 12 է», դ) «միավորների գումարը 13 է»:
178. Ավտոբուսի առաջին շարքում միայն երեք տեղ կա: Այդ տեղերը գբաղեցրին երկու տղամարդ և մեկ կին: Որքա՞ն է հավանականությունը, որ տղամարդիկ նստած լինեն կողք կողքի:
179. Նետում են երկու մետաղադրամ (նկար 19-ում ցույց է տրված մեկ մետաղադրամի նետման երկու (Թ և Զ) արդյունքները: Եթե երկուսն էլ Զ ստացվեն, ապա հաղթում է առաջին մասնակիցը, իսկ եթե մեկը Թ լինի, մյուսը՝ Զ, ապա հաղթում է երկրորդը: Որի՞ հաղթելու հավանականությունն է մեծ:
180. Նետում են երկու գառ: Եթե միավորների գումարը 11 է, հաղթում է առաջին մասնակիցը, եթե 12 է՝ հաղթում է երկրորդը: Որի՞ հաղթելու հավանականությունն է մեծ:
181. Հնարե՛ք հաղթելու հավասար հնարավորությամբ, հաղթելու տարբեր հնարավորությամբ խաղ.
ա) երկու գառով, բ) երկու մետաղադրամով:
182. Արտաշեսը մի թիվ է մտապահել, որը գրվում է 1, 2, 3, 4, 5 թվանշանների միջոցով՝ առանց կրկնության: Որքա՞ն է հավանականությունը, որ Գրիգորը առաջին անգամից կկռահի այդ թիվը, եթե նա գիտի, որ այն.
ա) երկնիշ է, բ) եռանիշ է, գ) քառանիշ է:

- 183.** Դավիթը մի թիվ է մտապահել, որը գրվում է առանց 0 թվանշանի և առանց թվանշանների կրկնության: Արամը ձգտում է կռահել այդ թիվը: Որքա՞ն է հավանականությունը, որ Արամը առաջին անգամից կկռահի, եթե նա գիտի, որ այդ թիվը.
- ա) երկնիշ է, բ) եռանիշ է, գ) քառանիշ է:

1.11. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Երկար ժամանակ թիվ ասելով հասկացվում էր միայն բնական թիվ (միավորների հավաքածու), որ ստացվում է հաշվելու (համրելու) արդյունքում: Հարաբերությունը, որպես մի թվի բաժանման արդյունք մի այլ թվի վրա, թիվ չէր համարվում: Թվի նկատմամբ նոր մոտեցումն առաջին անգամ հանդիպում ենք անգլիացի գիտնական Իսահակ Նյուտոնի (1643–1727) «Համընդհանուր թվաբանություն» աշխատությունում: Նյուտոնը գրել է. «Թիվ ասելով մենք հասկանում ենք ոչ այնքան միավորների բազմություն (հավաքածու), որքան ինչոր վերացական մեծության հարաբերություն նրա հետ համասեռ որոշակի մեծությանը, որը մենք ընդունում ենք որպես միավոր»:



Նկար 22

«Համեմատություն» բառը առաջացել է լատիներեն «proportio» բառից, որը նշանակում է համամասնություն, որոշակի հարաբերակցություն մասերի միջև: Համեմատությունների մասին ուսմունքը շատ հարգի էր պյութագորասականների մոտ: Համեմատությունների հետ նրանք կապում էին բնության կարգի ու գեղեցկության, երաժշտության համահունչ ակորդների և տիեզերքի հարմոնիայի մասին մտքերը: Էվկլիդեսի (մ.թ.ա. III դար) հռչակավոր «Մկզբունքների» VII գրքում շարադրված է հարաբերությունների և համեմատությունների տեսությունը:

Ժամանակակից գրառումով $a : b = c : d$ տեսքով գրվող համեմատությունից Էվկլիդեսն արտածում է ածանցյալ համեմատություններ (երբ $a \neq b, c \neq d$).

$$\begin{aligned} b : a &= d : c, & (a+b) : b &= (c+d) : d, \\ a : c &= b : d, & (a-b) : b &= (c-d) : d, \end{aligned}$$

և ապացուցում համեմատության հիմնական հատկությունը:

Համեմատությունը գրելու մեզ հայտնի եղանակը երևան է եկել ոչ միանգամից: Դեռևս XVII դարում ֆրանսիացի գիտնական Ռ. Դեկարտը (1596–1650) $7 : 12 = 84 : 144$ համեմատությունը գրում էր այսպես՝ $|7|12|84|144|$:

Բաժանման և հավասարման նշանների միջոցով համեմատության ժամանակակից գրառումը 1693 թվականին մտցրել է գերմանացի գիտնական Գ. Վ. Լայբնիցը (1646–1716):


Դեռ հին ժամանակներում ընդունված էր պարտքով գումար տալը: Ժամանակը լրանալուց հետո պարտքը վերադարձվում էր: Բացի դրանից՝ ուրիշի դրամական միջոցները օգտագործելու դիմաց պարտապանը վերցրած յուրաքանչյուր 100 դրամական միավորի համար վճարում էր նախապես պայմանավորված գումար: Այդ գումարը լատիներենում կոչվում էր «pro cento», այսինքն մաս հարյուրից: Այդպես առաջացել է «պրոցենտ» (տոկոս) տերմինը: Ժամանակի ընթացքում փոխառության հաշվարկների վերաբերյալ խնդիրներն այնքան կարևորացան, որ դրանք սկսեցին մտցնել թվաբանության դասագրքերի մեջ. cento բառն էլ գրում էին այսպես՝ «c»: Ասում են՝ իբր մի անգամ տպարանի գրաշարը այդ նշանի փոխարեն սխալմամբ հավաքել էր % նշանը, որն այժմ օգտագործվում է:

Պ. Ֆերմայի (1601–1665), Բ. Պասկալի (1623–1662) և XVII դարի ուրիշ մաթեմատիկոսների աշխատանքները հիմք դարձան մի նոր մաթեմատիկական տեսության, որն անվանվեց հավանականությունների տեսություն: XIX դարի երկրորդ կեսում հավանականությունների տեսության մեջ հիմնարար ներդրում մտցրին ռուս գիտնականներ Պ. Լ. Չերիշևը (1821–1894), Ա. Ա. Մարկովը (1856–1922) և ուրիշներ:



1.12. ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ԽՆԳԻՐՆԵՐ

- 184.** Ըձակն աստիճանաբար ծածկվում է ջրաշուշաններով, ընդ որում ջրաշուշաններով զբաղված մակերեսը յուրաքանչյուր շաբաթում կրկնապատկվում է: Քանի՞ շաբաթում է լճակի կեսը ծածկվել ջրաշուշաններով, եթե ամբողջ լճակը 8 շաբաթում է ծածկվել:
- 185.** Մանրէների մի տեսակ բազմանում է բաժանվելով. ամեն մի մանրէ յուրաքանչյուր րոպեում վեր է ածվում երկու մանրէի: Բոլոր մանրէներն ունեն նույն չափերը: Երբ դատարկ բաժակի մեջ դնում ենք 1 մանրէ, ապա 1 ժամում բաժակը լցվում է մանրէներով: Որքա՞ն ժամանակում բաժակը կլցվի, եթե նրա մեջ սկզբում 2 մանրէ դնենք:
- 186.** 3 հավը 3 օրում 3 ձու է ածում: 12 հավը 12 օրում քանի՞ ձու կածի:
- 187.** 100 երաշտահավը 100 օրում ուտում է 100 կգ հացահատիկ: 10 երաշտահավը 10 օրում քանի՞ կգ հացահատիկ կուտի:
- 188.** 3 ներկարարը 5 օրում կարող է 60 պատուհան ներկել:
 ա) Քանի՞ պատուհան կներկի 5 ներկարարը 4 օրում:
 բ) Քանի՞ օրում երկու ներկարարը կներկի 48 պատուհան:

- 189.** *Հին խնդիր:* 2 հողափոր 2 ժամում փորում է 2 մ առու: Քանի՞ հողափոր 5 ժամում կփորի 5 մ առու:
- 190.** *Ի. Նյուտոնի «Համընդհանուր թվաբանությունից»:* Եթե գրագիրը 8 օրում կարող է գրել 15 թերթ, ապա քանի՞ գրագիր կպահանջվի 405 թերթը 9 օրում գրելու համար:
- 191.** *Հին խնդիր:* Արտագրողը 4 օրում կարող է արտագրել 40 թերթ՝ յուրաքանչյուր օր աշխատելով 9 ժամ: Քանի՞ օրում նա կարտագրի 60 թերթ՝ աշխատելով օրական 12 ժամ:
- 192.** *Հին խնդիր:* Մի տնտեսուհու հարցրին. «Ձեր հավերը շա՞տ ձու են ածում»: «Դո՛ւք հաշվեք,– եղավ պատասխանը,– մեկուկես հավը մեկուկես օրում մեկուկես ձու է ածում, իսկ ես ընդամենը 12 հավ ունեմ»: Օրական քանի՞ ձու են ածում հավերը:
- 193.** 100 պայմանական միավոր աշխատավարձը բարձրացավ 10%-ով, ապա նորից 10%-ով: Քանի՞ տոկոսով ավելացավ աշխատավարձը երկու բարձրացումների արդյունքում:
- 194.** 100 պայմանական միավոր ապրանքի գինն իջեցվեց 10%-ով, ապա նորից 10%-ով: Քանի՞ տոկոսով իջավ ապրանքի գինը երկու փոփոխությունների արդյունքում:
- 195.** 100 պայմանական միավոր ապրանքի գինը սկզբում իջեցվեց 10%-ով, ապա բարձրացվեց 10%-ով: Արդյունքում ապրանքի գինն իջա՞վ, թե՞ բարձրացավ: Քանի՞ տոկոսով:
- 196.** 100 պայմանական միավոր ապրանքի գինը նախ բարձրացրին 10%-ով, ապա իջեցրին 10%-ով: Արդյունքում բարձրացա՞վ, թե՞ իջավ ապրանքի գինը: Քանի՞ տոկոսով:
- 197.** Հիշելով, որ հավասար պատկերներն ունեն հավասար մակերեսներ և պատկերի մակերեսը հավասար է իր բաղկացուցիչ մասերի մակերեսների գումարին, հաշվե՛ք մակերեսը (նկար 23):
 ա) ABCD ուղղանկյան, բ) ABC եռանկյան, գ) ADC եռանկյան:




Նկար 23



Նկար 24

- 198.** Նկար 24–ում պատկերված բազմանկյան կողմերը տրված են սանտիմետրերով: Գտե՛ք նրա մակերեսը:


199. Երկու հավասար պատկերներ վրադրել են մեկը մյուսին ինչպես նկար 25-ում: Ապացուցե՛ք, որ ներկած պատկերների մակերեսները հավասար են:



Նկար 25


200. Հաշվե՛ք եռանկյան մակերեսը (նկար 26).

ա) ADB, բ) BDC, գ) ABC:




Նկար 26

201. Այն քառանկյունը, որի հանդիպակաց կողմերը զույգ առ զույգ զուգահեռ են, անվանում են զուգահեռագիծ: Հաշվե՛ք նկար 27-ի զուգահեռագծի մակերեսը, եթե $AD=3$ սմ, $BK=2$ սմ:



Նկար 27



Նկար 28

202. Նկար 28-ում պատկերված է սեղան (քառանկյուն, որի երկու կողմեր զուգահեռ են, իսկ մյուս երկուսը՝ ոչ): Հաշվե՛ք նրա մակերեսը, եթե $AD=5$ սմ, $BC=2$ սմ, $BK=2$ սմ:



ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐ

Հիշենք, որ այն թվերը, որոնք օգտագործվում են առարկաների քանակ հաշվելիս, անվանում են բնական թվեր: Ջրոն բնական թիվ չէ: Ջրոն և բնական թվերը, գրված աճման կարգով և առանց բացթողումների, կազմում են ոչ բացասական ամբողջ թվերի շարքը.

0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, ... :

Այս գլխում ներմուծվելու են նոր թվեր՝ բացասական ամբողջ թվերը:

2.1. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐ


Նկար 29-ում ջերմաչափը ցույց է տալիս 7° տաքություն: Եթե ջերմաստիճանն իջնի, 4° -ով, ապա ջերմաչափը ցույց կտա 3° տաքություն: Ջերմաստիճանի իջեցմանը համապատասխանում է հանման գործողություն.

$$7 - 4 = 3:$$

Եթե ջերմաստիճանն իջնի 7° -ով, ապա ջերմաչափը ցույց կտա 0° .

$$7 - 7 = 0:$$

Իսկ եթե ջերմաստիճանն իջնում է 8° -ով, ապա ջերմաչափը ցույց է տալիս « -1° » (1° ցուրտ): Ինչպես տեսնում ենք, ջերմաստիճանի իջեցման արդյունքն այս անգամ էլ ունի իրական իմաստ (1° ցուրտ) սակայն այն հնարավոր չէ գրել բնական թվերի և 0-ի միջոցով:



Նկար 29

Ոչ բացասական ամբողջ թվերի շարքի օգնությամբ լուսաբանենք հանման գործողությունը:

1) 7 թվից ձախ հաշվելով 4 թիվ՝ կհասնենք 3-ին.

0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, ... :

▲
└───┘
-4

$$7-4=3:$$

2) 7 թվից ձախ հաշվելով 7 թիվ՝ կհասնենք 0-ին.

0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, ... :

▲
└──────────┘
-7

$$7-7=0:$$

Պարզ է, որ ոչ բացասական ամբողջ թվերի շարքում անհնար է 7 թվից ձախ հաշվել 8 թիվ: $7-8$ գործողությունն իրագործելի դարձնելու նպատակով ոչ բացասական ամբողջ թվերի շարքը ընդլայնենք **նոր թվերով**: Դրա համար ոչ բացասական ամբողջ թվերի շարքին 0 թվից ձախ (աջից ձախ ուղղությամբ) հերթականությամբ կցագրենք բոլոր բնական թվերը, ամեն մեկի դիմաց դնելով «-» նշանը, որը ցույց է տալիս, որ այդ թիվը գրված է 0-ից ձախ:

-1, -2, -3, ... գրառումները կարդում են «մինուս 1», «մինուս 2», «մինուս 3», ... ձևով: Ստացված շարքը կգրվի հետևյալ կերպ՝

... , -5, -4, -3, -2, -1, 0, 1, 2, 3, 4, 5, ... :

Այս շարքն անվանում են **ամբողջ թվերի շարք**: Բերված գրառման մեջ ձախ և աջ մասերում դրված երեքական կետերը խորհրդանշում են, որ շարքը ձախից և աջից անսահմանափակ շարունակվում է:

Ամբողջ թվերի շարքում 0-ից աջ տեղադրված թվերն անվանում են **բնական թվեր** կամ **դրական ամբողջ թվեր**: 0-ից ձախ տեղադրված թվերն անվանում են **բացասական ամբողջ թվեր**: 0-ն ոչ դրական և ոչ էլ բացասական թիվ է: Այն բաժանում է բացասական թվերը դրականներից: Փաստորեն ամբողջ թվերի շարքը բաղկացած է բնական թվերից, բացասական ամբողջ թվերից և 0-ից:

Հարկ եղած դեպքում a բնական թվի փոխարեն գրում են նաև «+ a », կարդում են՝ «պլյուս a »: Այս դեպքում ամբողջ թվերի շարքը կգրվի հետևյալ տեսքով.

... , -5, -4, -3, -2, -1, 0, +1, +2, +3, +4, +5, ... :

- 203.** Կարելի՞ է արդյոք ոչ բացասական թվերի շարքում իրագործել հանումը.
ա) 7-4, բ) 7-7, գ) 7-8:
- 204.** Ինչպե՞ս են ստանում ամբողջ թվերի շարքը:
- 205.** Ինչպե՞ս են անվանում այն թվերը, որոնք ամբողջ թվերի շարքում.
ա) 0-ից աջ են, բ) 0-ից ձախ են:
- 206.** 0-ն. ա) դրական է, բ) բացասական է:
- 207.** Կարդացե՛ք թվերը. +2, -3, 0, +7, -9:
ա) Այդ թվերից որո՞նք են ամբողջ թվերի շարքում 0-ից աջ, որոնք՝ 0-ից ձախ:
բ) Այդ թվերից որո՞նք են դրական, որոնք՝ բացասական:
- 208.** Կարդացե՛ք գրառումները և բացատրե՛ք նրանց իմաստը.
Լոռու մարզ ... -2°, Գեղարքունիքի մարզ ... -8°, Տավուշի մարզ ... +3°
- 209.** Օգտագործելով «+» և «-» նշանները՝ գրե՛ք
ա) 3° տաքություն, բ) 40° տապ, գ) 6° զրոյից բարձր,
դ) 20° սառնամանիք, ե) 5° զրոյից ցածր, զ) 1° ցուրտ:

2.2. ԹՎԻ ՀԱՎԱԳԻՐ: ԹՎԻ ԲԱՅԱՐՁԱԿ ԱՐԺԵՔ

Համարում են, որ եթե ամբողջ թվից առաջ դրվի «+» նշան, ապա դրանից թիվը չի փոխվի:

Օրինակ՝ 5 թիվը կարելի է գրել նաև +5 ձևով, -5 թիվը՝ +(-5) ձևով.
 $5 = +5, \quad -5 = +(-5)$

Ուստի ամբողջ թվերի շարքը կարելի է գրել նաև այսպես.

... , -5, -4, -3, -2, -1, 0, +1, +2, +3, +4, +5, ... :

Այն թվերը, որոնք միայն նշանով են տարբերվում, անվանում են հակադիր թվեր:

Օրինակ՝ +1 և -1, -5 և +5, +10 և -10 թվերը հակադիր են:

Եթե ամբողջ թվից առաջ դրվի «-» նշան, ապա արդյունքում կստացվի այդ թվի հակադիրը:

Օրինակ՝ $-(+1) = -1, \quad -(-2) = +2$

Ընդունվում է, որ $-0 = 0 = +0$ ուրեմն 0-ն ինքն իր հակադիրն է:

a ամբողջ թվի հակադիրը $-a$ -ն է: Նկատենք, որ $-a$ թիվը կարող է լինել դրական, բացասական կամ զրո: Օրինակ, եթե $a = +2$, ապա $-a = -2$ (քանի որ $-(+2) = -2$), եթե $a = -3$ ապա $-a = -(-3) = +3$, եթե $a = 0$, ապա $-a = -0 = 0$:

Ներմուծենք թվի մոդուլի կամ բացարձակ արժեքի հասկացությունը:

Դրական թվի մոդուլ անվանում են հենց այդ թիվը:

Օրինակ՝ +3 թվի մոդուլը +3-ն է, գրում են.

$$|+3| = +3:$$

Բացասական թվի մոդուլ անվանում են նրա հակադիր (դրական) թիվը:

Օրինակ՝ -4 թվի մոդուլը +4-ն է, գրում են.

$$|-4| = +4:$$

Այսպիսով՝

գրոյից տարբեր ամբողջ թվի մոդուլը դրական թիվ է: Հակադիր թվերն ունեն նույն մոդուլը:

$$|a| = |-a|, \quad |+3| = |-3| = +3, \quad |-5| = |+5| = +5:$$

0-ի մոդուլ 0-ն է, գրում են.

$$|0| = 0:$$

- 210.** Ո՞ր թվերն են անվանում հակադիր: Բերե՛ք հակադիր թվերի օրինակներ:
- 211.** Ո՞ր թիվն է 0 թվի հակադիրը:
- 212.** Ի՞նչ կստացվի, եթե ամբողջ թվից առաջ դրվի.
ա) «+» նշան, բ) «-» նշան:
- 213.** Ի՞նչն են անվանում հետևյալ թվերի մոդուլ.
ա) դրական ամբողջ թվի,
բ) բացասական ամբողջ թվի,
գ) գրո թվի:
- 214.** Ո՞ր թվերն ունեն նույն մոդուլը: Բերե՛ք օրինակներ:
- 215.** Որո՞նք են այն թվերը, որոնց բացարձակ արժեքը և հակադիրը նույնն են:
- 216.** Նմուշային օրինակին համապատասխան՝ պարզեցրե՛ք արտահայտությունը.

$$\text{ա) } +(+2) = +2: \quad \text{բ) } -(-2) = +2:$$

$$\begin{array}{lll} \text{գ) } +(-2), & \text{դ) } +(-3), & \text{ե) } -(+3), \\ \text{զ) } -(-3), & \text{է) } -(+8), & \text{ը) } -(-10): \end{array}$$

- 217.** Ի՞նչ թվեր կստացվեն, եթե -1, 3, 0, -6, 7 թվերից յուրաքանչյուրի առաջ դրվի.
ա) «+» նշան, բ) «-» նշան:

- 218.** $-5, 6, 8, -10, 0, +4, -0$ թվերից որո՞նք են.
 ա) դրական, բ) բացասական:
- 219.** Լրացրե՛ք բացթողումը, կարդացե՛ք ստացված գրառումը.
 ա) $|+1| = \dots$, բ) $|-6| = \dots$, գ) $|0| = \dots$,
 դ) $|-3| = \dots$, ե) $|+7| = \dots$, զ) $|-8| = \dots$:
- 220.** Գտե՛ք տվյալ թվի մոդուլը.
 $+2, -2, +5, -5, +8, -10, +100, +0, -3$:
- 221.** Նշե՛ք երկու տարբեր թվեր, որոնց մոդուլները հավասար լինեն:
- 222.** $2, 5, -3, 10, -17$ թվերից յուրաքանչյուրի համար նշե՛ք նույն մոդուլն ունեցող մեկ այլ թիվ:
- 223.** Նշե՛ք երկու թիվ, որոնց մոդուլը լինի.
 ա) 2, բ) 7, գ) 9, դ) 8:
- 224.** Կատարե՛ք գործողությունը.
 ա) $|+6|+|+7|$, բ) $|-9|+|-8|$, գ) $|-6|+|+7|$, դ) $|+8|+|+9|$:
- 225.** Հաշվե՛ք.
 ա) $|-9|-|-6|$, բ) $|-5|-|+3|$,
 գ) $|-20|-|-6|$, դ) $|-17|-|-8|$:
- 226.** Հաշվե՛ք գումարը.
 ա) $|-7|+|+5|+|+8|+|-10|$, բ) $|+12|+|-2|+|+10|+|-9|$,
 գ) $|+18|+|-2|-|-5|-|-15|$, դ) $|-10|+|-2|-|-8|+|-5|$:
- 227.** Գտե՛ք թիվ, որի մոդուլը լինի.
 ա) $+5$, բ) $+8$, գ) $+1$, դ) 0 :
 Քանի՞ այդպիսի թիվ կարելի է գտնել:
- 228.** Եթե ամբողջ թիվը նշանակված է a տառով, ապա նրա հակադիրը գրվում է $-a$ տեսքով: Լրացրե՛ք աղյուսակը.

a	5	-3			-7		-9
$-a$			-2	6		-8	

- 229.** Մի՞շտ է արդյոք թվի բացարձակ արժեքը հավասար իրեն՝ թվին, այսինքն՝ $|a| = a$: Ո՞ր թվերի համար է դա ճիշտ:
- 230.** Մի՞շտ է արդյոք թվի բացարձակ արժեքը հավասար այդ թվի հակադիրին՝ $|a| = -a$: Ո՞ր թվերի համար է դա ճիշտ:
- 231.** Ո՞ր թվի համար են միաժամանակ բավարարվում $|a| = a$ և $|a| = -a$ հավասարությունները:
- 232.** Ճի՞շտ է, որ բոլոր ամբողջ թվերի համար $|-a| = |a|$
- 233.** Աշխենը թյուրիմացաբար կարծում է, թե $(-a)$ -ն բացասական թվի գրառումն է: Նշե՛ք այնպիսի a թիվ, որ $(-a)$ -ն լինի.
 ա) դրական թիվ, բ) բացասական թիվ, գ) զրո թիվը:

2.3. ԱՄՐՈՂՋ ԹՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ

**Երկու ամբողջ թվերից մեծ է այն թիվը,
որն ամբողջ թվերի շարքում մյուսից աջ է:**

Եթե a -ն b -ից մեծ է, ապա նաև ասում են b -ն a -ից փոքր է: Գրում են.
 $a > b$ կամ $b < a$:

Օրինակ՝ $1 > -1$, $-2 > -6$, $0 > -5$, $-10 < 2$, որովհետև

$\dots, -5, -4, -3, -2, -1, 0, +1, +2, +3, +4, +5, +6, \dots$

ամբողջ թվերի շարքում 1-ը -1-ից աջ է, -2-ը -6-ից աջ է և այլն:

Ամբողջ թվերի համեմատման կանոնից հետևում է, որ

**ցանկացած դրական թիվ մեծ է 0-ից, ցանկացած
բացասական թիվ փոքր է 0-ից: Ցանկացած դրական թիվ
մեծ է ցանկացած բացասական թվից:**

Հարմար է բացասական թվերը միմյանց հետ համեմատել իրենց բացարձակ արժեքների միջոցով: Քանի որ ամբողջ թվերի շարքում մեծ մոդուլով բացասական թիվը փոքր մոդուլով բացասական թվից ձախ է տեղադրված, ապա

Երկու բացասական թվերից մեծ է այն, որի մոդուլը փոքր է

Օրինակ՝ քանի որ $|-2| < |-6|$, ապա $-2 > -6$:

Եթե a և b թվերը նույնը չեն, ապա գրում են՝ $a \neq b$:

234. Համեմատե՛ք բնական թվերը.

ա) 425 և 452,

բ) 999 և 1000,

գ) 579 և 957,

դ) 12 456 և 12 459,

ե) 1 300 և 1 297,

զ) 13 547 և 1 354:

235. Ինչպե՞ս են համեմատում ամբողջ թվերը:

236. Ո՞ր թվերն են.

ա) մեծ գրոյից,

բ) փոքր գրոյից:

237. Ո՞ր թիվն է մեծ՝ դրակա՞նը, թե՞ բացասականը:

238. Ձևակերպե՛ք համեմատության կանոնը.

ա) ամբողջ թիվը գրոյի հետ,

բ) դրական թիվը բացասականի հետ,

գ) բացասական թիվը բացասականի հետ:

239. Գոյություն ունի՞ արդյոք.

ա) ամենամեծ բնական թիվ,

բ) ամենափոքր բնական թիվ,

գ) ամենամեծ բացասական ամբողջ թիվ,

դ) ամենափոքր բացասական ամբողջ թիվ,

ե) ամենամեծ ամբողջ թիվ,

զ) ամենափոքր ամբողջ թիվ:

Լուծում: Քանի որ $-8 < 0$ և $|-8| = 8$ ապա ամբողջ թվերի շարքում -3 -ից դեպի ձախ կհաշվենք 8 թիվ և կանգ կառնենք (-11) թվի վրա.

..., $-11, -10, -9, -8, -7, -6, -5, -4, -3, -2, -1, 0, +1, \dots$
 \uparrow
 ───────────────────
 -8

Այսպիսով՝ $(-3)+(-8) = -11$

Դիտարկված օրինակները հաստատում են հետևյալ կանոնի ճշտությունը.

նույն նշանի երկու թվեր գումարելու համար կարելի է գումարել նրանց մոդուլները և ստացված գումարի առաջ դնել գումարելիների նշանը:

Ընդգծենք նաև, որ

դրական թվերի գումարը դրական թիվ է, իսկ բացասական թվերի գումարը՝ բացասական:

Այս կանոնի հիման վրա կունենանք.

$(+7)+(+9) = +(7+9) = +16 = 16,$ $(-2)+(-3) = -(2+3) = -5:$

Օրինակ 3: Հաշվենք $(-3)+(+8)$ գումարը:

Լուծում: Քանի որ $+8 > 0$ և ապա ամբողջ թվերի շարքում -3 -ից աջ կհաշվենք 8 թիվ և կանգ կառնենք $+5$ թվի վրա.

..., $-4, -3, -2, -1, 0, +1, +2, +3, +4, +5, +6, +7, +8, \dots$
 ───────────────────
 +8

Այսպիսով՝ $(-3)+(+8) = +5:$

Նկատենք, որ այստեղ դրական գումարելիի մոդուլը մեծ է բացասական գումարելիի մոդուլից, իսկ գումարը $|+8|-|-3|$ -ին հավասար դրական թիվ է:

Օրինակ 4: Հաշվենք $(+3)+(-8)$ գումարը:

Լուծում: Քանի որ $-8 < 0$ և ապա ամբողջ թվերի շարքում $+3$ -ից դեպի ձախ կհաշվենք 8 թիվ և կանգ կառնենք (-5) թվի վրա.

..., $-7, -6, -5, -4, -3, -2, -1, 0, +1, +2, +3, +4, +5, \dots$
 ───────────────────
 -8

Այսպիսով՝ $(+3)+(-8) = -5:$

Այստեղ բացասական գումարելիի մոդուլը մեծ է դրական գումարելիի մոդուլից, իսկ գումարը $-(|-8|-|+3|)$ -ին հավասար բացասական թիվ է:

Դիտարկված օրինակները հաստատում են հետևյալ կանոնի ճշտությունը.

տարբեր նշաններ և տարբեր մոդուլներ ունեցող երկու թվերի գումարը հաշվելու համար կարելի է մեծ մոդուլից հանել փոքր

**մոդուլը և այդ տարբերության առաջ դնել
մեծ մոդուլ ունեցող գումարելիի նշանը:**

Այս կանոնի հիման վրա կունենանք.

$$(+17)+(-20) = -(20-17) = -3, \text{ քանի որ } |-20| > |+17|,$$

$$(-2)+(+1) = -(2-1) = -1, \text{ քանի որ } |-2| > |+1|:$$

Օրինակ 5: Հաշվենք $(+5)+(-5)$ գումարը:

Լուծում: Քանի որ $(-5) < 0$, և $|-5| = 5$, ապա ամբողջ թվերի շարքում $(+5)$ -ից դեպի **ձախ** կհաշվենք 5 թիվ և կանգ կառնենք 0 թվի վրա.

$$\dots, -3, -2, -1, \underbrace{0, +1, +2, +3, +4, +5, +6, \dots}_{-5}$$

Այսպիսով՝ $(+5)+(-5) = 0$:

Այս օրինակը հաստատում է հետևյալ կանոնի ճշտությունը.

հակադիր թվերի գումարը հավասար է զրոյի:

Այս կանոնի հիման վրա կունենանք.

$$(+3)+(-3) = 0, \quad (-7)+(+7) = 0, \quad a+(-a) = 0:$$

Ցանկացած a ամբողջ թվի համար.

$$a+0 = a, \quad 0+a = a:$$

Օրինակ՝ $0+(-3) = -3$, $(+5)+0 = +5$, $0+0 = 0$:

Երկուսից ավելի գումարելիների գումարը գտնելու համար պետք է գտնել առաջին երկուսի գումարը և դրան գումարել երրորդ գումարելին և այդպես շարունակ, մինչև վերջին գումարելին:

Օրինակ՝ $-3, +7, -5$ և 2 թվերի գումարը $((-3+(+7))+(-5))+2$ թիվն է.
 $((-3+(+7))+(-5))+2 = (+4+(-5))+2 = -1+2 = +1$:

- 249.** Ամբողջ թվերի շարքի միջոցով գտե՛ք գումարը.
 ա) $(+3)+(+2)$, բ) $(+3)+(-2)$, գ) $(-3)+(+2)$, դ) $(-3)+(-2)$:
- 250.** Ինչպե՞ս են գումարվում երկու թվերը, որոնք.
 ա) նույն նշանի են, բ) տարբեր նշանի են:
- 251.** Ինչի՞նչ է հավասար հակադիր թվերի գումարը:
- 252.** Ինչի՞նչ է հավասար ամբողջ թվի և զրոյի գումարը:
- 253.** Օգտագործելով գումարման կանոնները՝ հաշվե՛ք.

$$\begin{array}{l} \text{ա) } +7+(+9) = +(7+9) \dots: \quad \text{բ) } -4+(-6) = -(6+4) = \dots: \\ \text{գ) } -5+(-6), \quad \text{դ) } -5+(-9), \quad \text{ե) } -6+(-1), \quad \text{զ) } +1+(+6): \end{array}$$

Հաշվե՛ք (254, 255).

- 254.** ա) $-1+(-2)$, բ) $-2+(-1)$, գ) $-2+(-4)$,
 դ) $-5+(-1)$, ե) $-3+(-8)$, զ) $-4+(-11)$:
- 255.** ա) $-9+(-2)$, բ) $-7+(-3)$, գ) $-13+(-8)$,
 դ) $+12+(+23)$, ե) $-25+(-7)$, զ) $+18+(+42)$:
- 256.** Օգտվելով գումարման կանոններից՝ հաշվե՛ք.

$$\begin{aligned} \text{ա) } & +7+(-6) = +(7-6) = +1, \text{ որովհետև } |+7| > |-6| \\ \text{բ) } & -18+(+12) = -(18-12) = -6, \text{ որովհետև } |-18| > |+12| \end{aligned}$$

- գ) $-8+(+9)$, դ) $+8+(-9)$, ե) $+12+(-15)$,
 զ) $-13+(+18)$, է) $-2+(+18)$, ը) $+25+(-32)$:
- 257.** Գտե՛ք գումարը.
 ա) $-1+(+2)$, բ) $+5+(-2)$, գ) $-4+(+1)$,
 դ) $-8+(+2)$, ե) $+7+(-9)$, զ) $-10+(+4)$:

Գիտողություն: Գումարի գրառումը պարզեցնելու նպատակով դրական գումարելիների «+» նշանը և փակագծերը սովորաբար բաց են թողնվում (չեն գրվում): Օրինակ՝ $+3+(+8)$ -ի փոխարեն գրվում է $3+8$, $-5+(+9)$ -ի փոխարեն՝ $-5+9$:

- 258.** Պարզեցրե՛ք գումարի գրառումը.
 բ) $-8+(+9)$, գ) $-9+(+7)$, դ) $+3+(+7)$,
 ե) $+8+(-13)$, զ) $+9+(-17)$, է) $+13+(+24)$:
- 259.** Նշե՛ք գումարի յուրաքանչյուր գումարելու նշանը.
 ա) $-5+8$, բ) $5+7$,
 գ) $-13+(-9)$, դ) $-91+26$,
 ե) $-95+(-13)$, զ) $-56+(-102)$,
 է) $5+(-13)$, ը) $92+(-100)$:

Հաշվե՛ք բերված նմուշային օրինակի ձևով (260-264).

$$\begin{array}{r} -755+(-983) = -(755+983) = -1738 \\ \begin{array}{r} 755 \\ + 983 \\ \hline 1738 \end{array} \end{array}$$

- 260.** ա) $-102+(-98)$, բ) $-33+(-167)$, գ) $-128+(-12)$,
 դ) $688+957$, ե) $-172+(-118)$, զ) $694+738$:
- 261.** ա) $-354+(-293)$, բ) $-293+(-354)$, գ) $784+951$,
 դ) $-728+(-256)$, ե) $487+954$, զ) $(-259)+(-728)$:
- 262.** ա) $-7825+(-3517)$, բ) $7903+484$,
 գ) $-35+(-8094)$, դ) $-1113+(-4570)$:

263. ա) $359+(-483)$, բ) $-703+117$, գ) $-14+864$,
 դ) $151+(-87)$, ե) $17+(-256)$, զ) $476+(-253)$:
264. ա) $-170+(-250)$, բ) $-350+480$, գ) $7805+(-454)$,
 դ) $1306+(-2514)$, ե) $-8576+(-1720)$, զ) $-6060+3903$:
265. Հաշվե՛ք բերված նմուշային օրինակների եղանակով.

$$\begin{aligned} & \text{ա) } -5 + (-3) + 2 = -(5+3) + 2 = -8 + 2 = -6 \\ & \text{բ) } 3 + (-7) + (-8) + 6 = -4 + (-8) + 6 = -12 + 6 = -6 \end{aligned}$$

- գ) $-8+3+(-1)$, դ) $-7+(-2)+(-10)$,
 ե) $8+(-9)+(-7)$, զ) $-3+(-4)+(-5)+(-6)$,
 է) $-4+8+(-9)+3$, ը) $8+(-10)+(-12)+3$:

2.5. ԱՄՐՈՂՋ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Ցանկացած a և b երկու ամբողջ թվերի համար ճիշտ է գումարման տեղափոխական օրենքը.

գումարելիների տեղերը փոխելիս գումարը չի փոխվում:

$$a + b = b + a:$$

Օրինակ՝ $-3+(-5) = -5+(-3)$:

Ցանկացած a , b և c երեք ամբողջ թվերի համար ճիշտ է **գումարման զուգորդական օրենքը**.

երկու ամբողջ թվերի գումարին երրորդ ամբողջ թիվը գումարելու համար կարելի է առաջին թվին գումարել երկրորդ և երրորդ թվերի գումարը:

$$(a+b)+c = a+(b+c):$$

Օրինակ՝ $(2+5)+(-3) = 2+(5+(-3))$:

Ամբողջ թվերի գումարման տեղափոխական և զուգորդական օրենքների իրավացիությունը կարելի է ցույց տալ՝ օգտագործելով ամբողջ թվերի գումարման կանոնները և այդ օրենքների ձևարտացիությունը ոչ բացասական ամբողջ թվերի համար:

Օրինակ՝ ապացուցելու համար, որ $-3+(-5)$ և $-5+(-3)$ գումարները հավասար են, նկատենք, որ այդ գումարներից յուրաքանչյուրը բացասական է, և նրանցից ամեն մեկի մոդուլը որոշվում է գումարելիների մոդուլները գումարելով՝ $3+5$ և $5+3$: Իսկ բնական

թվերի գումարման տեղափոխական հատկության համաձայն $3+5$ և $5+3$ գումարները հավասար են:

Այդ օրենքների իրավացիության մեջ կարելի է համոզվել նաև ամբողջ թվերի շարքի միջոցով (անմիջական ստուգմամբ):

Գումարման տեղափոխական և զուգորդական օրենքների միջոցով կարելի է ցույց տալ, որ մի քանի ամբողջ թվերի գումարի գրառման մեջ կարելի է.

- 1) փակագծեր չօգտագործել,
- 2) գումարելիների տեղերը միմյանց հետ փոխել,
- 3) որոշ գումարելիներ վերցնել փակագծերի մեջ:

Օրինակ՝ $a+b+c+k = (c+k)+(a+b)$, իրոք.

$$\begin{aligned} a+b+c+k &= (a+b+c)+k = k+(a+b+c) = k+((a+b)+c) = \\ &= k+(c+(a+b)) = (k+c)+(a+b) = (c+k)+(a+b): \end{aligned}$$

Վերևում բերված կանոնները կիրառվում են հաշվարկները պարզեցնելու համար:

Օրինակ՝

$$\begin{aligned} 3+(-6)+(-4)+6+(-5)+4 &= (3+(-5))+((-6)+6)+(4+(-4)) = \\ &= -2+0+0 = -2: \end{aligned}$$

266. a և b ամբողջ թվերի համար գրե՛ք գումարման տեղափոխական օրենքը և ձևակերպե՛ք այն:

267. a , b և c ամբողջ թվերի համար գրե՛ք գումարման զուգորդական օրենքը և ձևակերպե՛ք այն:

268. Կիրառելով գումարման օրենքները՝ հաշվե՛ք.

ա) $5+798+35$, բ) $(723+59)+17$,

գ) $357+48+13$, դ) $488+(596+12)$:

269. Կատարե՛ք գումարումները և համեմատե՛ք արդյունքները.

ա) $-15+(-23)$ և $-23+(-15)$,

բ) $48+(-36)$ և $(-36)+48$,

գ) $-25+16$ և $16+(-25)$,

դ) $-8+(18+(-7))$ և $(-8+18)+(-7)$,

ե) $13+(-6+(-7))$ և $(13+(-6))+(-7)$:

270. Կիրառե՛ք գումարման տեղափոխական օրենքը.

ա) $-45+(-10) = -10+(-45)$:

բ) $8+(-35)$,

գ) $-13+49$,

դ) $-17+(-23)$:

271. Կիրառե՛ք գումարման զուգորդական օրենքը.

$$\text{ա) } 42 + (-3 + 7) = (42 + (-3)) + 7:$$

բ) $56 + (-16 + 7)$,

գ) $(-52 + 17) + (-9)$,

դ) $-13 + (-8 + 25)$:

272. Լրացրե՛ք բացթողումները.

ա) $3 + 5 + (-8) = 3 + (-8) + \dots$,

բ) $6 + \dots + (-1) = (-1) + (6 + (-2))$,

գ) $-4 + \dots + (-7) = 2 + (\dots + (-4))$,

դ) $-1 + \dots + 3 = (3 + (-7)) + \dots$:

273. Հաշվե՛ք կիրառելով գումարման օրենքները.

ա) $49 + ((-49) + 22)$,

բ) $-12 + (12 + (-29))$,

գ) $(47 + (-58)) + (-47)$,

դ) $(124 + 59) + (-24)$,

ե) $-56 + 17 + (-27)$,

զ) $49 + (-72) + 62$,

է) $36 + (-51) + 14$,

ը) $-48 + (-19) + 28$:

274. Հաշվե՛ք նմուշային օրինակի եղանակով.

$$\text{ա) } -1 + 2 + (-3) + 5 = (2 + 5) + ((-1) + (-3)) = 7 + (-4) = \dots :$$

բ) $-2 + (-4) + 2 + 5 + (-3) + 1 + (-3)$,

գ) $20 + (-8) + 2 + 5 + (-10) + (-1) + (-3)$,

դ) $-4 + (-1) + 3 + (-2) + (-3) + 9$,

ե) $-17 + 17 + (-8) + 6 + (-2) + 8$,

զ) $4 + (-6) + (-1) + (-4) + 6 + (-3) + 1$:

Հաշվե՛ք կիրառելով գումարման օրենքները (275, 276).

275. ա) $(-1) + (-2) + (-3) + (-4) + 4 + 3 + 2 + 1$,

բ) $(-7) + (-5) + (-3) + (-1) + 1 + 3 + 5 + 7$,

գ) $(-10) + (-9) + (-8) + (-7) + \dots + 7 + 8 + 9 + 10$,

դ) $(-100) + (-99) + (-98) + \dots + 98 + 99 + 100$:

276. ա) $1 + (-2) + 3 + (-4) + \dots + 9 + (-10)$,

բ) $1 + (-2) + 3 + (-4) + \dots + 99 + (-100)$,

գ) $(-1) + 2 + (-3) + 4 + \dots + (-9) + 10$,

դ) $(-1) + 2 + (-3) + 4 + \dots + (-99) + 100$:

277. Տրված են 9, -11, 10 թվերը: Համոզվե՛ք, որ ցանկացած երկու հարևան թվերի գումարը բացասական է, իսկ բոլոր երեք թվերի գումարը դրական է: Մեկ շարքով գրե՛ք երեք թիվ այնպես, որ ցանկացած երկու հարևան թվերի գումարը լինի դրական, իսկ բոլոր երեք թվերի գումարը լինի բացասական:

278. Համոզվե՛ք, որ 5, -4, -2, 5, -4, -2, 5 թվերի համար ցանկացած երեք հարևան թվերի գումարը բացասական է, իսկ բոլոր թվերի գումարը դրական է: Մեկ շարքով գրե՛ք յոթ ամբողջ թիվ այնպես, որ ցանկացած երեք հարևան թվերի գումարը լինի դրական, իսկ բոլոր թվերի գումարը՝ բացասական:

Նկատենք, որ բնական թվերի բազմությունում հնարավոր չէր փոքր թվից հանել մեծ թիվ: Ամբողջ թվերի բազմությունում դա հնարավոր է: Օրինակ՝

$$2-7 = 2+(-7) = -(7-2) = -5:$$

Տարբերության գրառումը պարզեցնելու համար դրական նվազելիի ու դրական հանելիի փակագծերը և «+» նշանը բաց են թողնվում (չեն գրվում):

Օրինակ՝

$$+9-(+3) = 9-3, \quad -9-(+3) = -9-3, \quad +9-(-3) = 9-(-3):$$

282. Ո՞ր թիվն են անվանում a և b թվերի տարբերություն:

283. Ո՞ր գումարին է հավասար $a-b$ տարբերությունը:

284. Ելնելով տարբերության սահմանումից՝ ստուգե՛ք, թե ճի՞շտ է հավասարությունը.

$$a)+28-(+9) = 14,$$

$$բ)+7-(-12) = -5,$$

$$գ)-2-(-3) = 1,$$

$$դ)-12-(+1) = -11:$$

285. Նշե՛ք նվազելին, հանելին և հանելիի հակադիր թիվը.

$$a)+45-(-63),$$

$$բ)+27-(-52),$$

$$գ)-4-(-19),$$

$$դ)-41-(+95),$$

$$ե)-59-(-11),$$

$$զ)+32-(-16):$$

286. Տարբերությունը փոխարինե՛ք նվազելիի և հանելիի հակադիր թվի գումարով.

$$a)+25-(-6) = +25+(+6) = 25+6:$$

$$բ)(-9)-(+45) = (-9)+(-45):$$

$$գ)+47-(+58),$$

$$դ)(-36)-(+12),$$

$$ե)+13-(-27),$$

$$զ)(-45)-(-59):$$

287. Տարբերությունը փոխարինե՛ք գումարով.

$$a)-5-(-2) = -5+(-2), \quad բ) 12-(-7) = 12+7$$

$$գ)-6-(-3),$$

$$դ) 9-(+13),$$

$$ե) 17-(+24),$$

$$զ)-13-(-19),$$

$$է) 13-(-27),$$

$$ը)-15-(+10):$$

Հաշվե՛ք համապատասխան նմուշօրինակների եղանակներով (**288, 289**).

288. $a) 9-10 = 9+(-10) = -(10-9) = -1:$

$$բ) 6-8,$$

$$գ) 4-10,$$

$$դ) 5-20,$$

$$ե) 6-11,$$

$$զ) 8-13,$$

$$է) 8-24,$$

$$ը) 24-48,$$

$$թ) 35-47,$$

$$ժ) 64-71,$$

$$ի) 91-119,$$

$$լ) 62-89,$$

$$խ) 67-105:$$

289. $ա) -3-7 = -3+(-7) = -(3+7) = -10:$

- բ) $-4-8,$ գ) $-5-2,$ դ) $-8-14,$
 ե) $-10-10,$ զ) $-20-60,$ է) $-11-23,$
 ը) $-28-17,$ թ) $-5-91,$ ժ) $-92-18,$
 ի) $-240-14,$ լ) $-50-105,$ խ) $-200-400:$

290. Հաշվե՛ք.

- ա) $-5-2,$ բ) $-1-3,$ գ) $-15-12,$
 դ) $-6-14,$ է) $-100-200,$ զ) $-30-600:$

Հաշվե՛ք համապատասխան նմուշօրինակների եղանակներով (291, 292).

291. $ա) -1-(-4) = -1+4 = 3:$

- բ) $-2-(-2),$ գ) $-3-(-4),$ դ) $-5-(-2),$
 ե) $-8-(-6),$ զ) $10-(-5),$ է) $0-(-9):$

292. $ա) -794-(-581) = -794+581 = -(794-581) = -213,$

$$\begin{array}{r} 794 \\ - 581 \\ \hline 213 \end{array}$$

- բ) $-824-(-642),$ գ) $-498-(-402),$ դ) $-864-(-164),$
 ե) $-1240-(-200),$ զ) $-1000-(-2500),$ է) $80-(-1800):$

293. Նմուշային օրինակի եղանակով գումարը գրե՛ք առանց փակագծերի.

$ա) (-25)+(-42) = -25-42:$

- բ) $(-45)+(-12),$ գ) $(-28)+(-49),$ դ) $13+(-45):$

294. Հաշվե՛ք գումարը՝

- ա) $49+(-23),$ բ) $56+(-63),$ գ) $(-66)+(-28):$

295. Հաշվե՛ք.

- ա) $(-5+8)+9,$ բ) $(14-18)-7,$ գ) $96-(-72+13),$
 դ) $-75-(-75+8),$ է) $79+(48-79),$ զ) $14-(15-94):$

296. ա) Բնական թվերի գումարը բնակա՞ն թիվ է,
 բ) Բնական թվերի տարբերությունը բնակա՞ն թիվ է:

297. Կարելի՞ է պնդել, որ ամբողջ թվերի
 ա) գումարն ամբողջ թիվ է, բ) տարբերությունն ամբողջ թիվ է:

Հաշվե՛ք առավել պարզ եղանակով (298, 299).

298. ա) $-1-2-3-4-5-6+5+4+3+2+1,$
 բ) $-8-7-5-3-1+0+1+3+5+7+8+9:$

299. ա) $-9-8-7-\dots-1+0+1+\dots+7+8+9+10$,
 բ) $-101-100-99-98-\dots+98+99+100$,
 գ) $1-2+3-4+\dots+9-10+11$,
 դ) $1-2+3-4+\dots+99-100$,
 ե) $-1+2-3+4-\dots-9+10-11+12$,
 զ) $-1+2-3+4-\dots-199+200$:

x -ի n -րդ արժեքի համար է ձիշտ հավասարությունը (300, 301).

300.

$$\begin{aligned} \text{ա) } x+13 &= 7, \\ x &= 7-13 = -(13-7) = -6, \quad \text{Պատասխան՝ } -6: \end{aligned}$$

$$\text{բ) } x+8 = -7, \quad \text{գ) } -7+x = 9, \quad \text{դ) } x-(-8) = 13, \quad \text{ե) } -15-x = 7:$$

301.

$$\begin{aligned} \text{ա) } -498-x &= -175 && 498 \\ x &= -498-(-175) = -498+175 = -(498-175), && -175 \\ \text{Պատասխան՝ } &-323: && \hline &&& 323 \end{aligned}$$

$$\begin{aligned} \text{բ) } 79+x &= -356, && \text{գ) } x-57 = -493, \\ \text{դ) } 167-x &= 39, && \text{ե) } -542+x = 542: \end{aligned}$$

302. Գտե՛ք մի քանի հավասար գումարելիների գումարը.

$$\text{ա) } \underbrace{(-5)+(-5)+\dots+(-5)}_{6 \text{ հաստ}} \quad \text{բ) } \underbrace{(-7)+(-7)+\dots+(-7)}_{8 \text{ հաստ}}$$

$$\text{ա) } \underbrace{(-10)+(-10)+\dots+(-10)}_{9 \text{ հաստ}} \quad \text{բ) } \underbrace{(-6)+(-6)+\dots+(-6)}_{11 \text{ հաստ}}$$

2.7. ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ԱՐՏԱԴՐՅԱԼԸ

Զրոյից տարբեր երկու ամբողջ թվերի արտադրյալ անվանում են այդ թվերի մոդուլների արտադրյալը՝ վերցրած «+» նշանով, եթե թվերը նույն նշանի են և «-» նշանով, եթե նրանք տարբեր նշանի են:

$$\begin{aligned} \text{Օրինակ՝ } 6 \cdot 8 &= +(|6| \cdot |8|) = +(6 \cdot 8) = +48, \\ (-5) \cdot (-10) &= +(|-5| \cdot |-10|) = +(5 \cdot 10) = +50, \\ 7 \cdot (-3) &= -(|7| \cdot |-3|) = -(7 \cdot 3) = -21, \\ (-5) \cdot 10 &= -(|-5| \cdot |10|) = -(5 \cdot 10) = -50: \end{aligned}$$

Ցանկացած a ամբողջ թվի և 0 -ի արտադրյալը 0 է.

$$a \cdot 0 = 0, \quad 0 \cdot a = 0:$$

$$\text{Օրինակ՝ } (+7) \cdot 0 = 0 \cdot (+7) = 0, \quad (-10) \cdot 0 = 0 \cdot (-10) = 0, \quad 0 \cdot 0 = 0:$$

Կամայական ամբողջ թվերի համար ճիշտ են բազմապատկման տեղափոխական և զուգորդական օրենքները.

$$a \cdot b = b \cdot a:$$

$$(a \cdot b) \cdot c = a \cdot (b \cdot c):$$

Այս հավասարությունների ճշտությունը հետևում է ամբողջ թվերի արտադրյալի սահմանումից և այն փաստից, որ այդ օրենքները ճիշտ են ոչ բացասական ամբողջ թվերի համար:

$$\begin{aligned} \text{Օրինակ՝ } (-5) \cdot (-6) &= +(5 \cdot 6) = +(6 \cdot 5) = (-6) \cdot (-5), \\ ((+5) \cdot (-3)) \cdot (-4) &= (-5 \cdot 3) \cdot (-4) = +((5 \cdot 3) \cdot 4) = \\ &= +(5 \cdot (3 \cdot 4)) = (+5) \cdot ((-3) \cdot (-4)): \end{aligned}$$

Նկատենք, որ կամայական a ամբողջ թիվը (-1) -ով բազմապատկելու դեպքում փոխվում է միայն a -ի նշանը, այսինքն՝ ստացվում է նրա հակադիր թիվը՝

$$(-1) \cdot a = -a:$$

Հիմնավորենք այս հավասարությունը օրինակների միջոցով.

$$\begin{aligned} (-1) \cdot (+5) &= -(|-1| \cdot |5|) = -(1 \cdot 5) = -5, \\ (-1) \cdot (-5) &= +(|-1| \cdot |-5|) = +(1 \cdot 5) = 5, \\ (-1) \cdot 0 &= 0 = -0: \end{aligned}$$

Երեք և ավելի ամբողջ թվերի արտադրյալը գտնելու համար պետք է գտնել դրանցից առաջին երկուսի արտադրյալը, այն բազմապատկել երրորդով, ստացված արտադրյալը չորրորդով և այլն:

$$\begin{aligned} \text{Օրինակ՝ } (-3) \cdot 5 \cdot 4 \cdot (-11) &= ((-3) \cdot 5 \cdot 4) \cdot (-11) = \\ (((-3) \cdot 5) \cdot 4) \cdot (-11) &= ((-15) \cdot 4) \cdot (-11) = (-60) \cdot (-11) = + (60 \cdot 11) = 660: \end{aligned}$$

Ամբողջ թվերի բնական ցուցիչով աստիճանը սահմանվում է ինչպես բնական թվերի բնական ցուցիչով աստիճանը:

a ամբողջ թվի n բնական ցուցիչով աստիճան անվանում են n արտադրիչների արտադրյալը, որոնցից ամեն մեկը հավասար է a -ի.

$$a^n = \underbrace{a \cdot a \cdot \dots \cdot a}_{n \text{ անգամ}} \quad (n > 1):$$

$$\text{Օրինակ՝ } (-2)^3 = (-2) \cdot (-2) \cdot (-2):$$

Ցանկացած թվի առաջին աստիճանը հավասար է այդ թվին.

$$a^1 = a:$$

- 303.** ա) Ո՞ր թիվն են անվանում գրոյից տարբեր երկու ամբողջ թվերի արտադրյալը:
բ) Ո՞ր թիվն է ցանկացած ամբողջ թվի և գրոյի արտադրյալը:
գ) Ինչպե՞ս են հաշվում մի քանի ամբողջ թվերի արտադրյալը:
- 304.** Ճի՞շտ են արդյոք տեղափոխական ու զուգորդական օրենքներն ամբողջ թվերի բազմապատկման համար: Ձևակերպե՛ք այդ օրենքները:
- 305.** Ի՞նչ թիվ կստացվի, եթե տրված ամբողջ թիվը բազմապատկենք (-1) -ով:
- 306.** Արտադրյալը հաշվե՛ք սյունակով բազմապատկման եղանակով:
ա) $123 \cdot 9$ բ) $357 \cdot 8$ գ) $256 \cdot 32$
դ) $457 \cdot 48$ ե) $521 \cdot 32$ զ) $439 \cdot 528$

Հաշվե՛ք հարմար եղանակով (**307, 308**).

- 307.** ա) $24 \cdot 2 \cdot 5$, բ) $47 \cdot 4 \cdot 25$, գ) $53 \cdot 8 \cdot 125$:
308. ա) $2 \cdot 37 \cdot 5$, բ) $25 \cdot 57 \cdot 4$, գ) $8 \cdot 39 \cdot 125$:
- 309.** Որոշե՛ք արտադրյալի նշանը: Կատարե՛ք բազմապատկումը.
ա) $(-2) \cdot (+3)$, բ) $(+8) \cdot (-3)$, գ) $(+6) \cdot (-5)$,
դ) $(-7) \cdot (+4)$, ե) $(-2) \cdot (-1)$, զ) $(-8) \cdot (-8)$,
է) $(-7) \cdot (-9)$, ը) $(+9) \cdot (+8)$, թ) $(-10) \cdot (+77)$
- 310.** Կատարե՛ք բազմապատկումը.
ա) $0 \cdot (-5)$, բ) $(+3) \cdot 0$, գ) $(-6) \cdot 0$,
դ) $(+49) \cdot 0$, ե) $0 \cdot (-54)$, զ) $0 \cdot (+48)$:
- 311.** Բազմապատկումը կատարե՛ք բերված նմուշային օրինակի եղանակով.

$$\begin{array}{r} \text{ա) } (-56) \cdot (-13) = +(56 \cdot 13) = \dots \quad \begin{array}{r} 56 \\ \times 13 \\ \hline \dots \end{array} \\ \text{Պատասխան՝ } \dots \end{array}$$

- ա) $(+45) \cdot (-13)$, բ) $(+230) \cdot (-48)$, գ) $(-505) \cdot (-8)$,
դ) $(-358) \cdot (-5)$, ե) $(-24) \cdot (-35)$, զ) $(-125) \cdot (-160)$,
է) $(-405) \cdot (+28)$, ը) $(-72) \cdot (+101)$, թ) $(+15) \cdot (+16)$:

Դիտողություն: Արտադրյալի գրառումը պարզեցնելու համար նրա դրական արտադրիչների «+» նշանները և փակագծերը կարելի է չգրել, բայց արտադրյալի նշանը որոշելիս այդ նշանները պետք է հաշվի առնել:

- 312.** Նախորդ առաջադրանքում պարզեցրե՛ք արտադրյալի գրելածներ:
Օրինակ՝ $(-3) \cdot (+17) = (-3) \cdot 17 = -(3 \cdot 17)$, $(+2) \cdot (-48) = 2 \cdot (-48) = -(2 \cdot 48)$:

- 313.** Որոշե՛ք արտադրյալի նշանը.
ա) $(-1) \cdot (-1)$, բ) $(-1) \cdot (-1) \cdot (-1)$, գ) $(-1) \cdot (-1) \cdot (-1) \cdot (-1)$,
դ) $(-1) \cdot (-1) \cdot (-1) \cdot (-1) \cdot (-1) \cdot (-1) \cdot (-1)$:

314. Որոշե՛ք արտադրյալի նշանը և հաշվե՛ք արտադրյալը.
 ա) $(-3) \cdot (-2) \cdot (-1) \cdot 4$, ք) $(-2) \cdot 3 \cdot (-4) \cdot (-6)$:
315. Քանի՞ բացասական բազմապատկիչ կարող է ունենալ արտադրյալը, եթե այն.
 ա) դրական է, ք) բացասական է:
316. Օգտագործելով բազմապատկման օրենքները՝ հաշվե՛ք նմուշային օրինակի եղանակով.

$$\begin{aligned} (-16) \cdot (-7) \cdot (-25) &= -(16 \cdot 25 \cdot 7) = -(4 \cdot 4 \cdot 25 \cdot 7) = \\ &= -(100 \cdot 4 \cdot 7) = -(100 \cdot 28) = -2800: \end{aligned}$$

- ա) $2 \cdot (-3) \cdot (-10)$, ք) $(-4) \cdot 17 \cdot 25$, գ) $8 \cdot (-25) \cdot (-3)$,
 դ) $(-6) \cdot (-5) \cdot (-7)$, ե) $8 \cdot (-17) \cdot (-125)$, զ) $(-3) \cdot 16 \cdot (-125)$:
317. a և b ամբողջ թվերի համար ճիշտ է, որ.
 ա) եթե $a > 0$ և $b > 0$, ապա $a \cdot b > 0$,
 բ) եթե $a < 0$ և $b < 0$, ապա $a \cdot b < 0$,
 գ) եթե $a \cdot b > 0$, ապա $a > 0$ և $b > 0$,
 դ) եթե $a \cdot b < 0$, ապա $a > 0$ և $b < 0$:
318. Երեք թվերի արտադրյալը դրական է: Կարելի՞ է պնդել, թե երեք թվերն էլ դրական են: Բերե՛ք օրինակներ:
319. Երեք թվերի արտադրյալը դրական է: Կարելի՞ է պնդել, թե այդ թվերից գոնե մեկը դրական է:
320. Երեք թվերի արտադրյալը բացասական է: Կարելի՞ է պնդել, թե երեք թվերն էլ բացասական են: Բերե՛ք օրինակներ:
321. Երկու թվերի արտադրյալը զրո է: Ապացուցե՛ք, որ այդ թվերից գոնե մեկը զրո է:
322. Երեք թվերի արտադրյալը զրո է: Ապացուցե՛ք, որ այդ թվերից գոնե մեկը զրո է:
323. Հաշվե՛ք.
 ա) $(-1)^2$, ք) $(-1)^3$, գ) $(-2)^2$:
 դ) $(-5)^2$, ե) $(-3)^3$, զ) $(-2)^4$:
324. Հաշվե՛ք.
 ա) $48 - 12 \cdot (-5)$, ք) $69 - (-12) \cdot (-5)$, գ) $129 - 15 \cdot 9$,
 դ) $456 - 45 \cdot (-6)$, ե) $158 - 45 \cdot 7$, զ) $258 - 13 \cdot (-7)$:
325. Ո՞ր թիվն է մեծ.
 ա) $3 \cdot 3 \cdot 3$, թե՞ $(-3) \cdot (-3) \cdot (-3)$,
 բ) $-5 \cdot 5$, թե՞ $(-5) \cdot (-5)$,
 գ) $(-7) \cdot (-7)$, թե՞ $7 \cdot (-7)$,
 դ) $-2 \cdot 2 \cdot 2 \cdot 2$, թե՞ $(-2) \cdot (-2) \cdot (-2) \cdot (-2)$:

326. Գրե՛ք բացասական թվի աստիճանի տեսքով.
 ա) $(-8) \cdot (-8) \cdot (-8)$, բ) $(-6) \cdot (-6) \cdot (-6)$, գ) $(-5) \cdot (-5) \cdot (-5) \cdot (-5)$,
 դ) $(-5) \cdot (-5) \cdot (-5)$, ե) $(-7) \cdot (-7) \cdot (-7)$, զ) $(-18) \cdot (-18)$:
327. Ո՞ր թիվն է մեծ.
 ա) $-2 \cdot 2$, թե՞ $(-2) \cdot (-2)$, բ) $-3 \cdot 3$, թե՞ $(-2) \cdot 2 \cdot 2$,
 գ) $(-3) \cdot (-3)$, թե՞ $(-2) \cdot (-2) \cdot (-2)$, դ) $(-4) \cdot (-4) \cdot (-4)$, թե՞ $(-3) \cdot 3 \cdot 3 \cdot 3$:
328. Գրե՛ք.
 ա) (-7) և 7 թվերի գումարը, բ) (-4) և 7 թվերի արտադրյալը,
 գ) (-4) և (-12) թվերի տարբերությունը:
329. Հաշվե՛ք.
 ա) $3 \cdot (-2) \cdot (-2) \cdot (-2)$, բ) $(-4) \cdot (-3) \cdot (-3)$, գ) $-(-3) \cdot (-3) \cdot (-3)$,
 դ) $-(-2) \cdot (-2) \cdot (-2)$, ե) $-(-5) \cdot (-5)$, զ) $(-4) \cdot (-3) \cdot 3$:
330. Գտե՛ք գումարելիների քանակը.
 ա) $(-2) + (-2) + \dots + (-2) = -12$,
 բ) $(-8) + (-8) + \dots + (-8) = -80$,
 գ) $(-4) + (-4) + \dots + (-4) = -20$:
331. Գտե՛ք գումարելիներից մեկը, եթե նրանք հավասար են:
 ա) $(\dots) + (\dots) + (\dots) + (\dots) + (\dots) = -25$,
 բ) $(\dots) + (\dots) + (\dots) + (\dots) = -40$,
 գ) $(\dots) + (\dots) + (\dots) + (\dots) + (\dots) + (\dots) = -36$:
332. Հաշվե՛ք՝ նախապես նշելով գործողությունների հերթականությունը:
 ա) $3 \cdot (-2)^2$, բ) $-4 \cdot (-3)^2$, գ) $-2 \cdot (-3)^4$,
 դ) $-3 \cdot (-2)^3$, ե) $2 \cdot (-5)^2$, զ) $-4 \cdot (-3)^2$:

2.8. ԱՄՐՈՂՋ ԹՎԵՐԻ ՔԱՆՈՐԴԸ

Եթե a -ն և b -ն զրոյից տարբեր ամբողջ թվեր են, և $|a|$ -ն առանց մնացորդի բաժանվում է $|b|$ -ին, ապա a և b թվերի քանորդը հավասար է նրանց մոդուլների քանորդին՝ վերցրած «+» նշանով, եթե այդ թվերը նույն նշանի են և «-» նշանով, եթե նրանք հակառակ նշանի են:

$$\begin{aligned} \text{Օրինակ՝ } (-20) : (-5) &= +(20 : 5) = 4, & 40 : 5 &= 8, \\ 8 : (-2) &= -(8 : 2) = -4, & (-12) : 3 &= -(12 : 3) = -4: \end{aligned}$$

0-ի և ցանկացած $a \neq 0$ ամբողջ թվի քանորդը 0 է.

$$0 : a = 0 \quad (a \neq 0):$$

$$\text{Օրինակ՝ } 0 : (-5) = 0, \quad 0 : 3 = 0:$$

Ամբողջ թիվը 0-ի բաժանել հնարավոր չէ:

Գիտողություն: Ինչպես բնական թվերի դեպքում, ամբողջ թվերի համար նույնպես գրոյից տարբեր թվերի առանց մնացորդի բաժանումը ոչ միշտ է իրագործվում, այսինքն՝ ոչ միշտ է գտնվում այնպիսի ամբողջ թիվ, որ բաժանարարով բազմապատկելիս ստացվի բաժանելին: Գլուխ 3-ում կդիտարկվեն նոր՝ ռացիոնալ թվեր, և այդ ժամանակ գրոյից տարբեր ցանկացած ամբողջ թվերի քանորդը կլինի ռացիոնալ թիվ:

333. Ի՞նչ է նշանակում գրոյից տարբեր a և b ամբողջ թվերի քանորդ, եթե $|a|$ -ն առանց մնացորդի բաժանվում է $|b|$ -ի:

334. Ի՞նչ քանորդ է ստացվում, երբ 0-ն բաժանում են 0-ից տարբեր որևէ ամբողջ թվի:

335. Հնարավո՞ր է ամբողջ թիվը բաժանել 0-ի:

336. Կատարե՛ք բաժանումը.

- ա) $234 : 6$, բ) $744 : 8$, գ) $1794 : 23$,
 դ) $2997 : 37$, ե) $9268 : 331$, զ) $21333 : 547$:

337. Հաշվե՛ք.

- ա) $576 \cdot 23 - 766 \cdot 35$, բ) $849 \cdot 18 - 783 \cdot 28$,
 գ) $136 \cdot 13 - (8416 + 1234)$, դ) $4736 : 4 - 1245 \cdot 5$

338. Գտե՛ք x թվի նշանը, եթե.

- ա) $x \cdot (-8) = 400$, բ) $(-10) \cdot x = -420$, գ) $x \cdot 5 = -60$,
 դ) $12 \cdot x = 144$, ե) $(-x) \cdot 15 = 300$, զ) $(-x) \cdot (-6) = 96$:

339. Որոշե՛ք քանորդի նշանը.

- ա) $400 : (-8)$, բ) $(-420) : (-10)$, գ) $(-60) : 15$, դ) $144 : 12$:

Կատարե՛ք բաժանումը (**326**, **327**).

340. ւ) $(+ 60) : (-10) = -(60 : 10) = -6$:

- բ) $(-20) : 5$, գ) $(-50) : 10$, դ) $(-80) : (-20)$,
 ե) $(-100) : (-25)$, զ) $30 : (-15)$, է) $64 : (-8)$:

341. ա) $200 : (-40)$, բ) $(-500) : 100$, գ) $720 : (-90)$,
 դ) $(-810) : (-9)$, ե) $(-560) : (-70)$, զ) $(-480) : 60$:

342. Կատարե՛ք բաժանումը բերված նմուշային օրինակի եղանակով.

$$7227 : (-9) = -(7227 : 9), \quad \begin{array}{r} 7227 \overline{) 9} \\ \underline{} \\ \end{array}$$

- ա) $(-711) : 9$, բ) $1332 : (-3)$, գ) $(-2316) : (-12)$,
 դ) $(-1302) : 42$, ե) $(-2205) : (-7)$, զ) $3208 : (-8)$:

343. x -ի n -րդ արժեքի համար է ճիշտ հավասարությունը.

ա) $x \cdot (-12) = 36$,

բ) $(-13) \cdot x = -143$,

գ) $x \cdot (-15) = 465$,

դ) $14 \cdot x = -294$,

ե) $x : 8 = 7$,

զ) $x : 6 = -42$,

է) $x : (-7) = -9$,

ը) $x : (-11) = -352$,

թ) $48 : x = 6$,

ժ) $56 : x = -8$,

ի) $(-64) : x = 8$,

լ) $(-68) : x = -4$:

344. Կատարե՛ք գործողությունները հետևյալ նմուշօրինակի ձևով.

ա) $13 \cdot 15 - 28 \cdot 25$

$$\begin{array}{r} 1) \quad \times \quad 13 \\ \quad \quad 15 \\ \hline \quad \quad 65 \\ + \quad 13 \\ \hline \quad 195 \end{array}$$

$$\begin{array}{r} 2) \quad \times \quad 28 \\ \quad \quad 25 \\ \hline \quad \quad 140 \\ + \quad 56 \\ \hline \quad 700 \end{array}$$

$$\begin{array}{r} 3) \quad - \quad 700 \\ \quad \quad 195 \\ \hline \quad \quad 505 \end{array}$$

Պատասխան՝ -505:

բ) $679 \cdot 13 - 846 \cdot 15$,

գ) $849 \cdot 18 - 684 : 19$,

դ) $4074 : 42 - 12 \cdot 59$,

ե) $3612 : 12 - 8445 : 15$:

345. Հաշվե՛ք

ա) $43 \ 212 : 78 - 407 \cdot 720 + 350 - 509$,

բ) $164 \cdot 756 + 148 \ 916 - 564 \cdot 702 + 48 \ 762 : 86$,

գ) $(24 \ 968 + 11 \ 648) : (768 - 1564)$,

դ) $37 \ 115 : 65 - 72 \ 675 : 85$:

2.9. ԲԱՇԽԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

Կամայական a , b , c ամբողջ թվերի համար ճիշտ է **բաշխական օրենքը**.

$$(a+b) \cdot c = a \cdot c + b \cdot c:$$

Ապացույցը հանգում է նույն օրենքի ճշտությանը ոչ բացասական ամբողջ թվերի համար: Օրինակ՝ ապացուցենք հավասարությունը.

$$((-3)+(-2)) \cdot (-7) = (-3) \cdot (-7) + (-2) \cdot (-7):$$

$$\begin{aligned} \text{Իրոք, } ((-3)+(-2)) \cdot (-7) &= (-(3+2)) \cdot (-7) = (3+2) \cdot 7 = \\ &= 3 \cdot 7 + 2 \cdot 7 = (-3) \cdot (-7) + (-2) \cdot (-7): \end{aligned}$$

Բաշխական օրենքը ճիշտ է նաև մի քանի գումարելիների համար:
Օրինակ՝

$$(3+5+(-7))\cdot(-2) = 3\cdot(-2)+5\cdot(-2)+(-7)\cdot(-2):$$

$a\cdot c+b\cdot c$ գումարից $c\cdot(a+b)$ արտադրյալին անցումն անվանում են **ընդհանուր արտադրիչի դուրսբերում փակագծից**:

Օրինակ 1: Ընդհանուր արտադրիչը դուրս բերենք փակագծից.

$$3\cdot 35+3\cdot(-65):$$

$$3\cdot 35+3\cdot(-65) = 3\cdot(35+(-65)) = 3\cdot(35-65):$$

$$\text{Պարասխան՝ } 3\cdot(35-65):$$

Օրինակ 2: Հաշվենք $(-49)\cdot(-96)+86\cdot(-49)$ արտահայտության արժեքը:

Նկատենք, որ յուրաքանչյուր գումարելին ունի (-49) արտադրիչը: Դուրս բերենք այն փակագծից.

$$(-49)\cdot(-96)+86\cdot(-49) = (-49)\cdot((-96)+86) = (-49)\cdot(-10) = 490:$$

Այս օրինակը ցույց է տալիս, որ ընդհանուր արտադրիչը փակագծից դուրս բերելը որոշ դեպքերում թույլ է տալիս խուսափել մեծածավալ հաշվարկներից:

346. Արտադրյալը գրե՛ք գումարի (տարբերության) տեսքով.

$$\text{ա) } 5\cdot(38+17) = 5\cdot 38+5\cdot 17:$$

բ) $17\cdot(31+16)$,

գ) $(28+37)\cdot 56$,

դ) $(72+98)\cdot 12$,

ե) $(49-17)\cdot 12$,

զ) $8\cdot(57-38)$,

է) $17\cdot(28+31)$:

347. Ընդհանուր արտադրիչը դո՛ւրս բերե՛ք փակագծից.

$$\text{ա) } 15\cdot 12+15\cdot 49 = 15\cdot(12+49)$$

բ) $57\cdot 39+57\cdot 64$,

գ) $39\cdot 42+28\cdot 42$,

դ) $73\cdot 57+79\cdot 57$,

ե) $13\cdot 195-13\cdot 41$,

զ) $27\cdot 48-19\cdot 48$,

է) $54\cdot 88-54\cdot 87$:

348. Հաշվե՛ք հարմար եղանակով.

ա) $350\cdot 46+250\cdot 46$,

բ) $728\cdot 49-528\cdot 49$,

գ) $52\cdot 100-52\cdot 99$,

դ) $99\cdot 48+1\cdot 48$,

357. ա) $4 \cdot (-25 + 76 + 24)$, ք) $(25 - 62 - 38) \cdot (-4)$,
 գ) $(7 - 125 + 13) \cdot (-8)$, դ) $8 \cdot (-8 + 100 - 22 + 25)$:
358. Բերված նմուշային օրինակի եղանակով ընդհանուր արտադրիչը դո՛ւրս բերեք փակագծից.

$$\text{ա) } 45 \cdot 13 - 45 \cdot 81 = 45 \cdot (13 - 81):$$

- ք) $49 \cdot 57 - 49 \cdot 570$, գ) $58 \cdot 64 - 99 \cdot 64$,
 դ) $(-53) \cdot 48 - (-53) \cdot 59$, ե) $(-45) - 12 + 95 \cdot (-45)$,
 զ) $-53 \cdot 48 - 57 \cdot 48$, լ) $-45 - 13 - 45 \cdot 27$:
359. Ընդհանուր արտադրիչը փակագծից դո՛ւրս բերեք «+» նշանով.

$$\text{ա) } 4 \cdot 52 - 4 \cdot (-95) = 4 \cdot (52 - (-95)) = 4 \cdot (52 + 95):$$

- ք) $-16 \cdot 17 - 16 \cdot 18$, գ) $49 \cdot 19 - 19 \cdot 91$,
 դ) $-88 \cdot 35 - 77 \cdot 35$, ե) $73 \cdot 37 - 73 \cdot 73$,
 զ) $-57 \cdot 33 + 48 \cdot 33$, լ) $99 \cdot 98 + 99 \cdot 100$:
360. Ընդհանուր արտադրիչը փակագծից դո՛ւրս բերեք «-» նշանով.

$$\text{ա) } 4 \cdot 52 - 4 \cdot (-95) = (-4) \cdot (-52 - 95):$$

361. Հաշվե՛ք.
- ա) $59 \cdot 64 + 59 \cdot 36$, ք) $72 - 128 - 72 \cdot 228$,
 գ) $63 \cdot 356 - 556 \cdot 63$, դ) $-99 - 12 - 99 \cdot 88$,
 ե) $-67 \cdot 85 - 67 \cdot 115$, զ) $41 \cdot 91 - 91 \cdot 51$:
362. Ցո՛ւյց տվե՛ք, որ տրված արտահայտությունը բաժանվում է նշված թվին.
- ա) $43 \cdot 15 - 55 \cdot 15 + 34 \cdot 15$, 22
 բ) $12 \cdot 17 - 16 \cdot 17 + 13 \cdot 17$, 9
 գ) $99 \cdot 51 - 99 \cdot 91 + 69 \cdot 99$, 29
 դ) $63 \cdot 23 - 32 \cdot 63 + 22 \cdot 63$, 13:

363. Հաշվե՛ք.
- ա) $42 \cdot 53 - 32 \cdot 53 - 42 \cdot 63 + 32 \cdot 63$,
 բ) $79 \cdot 45 + 79 \cdot 55 - 89 \cdot 45 - 89 \cdot 55$,
 գ) $88 \cdot 75 - 12 \cdot 45 + 12 \cdot 75 - 88 \cdot 45$,
 դ) $392 \cdot 23 - 492 \cdot 23 + 392 \cdot 77 - 492 \cdot 77$:

2.10. ՓԱԿԱԳԾԵՐԻ ԲԱՅՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԱՌՈՒՄԸ

ՓԱԿԱԳԾԵՐԻ ՄԵՋ

Այնպիսի արտահայտությունը, ինչպես $(-3+6-1)$ -ը, հաճախ անվանում են գումար, որովհետև այն կարելի է նաև գրել $(-3)+(+6)+(-1)$ գումարի տեսքով:

Ելնելով

$$+a = (+1) \cdot a$$

հավասարությունից, որը ճիշտ է ցանկացած a ամբողջ թվի համար, կարող ենք ստանալ հետևյալ հավասարությունները.

$$+5 = 5, \quad +(-5) = -5, \quad +(3+5) = 3+5, \quad +(5-2) = 5-2, \\ +(-3+6-1) = -3+6-1:$$

Ստանանք դրանցից մեկը.

$$+(-3+6-1) = (+1) \cdot (-3+6-1) = \\ = (+1) \cdot (-3) + (+1) \cdot 6 + (+1) \cdot (-1) = -3+6-1:$$

Այսպիսով $+(-3+6-1) = -3+6-1$ հավասարությունը ճիշտ է:

Ասում են, որ հավասարման ձախ մասում գումարը **ներառված է (վերցված է) փակագծերի մեջ**, իսկ աջում՝ **փակագծերը բացված են**:

Եթե ունենք փակագծի մեջ ներառված գումար, և փակագծից առաջ «+» նշան է դրված, ապա փակագծերը բացելիս գումարելիների նշանները նույնն են մնում:

Օրինակ՝ $+(-7+3-4) = -7+3-4$:

Եթե ունենք մի քանի թվերի գումար, ապա կարելի է այն ամբողջությամբ ներառել փակագծերի մեջ և ստացված արտահայտության առջև դնել «+» նշանը:

Օրինակ՝ $-3+8-7 = +(-3+8-7)$:

Ելնելով $-a = (-1) \cdot a$ հավասարությունից և կիրառելով բաշխական օրենքը՝ կարելի է բացել նաև այնպիսի փակագծերը, որոնցից առաջ դրված է «-» նշան:

Օրինակ՝

$$-(2-5) = (-1) \cdot (2-5) = (-1) \cdot 2 + (-1) \cdot (-5) = -2+5,$$

$$-(6-4) = (-1) \cdot (6-4) = (-1) \cdot 6 - (-1) \cdot 4 = -6+4:$$

Եթե ունենք փակագծի մեջ ներառված գումար, և փակագծից առաջ «-» նշան է դրված, ապա փակագծերը բացելիս գումարելիների նշանները փոխվում են՝ պլյուսը դառնում է մինուս, մինուսը՝ պլյուս:

Օրինակ՝ $-(-8+3-11) = +8-3+11$:

Հաշվե՛ք (374, 375).

374. ա) $(456-75)-25$, ր) $-(728-49)+51$,
 գ) $(-238+742)-42$, դ) $-(-356+145)-56$:
375. ա) $(7 \cdot 95-900)-7 \cdot 95$, ր) $-(795-9 \cdot 99)-99 \cdot 9$,
 գ) $(-48+101-29)-101+29$, դ) $-(-79-39+81)+81-39$:

376. Արտագրե՛ք՝ լրացնելով բացթողումները.

$$\text{ա) } 45-36 = +(45-36):$$

- բ) $45-36 = -(\dots)$, գ) $-79+11 = +(\dots)$,
 դ) $-79+11 = -(\dots)$, ե) $38+59 = +(\dots)$,
 զ) $-17-81 = -(\dots)$, է) $39-70 = -(\dots)$:

377. Առաջին երկու գումարելիին ներառե՛ք փակագծերի մեջ՝ փակագծերից առաջ դնելով «+» նշանը.

$$45-64-12+99 = +(45-64)-12+99:$$

- ա) $79-48+15-8$, ր) $-56+38-12+100$,
 գ) $43+59-35-11$, դ) $-43-59+35+11$,
 ե) $42-79+13-1$, զ) $-57+48-17+23$:

378. Առաջին երկու գումարելիին ներառե՛ք փակագծերի մեջ՝ փակագծերից առաջ դնելով «-» նշանը.

- ա) $79-48+15-8$, ր) $-56+38-12+100$,
 գ) $43+59-35-11$, դ) $-43-59+35+11$,
 ե) $42-79+13-1$, զ) $-57+48-17+23$:

2.11. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻ ՔԱՆԻ ԳՈՒՄԱՐԵԼԻՆԵՐ ՈՒՆԵՅՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Նախորդ կետում բերվեցին այնպիսի փակագծերի բացման կանոնները, որոնցից առաջ «+» կամ «-» նշան էր դրված: Բայց հանդիպում են նաև այնպիսի գումարներ, որոնցում փակագծերից առաջ տեղադրված «+» և «-» նշաններն արտահայտում են գումարման և հանման գործողություններ: Պարզվում է, որ ուսումնասիրված կանոններն այս դեպքում նույնպես կիրառելի են.

$$a+(b-c) = a+b-c, a-(b-c) = a-b+c,$$

որտեղ a -ն, b -ն ու c -ն ամբողջ թվեր են:

$$\text{Օրինակ՝ } 9+(8-3) = 9+8-3,$$

$$9-(7-3) = 9-7+3:$$

Մի քանի գումարելիների գումարը հաշվելիս օգտագործվում են փակագծերի բացման, փակագծերի մեջ ներառման կանոնները և գումարման օրենքները: Երբեմն սկզբից գումարում են դրական, ապա

բացասական գումարելիները և գտնում են ստացված տարբեր նշանի թվերի գումարը՝ կիրառելով դրան համապատասխանող կանոնը:

Օրինակ՝

$$78 - 89 + 32 - 11 = (78 + 32) + (-89 - 11) = 110 + (-100) = 110 - 100 = 10:$$

Բայց կարելի է այլ կերպ էլ հաշվել.

$$78 - 89 + 32 - 11 = (78 - 89) + (32 - 11) = (-11) + 21 = 10:$$

379. Ի՞նչ կանոններով են բացում փակագծերը, եթե նրանց առջև դրված նշանը գումարման կամ հանման գործողություն է ցույց տալիս:

380. Մի քանի գումարելիների գումարը հաշվելու համար ի՞նչ կանոններ ու օրենքներ են կիրառվում:

381. Բացե՛ք փակագծերը.

- | | |
|------------------------------|------------------------------|
| ա) $49 - (38 - 5),$ | բ) $-32 + (78 - 9),$ |
| գ) $72 + (-32 + 9),$ | դ) $-63 - (-63 + 1),$ |
| ե) $(79 - 39) - (79 - 48),$ | զ) $(37 - 49) - (87 - 59),$ |
| է) $-(45 - 64) + (38 - 24),$ | ը) $-(-35 + 2) + (-35 - 8):$ |

382. Բացե՛ք փակագծերը և հաշվե՛ք.

- | | |
|-----------------------------|-------------------------------|
| ա) $108 - (108 - 5),$ | բ) $-49 - (-49 + 2),$ |
| գ) $-56 + (-98 + 56),$ | դ) $100 - (-5 + 100),$ |
| ե) $(79 - 81) - (39 - 81),$ | զ) $(-78 + 23) + (27 + 78),$ |
| է) $(-39 + 15) - (5 - 39),$ | ը) $(105 - 48) - (62 + 105):$ |

383. Հաշվե՛ք՝ փակագծերը բացելով միայն այն դեպքում, երբ դա դյուրացնում է հաշվարկները.

- | | |
|------------------------|-----------------------|
| ա) $79 - (63 + 7),$ | բ) $43 + (23 + 77),$ |
| գ) $79 - (79 - 7),$ | դ) $43 + (77 - 43),$ |
| ե) $102 - (56 + 44),$ | զ) $102 - (102 - 5),$ |
| է) $93 - (68 + 93),$ | ը) $-72 - (99 + 1),$ |
| թ) $48 - (11 + 19),$ | ժ) $48 - (18 + 19),$ |
| ի) $-56 + (96 + 9),$ | լ) $59 + (96 + 4),$ |
| խ) $52 - (32 - 41),$ | ծ) $73 - (68 - 8),$ |
| կ) $-25 - (-45 + 19),$ | հ) $-49 - (11 - 68):$ |

384. Վերջին երկու գումարելիները ներառե՛ք փակագծերի մեջ երկու եղանակով՝ փակագծերից առաջ մի անգամ դնելով «+» նշանը, մյուս անգամ՝ «-»:

- | | |
|--------------------|--------------------|
| ա) $37 + 12 + 13,$ | բ) $45 - 2 - 12,$ |
| գ) $5 - 28 + 22,$ | դ) $76 + 38 - 52:$ |

385. Հաշվե՛ք երկու եղանակով՝ մի անգամ կիրառելով փակագծերը բացելու կամ փակագծերի մեջ ներառելու կանոնը, մյուս անգամ՝ առանց այդ կանոնները կիրառելու.

ա) $48-19-1$,

գ) $48-(28-43)$,

386. Հաշվեք՝ ընտրելով հարմար եղանակ.

ա) $84-(44+28)$,

գ) $826-(231+269)$,

ե) $83-23-29$,

է) $236-136-92$,

բ) $93-17-13$,

դ) $88-(18-30)$:

բ) $94-(44+26)$,

դ) $728-(328-179)$,

գ) $83-21-29$,

ը) $236-108-92$:

387. Հաշվեք.

ա) $-(98+49)-(102-49)$,

գ) $(149+237)-(137+49)$,

ե) $(49+35)-(49-35)$,

է) $(76+28)-(76-28)$,

բ) $(123-254)-(23-354)$,

դ) $-(95+105)-(398-98)$,

գ) $(48+15)-(48-15)$,

ը) $(72+29)-(72-29)$:

2.12. ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԿՈՌԴԻՆԱՏՅՈՒՆ ԱՌԱՆՑՔԻ ՎՐԱ

Մենք արդեն գիտենք, թե բնական թվերն ու 0-ն ինչպես են պատկերվում կոորդինատային ձառագայթի վրա: Ամբողջ թվերը նույնպես կարելի է հարմար ձևով երկրաչափորեն պատկերել: Վերցնենք մի ուղիղ, նրա վրա նշենք մի 0 կետ, որը համարենք 0 թվի համապատասխանը: Այդ կետն անվանում են **սկզբնակետ** կամ **հաշվարկման սկիզբ**: Ինչպես գիտենք, ուղիղն 0 կետով տրոհվում է հակադիր ուղղություններով երկու ձառագայթների: Ընտրենք այդ ուղղություններից մեկը՝ նշելով սլաքով և անվանելով **դրական ուղղություն**: Ընտրենք **միավոր հատված**:

Ուղիղը, որի համար ընտրված են հաշվարկման սկիզբ, հաշվարկման (դրական) ուղղություն և միավոր հատված, կոչվում է կոորդինատային առանցք:

Սովորաբար կոորդինատային առանցքը պատկերում են հորիզոնական ուղղի տեսքով՝ որպես դրական վերցնելով դեպի աջ ուղղությունը:

0 սկզբնակետով երկու ձառագայթներից մեկը, որը գրոյից աջ է, (նկար 30), անվանում են **դրական կոորդինատային կիսաառանցք (ձառագայթ)**, մյուսը՝ նկար 30-ում գրոյից ձախն անվանում են **բացասական կոորդինատային կիսաառանցք (ձառագայթ)**:



Նկար 30

Կորդինատային առանցքի վրա ամբողջ թվերը պատկերվում են կետերով: O կետը, որով պատկերվում է զրո թիվը, անվանում են նաև զրո կետ կամ զրո կորդինատով կետ և գրում են այս կերպ՝ $O (0)$:

Կամայական $n (n \neq 0)$ ամբողջ թիվը կորդինատային առանցքի վրա պատկերում են այն կետով, որի հեռավորությունը զրո կետից $|n|$ է, և որը գտնվում է դրական կիսաառանցքի վրա, եթե n -ը դրական է ($n > 0$), և բացասական կիսաառանցքի վրա, եթե n -ը բացասական է ($n < 0$): Այդ կետն անվանում են n կետ, կամ n կորդինատով կետ, իսկ n թիվն անվանում են այդ կետի **կորդինատ**:

Օրինակ՝ նկար 31-ում պատկերված են 4 կորդինատով A կետը և -2 կորդինատով B կետը, գրում են՝ $A (4)$, $B (-2)$:



Նկար 31

Եթե m -ը և n -ը ամբողջ թվեր են ու $m > n$, ապա.

- 1) m կետը կորդինատային առանցքի վրա ավելի աջ է, քան n -ը,
- 2) m և n կետերի հեռավորությունը $m - n$ է:

Օրինակ՝ նկար 32-ում կորդինատային առանցքի վրա նշված են $A(7)$ և $B(-4)$ կետերը: Քանի որ $7 > -4$, ապա A կետը կորդինատային առանցքի վրա B -ից աջ է և

$$AB = 7 - (-4) = 7 + 4 = 11, \quad BO = 0 - (-4) = 0 + 4 = 4:$$



Նկար 32

Եթե տրված երկու կետերի կորդինատները հակադիր թվեր են, ապա այդ կետերը զրո կետից ունեն հավասար հեռավորություններ, բայց տարբեր կիսաառանցքների վրա են (օրինակ՝ B և C կետերը նկար 32-ում):


388. Ի՞նչն են անվանում.

- ա) կորդինատային առանցք,
- բ) դրական կորդինատային կիսաառանցք,
- գ) բացասական կորդինատային կիսաառանցք:

389. Ի՞նչ են անվանում զրո թիվը պատկերող կետը:

390. Ինչպե՞ս է որոշվում կորդինատային առանցքի m և n կետերի հեռավորությունը, եթե ա) $m > n$, բ) $m < n$:

391. Ո՞ր կետերն են, որ 0 կետից նույն հեռավորությունն ունեն, բայց տարբեր կիսաառանցքների վրա են:
392. Նկար 33-ում կոորդինատային առանցքի որոշ կետեր նշանակված են A, B, C, D և E տառերով: Նշե՛ք նրանց կոորդինատները:




393. Գտե՛ք հատվածի երկարությունը (նկար 33).
- ա) OA, բ) OB, գ) OC, դ) OD, ե) AC,
զ) AE, յ) OE, լ) CB, թ) DA:
394. Գծե՛ք 1 սմ միավոր հատվածով կոորդինատային առանցք: Նշե՛ք A(-5), B(7), C(4), D(-4) կետերը: Հաշվե՛ք հետևյալ հատվածի երկարությունը.
- ա) OA, բ) OB, գ) BC, դ) BD, ե) AD:
Արդյունքը ստուգե՛ք սանտիմետրային քանոնով:
395. Գծե՛ք կոորդինատային առանցք՝ որպես միավոր վերցնելով տետրի մեկ վանդակը: Նշե՛ք O(0), A(5), B(-8), C(9), D(-2) կետերը: Հաշվե՛ք նշված հատվածի երկարությունը.
- ա) OA, բ) OB, գ) AB, դ) AC, ե) DC:
396. Գտե՛ք կոորդինատային առանցքի m և n կետերի հեռավորությունը, եթե.
- ա) $m = 7$, $n = -3$ բ) $m = 3$, $n = -7$
գ) $m = -8$, $n = 0$ դ) $m = -8$, $n = 8$:
397. Կոորդինատային առանցքի վրա նշանակված են 0 և 3 կետերը: Կարկինի օգնությամբ նշե՛ք -3, 6, -6, 9 և -9 կետերը:

2.13. ԿՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ: ԳՐԱՑԻԿՆԵՐ

Առօրյա կյանքում հաճախ հարկ է լինում թվերի միջոցով գտնել տարբեր առարկաների տեղերը: Օրինակ՝ դահլիճում նստատեղերը որոշում են երկու թվով. շարքի համարով և այդ շարքում աթոռի համարով, իսկ որոշակի փողոցում ապրող մարդու հասցեն որոշում են շենքի համարով և այդ շենքում բնակարանի համարով:

Այժմ ծանոթանանք, թե ինչպես են կոորդինատներ վերագրում հարթության կետերին: Այդ նպատակով հարթության վրա վերցնենք նույն O սկզբնակետն ու միավորն ունեցող երկու փոխուղղահայաց կոորդինատային առանցքներ, ինչպես նկար 34 ա)–ում: Հորիզոնական առանցքն անվանենք արքիսների առանցք կամ x -երի առանցք, իսկ ուղղահիգ առանցքը՝ օրդինատների առանցք կամ y -ների առանցք:

Ընդունված է արացիաների առանցքի աջ կիսաառանցքը վերցնել որպես դրական կիսաառանցք, իսկ օրդինատների առանցքի վրա որպես դրական կիսաառանցք վերցնել վերևի կիսաառանցքը:



Նկար 34

Հարթության վրա այսպես կառուցված կորդինատային առանցքների փոխուղղահայաց գույզն անվանում են **ուղղանկյուն կորդինատային համակարգ**, իսկ հարթությունն այդ համակարգի հետ՝ **կորդինատային հարթություն**:

Այժմ ենթադրենք ունենք կորդինատային հարթության որևէ A կետ: Ենթադրենք A կետից արացիաների առանցքին տարած ուղղահայաց ուղիղն այդ առանցքը հատում է E(4) կետում, իսկ օրդինատների առանցքին տարած ուղղահայաց ուղիղն օրդինատների առանցքը հատում է F(2) կետում: E կետի կորդինատը՝ 4-ը, անվանենք A կետի արացիա, իսկ F-ի կորդինատը՝ 2-ը, A կետի օրդինատ և գրենք՝ A(4; 2): 4-ը և 2-ը միասին՝ անվանենք A կետի կորդինատներ (նկար 34 ա):

Այսպիսով՝ A կետին համապատասխանեցրինք (4; 2) **թվազույգը**:

Իմանալով կետի կորդինատները՝ կարող ենք գտնել նրա դիրքը հարթության վրա: Օրինակ, ենթադրենք B կետն ունի (-3; 4) կորդինատները: Արացիաների առանցքի -3 կետում տանենք այդ առանցքին ուղղահայաց ուղիղ, իսկ օրդինատների առանցքի 4 կետում՝ օրդինատների առանցքին ուղղահայաց ուղիղ (նկար 34 բ): Հեշտ է ստուգել, որ այդ երկու ուղիղների հատման B կետի արացիսը կլինի -3, իսկ օրդինատը՝ 4:

Մի օրինակով ցույց տանք, թե ինչպես կարելի է կորդինատային հարթության վրա գրաֆիկի միջոցով ներկայացնել երկու մեծության միջև առկա կապը:

Ստորև բերված նկարում գրաֆիկի միջոցով ներկայացված է հիվանդի ջերմաստիճանի փոփոխությունը՝ հիվանդության տարբեր օրերին: Հիվանդության յուրաքանչյուր օրվա սկզբում չափել են հիվանդի

- 407.** ա) Կոորդինատային հարթության վրա պատկերե՛ք $A(5; 3)$, $B(-2; 3)$, $C(-2; -2)$, $D(5; -2)$ գագաթներով $ABCD$ ուղղանկյունը: Հաշվե՛ք այդ ուղղանկյան պարագիծն ու մակերեսը:
- բ) Կոորդինատային հարթության վրա նշե՛ք $A(-8; 3)$, $B(1; 3)$, $C(1; -2)$ կետերը: Կառուցե՛ք D կետն այնպես, որ ստացվի $ABCD$ ուղղանկյուն: Հաշվե՛ք այդ ուղղանկյան պարագիծն ու մակերեսը:


2.14. ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1 և -1 թվերը տվյալ կոորդինատային առանցքի կետերով պատկերելու համար հարկավոր է այդ առանցքի վրա նրա սկզբնակետից հավասարահեռ երկու կետ նշել (նկար 35): Այդպիսի կետերի մասին ասում են, որ նրանք համաչափ (սիմետրիկ) են O կետի նկատմամբ:



Նկար 35

Ընդհանրապես A և B կետերը կոչվում են **համաչափ O կետի նկատմամբ**, եթե այդ երեք կետերը մի ուղղի վրա են, և O -ն AB հատվածը բաժանում է երկու հավասար հատվածների: Այդ դեպքում ասում են, որ **O -ն AB հատվածի միջնակետն է**:




Նկար 36

Նկար 36-ում շրջանագծի O կենտրոնով անցնող ուղիղը շրջանագիծը հատում է A և B կետերում: AO և OB հատվածները հավասար են, ուրեմն A և B կետերը համաչափ են O կետի նկատմամբ:


Նկատենք, որ եթե նկար 36-ի A կետը 180° -ով պտտենք O կետի շուրջը, ապա այն կհամատեղվի B կետի հետ:

Դիցուք հարթության վրա ունենք F_1 և F_2 պատկերներն ու O կետը: Եթե O կետի շուրջը 180° պտույտի դեպքում պատկերներից մեկը համատեղվում է մյուսին, ապա այդպիսի պատկերները կոչվում են **O կետի նկատմամբ համաչափ պատկերներ**: Այդպիսի համաչափությունն անվանում են **կենտրոնային համաչափություն**: Եթե F_1 և F_2 պատկերները կենտրոնային համաչափ են, ապա նրանք իրար վրա դնելիս կարող են համընկնել, ուրեմն նաև հավասար են $F_1 = F_2$:

Կենտրոնային համաչափ կամայական պատկերները հավասար են:



Նկար 37




Նկար 38


Նկար 37-ում և 38-ում քերված են կենտրոնային համաչափ F_1 և F_2 պատկերների օրինակներ. երկու դեպքում էլ $F_1 = F_2$:

Խնդիր 1: Տրված են AB հատվածը և նրան չպատկանող O կետը (նկար 39): Կառուցենք O կետի նկատմամբ AB հատվածին համաչափ A_1B_1 հատվածը:


Լուծում: Տանենք AO ձառագայթը և նրա վրա կարկինով անջատենք OA -ին հավասար OA_1 հատվածը: A_1 -ը կլինի A -ի համաչափն O կետի նկատմամբ: Նման ձևով կառուցենք B կետին O -ի նկատմամբ համաչափ B_1 կետը (նկար 40): Միացնելով A_1 և B_1 կետերը՝ կստանանք O -ի նկատմամբ AB -ին համաչափ A_1B_1 հատվածը (նկար 41):




Նկար 39



Նկար 40




Նկար 41



Նկար 42


Խնդիր 2: Տրված են ABC եռանկյունն ու նրանից դուրս գտնվող O կետը (նկար 42): Կառուցենք O կետի նկատմամբ ABC եռանկյանը համաչափ $A_1B_1C_1$ եռանկյունը:

Խնդիրը լուծելու համար բավական է նախորդ խնդրի լուծման եղանակով կառուցել O կետի նկատմամբ A , B , C կետերին համաչափ A_1 , B_1 , C_1 կետերը: Ստացված $A_1B_1C_1$ եռանկյունը կլինի որոնելին (նկար 43):




Նկար 43


Հարթության այն պատկերը, որը տրված O կետի շուրջը 180° պտտելու դեպքում համընկնում է ինքն իր հետ, անվանում են O կետի նկատմամբ համաչափ պատկեր: Ասում են նաև, որ այդ պատկերն ունի համաչափության կենտրոն (տվյալ դեպքում՝ O -ն): Համարվում է, որ համաչափության կենտրոնն ինքն իրեն համաչափ է (իր նկատմամբ):




Նկար 44



Նկար 45



Նկար 46




Նկար 47

Օրինակ՝ AB հատվածը համաչափ է իր միջնակետի նկատմամբ (նկար 44), $ABCD$ ուղղանկյունը համաչափ է իր անկյունագծերի հատման կետի նկատմամբ (նկար 45), O կենտրոնով շրջանագիծը համաչափ է իր կենտրոնի նկատմամբ (նկար 46): Ուղիղը համաչափ է իր ցանկացած կետի նկատմամբ:

Հարթության պատկերների համար, բացի կենտրոնային համաչափությունից, գոյություն ունի նաև համաչափության մի այլ տեսակ՝ համաչափություն ուղղի նկատմամբ (առանցքային համաչափություն):

Նկար 47-ում տրված են F_1 և F_2 պատկերներն ու a ուղիղը: Եթե նկարի հարթությունը ծալենք առողով, ապա F_1 և F_2 պատկերները կհամատեղվեն: Այդպիսի պատկերներն անվանում են **ուղղի նկատմամբ համաչափ պատկերներ**:

Նկար 48-ում դիտարկվում է նույն F_1 պատկերն ու b ուղիղը: Եթե նկարի հարթությունը ծալենք b ուղղով, ապա F_1 պատկերի մի մասը կհամատեղվի նրա մյուս մասի հետ: Այդպիսի պատկերն անվանում են **համաչափության առանցք**, իսկ համաչափության այդ տեսակը՝ **առանցքային համաչափություն**:



Նկար 48



Նկար 49



Նկար 50



Նկար 51



Նկար 52


Համաչափությունը հաճախ հանդիպում է բնության մեջ՝ ծառերի տերևներին, թիթեռնիկների թևերին, ձյան փաթիլներին հաղորդելով հատուկ գեղեցկություն: Պատահական չէ, որ Հին Հայաստանում «համաչափություն» բառն օգտագործվում էր ամբողջում նրա մասերի տեղաբաշխման «գեղեցկության», «համակողմանիության», «համանմանության» իմաստներով: Նկար 49-ում և նկար 50-ում պատկերված են թիսկենու տերև և թիթեռ:

Առանցքային համաչափությունը հաճախ օգտագործվում է գինանշանների և խորհրդանիշերի ստեղծման ժամանակ: 51 և 52 նկարներում պատկերված են Ռուսաստանի Դաշնության գինանշանը և Խնայբանկի խորհրդանիշը, որոնցից յուրաքանչյուրը համաչափության առանցք ունի:


Հայաստանում հնուց ի վեր համաչափությունը լայնորեն կիրառվել է ճարտարապետությունում, գորգագործությունում, մանրանկարչությունում, ասեղնագործությունում և այլ ասպարեզներում:

Առանցքային համաչափությունը հատուկ է երկրաչափական շատ պատկերների: Օրինակ՝ նկար 53-ում պատկերված է BD ուղղի նկատմամբ համաչափ ABC հավասարաարուն եռանկյունը:

Կան և այնպիսի պատկերներ, որոնք ունեն համաչափության մի քանի առանցքներ: Օրինակ՝ ուղղանկյունն ունի երկու, քառակուսին՝ չորս, իսկ շրջանագիծը՝ անվերջ շատ համաչափության առանցք (նկար 54): Շրջանագծի կենտրոնով անցնող յուրաքանչյուր ուղիղ նրա համար համաչափության առանցք է:




Նկար 53



Նկար 54

Խնդիր 3: Տրված են a ուղիղը և նրա վրա չգտնվող M կետը (նկար 55 ա): Կառուցենք M կետին a ուղղի նկատմամբ համաչափ N կետը:

Լուծում: Անկյունային քանոնի միջոցով M կետով տանենք a ուղղին ուղղահայաց b ուղիղը: a և b ուղիղների հատման կետը նշանակենք K -ով (նկար 55 ք): MK ճառագայթի վրա կարկինով անջատենք MK -ին հավասար KN հատվածը: Ստացված N կետը կլինի M -ի համաչափը a ուղղի նկատմամբ (նկար 55 գ):



Նկար 55

Եթե տրված են ABC եռանկյունը և այդ եռանկյան հարթության a ուղիղը, ապա այդ ուղղի նկատմամբ A, B, C կետերին համաչափ կետերը նշանակելով A_1, B_1, C_1 , կստանանք ABC եռանկյանն a ուղղի նկատմամբ համաչափ $A_1 B_1 C_1$ եռանկյունը:

408. Կոորդինատային առանցքի n -րդ կետն է ա) 5-ի, բ) -7-ի, գ) 0-ի համաչափը սկզբնակետի նկատմամբ:

409. Բացատրե՛ք՝ n -րդ երկու կետերն են համարվում համաչափ տրված O կետի նկատմամբ:


410. Ըստ նկար 56-ի որոշե՛ք, թե որ կետն է O կետի նկատմամբ համաչափ հետևյալ կետին.

- ա) A , բ) B , գ) C ,
- դ) D , ե) M , զ) N , է) O :

411. Ըստ նկար 56-ի որոշե՛ք, թե որ հատվածն է O կետի նկատմամբ համաչափ հետևյալ հատվածին.

- ա) AB , բ) AD , գ) BC , դ) AO ,
- ե) BO , զ) OC , է) BD , ը) MN :

412. Ըստ նկար 56-ի որոշե՛ք, թե տրված պատկերն O կետի նկատմամբ որ պատկերին է համաչափ.




Նկար 56

- ա) BCO եռանկյունը, բ) ADC եռանկյունը,
- գ) CNO եռանկյունը, դ) $ABCD$ ուղղանկյունը,
- ե) $DCNM$ քառանկյունը:


413. Վանդակավոր թղթի վրա պատկերված է 3×4 չափերով ուղղանկյուն (նկար 57): Գտե՛ք այդ ուղղանկյունը երկու հավասար պատկերների

տրոհելու 5 եղանակ այնպես, որ կտրտման գծերն անցնեն վանդակավոր թղթի գծերով:

414. Վանդակավոր թղթի վրա գծագրե՛ք 3×5 չափերով ուղղանկյուն, որից հեռացված է կենտրոնական քառակուսին (նկար 58): Գտե՛ք ստացված պատկերը երկու հավասար մասերի բաժանելու 5 եղանակ այնպես, որ կտրտման գծերը անցնեն վանդակավոր թղթի գծերով:




Նկար 57




Նկար 58

415. Վանդակավոր թղթի վրա պատկերված է 6×6 չափերով քառակուսի: Գտե՛ք այդ քառակուսին երկու հավասար մասերի բաժանելու 6 եղանակ, որ կտրտման գծերը անցնեն վանդակների գծերով:
416. Կարելի՞ է արդյոք վանդակավոր թղթի վրա պատկերված 5×5 չափերով քառակուսին վանդակների գծերով կտրելով բաժանել երկու հավասար մասերի:
417. Ապացուցե՛ք, որ ուղղանկյան համաչափության կենտրոնով անցնող կամայական ուղիղ ուղղանկյունը տրոհում է երկու հավասար պատկերների:
418. Ապացուցե՛ք, որ տրված պատկերի համաչափության կենտրոնով անցնող կամայական ուղիղ պատկերը տրոհում է երկու հավասար մասերի:
419. Կառուցե՛ք O կենտրոնով շրջանագիծ: Նշե՛ք նրա վրա մի M կետ: Կառուցե՛ք M -ին O կետի նկատմամբ համաչափ N կետը: Ճի՞շտ է արդյոք, որ շրջանագծի կենտրոնը նրա համար համաչափության կենտրոն է:
420. Կառուցե՛ք O կենտրոնով շրջանագիծ: Շրջանագծի կետերն իր ներքին կետերի հետ միասին անվանում են շրջան: Ճի՞շտ է արդյոք, որ O -ն շրջանի համար համաչափության կենտրոն է:
421. Տրված են AB հատվածն ու նրանից դուրս O կետը: Կառուցե՛ք O կետի նկատմամբ A -ին համաչափ A_1 և B -ին համաչափ B_1 կետերը: Միացրե՛ք A_1 ու B_1 , A ու A_1 , B ու B_1 կետերը: Նշե՛ք O կետի նկատմամբ համաչափ հատվածների բոլոր զույգերը: Ստացված հատվածներից որո՞նք են իրենք իրենց համաչափ O կետի նկատմամբ:

- 422. Տրված է ABC եռանկյունը: Կառուցե՛ք A կետի նկատմամբ ABC եռանկյանը համաչափ եռանկյունը:
- 423. Տրված են ABC եռանկյունն ու նրա AB կողմի վրա գտնվող O կետը: Կառուցե՛ք O կետի նկատմամբ ABC եռանկյանը համաչափ եռանկյունը:
- 424. Ուղղանկյունից անջատել են քառակուսի, ինչպես ցույց է տրված նկար 59-ում: Տարե՛ք ուղիղ, որով ներկված պատկերը տրոհվի երկու հավասար մակերեսներով մասերի:
- 425. Մի անգամ Աստված Ագռավին մի կտոր պանիր ուղարկեց: Ենթադրենք, ի տարբերություն հայտնի առակի հերոսի, մեր Ագռավը ցանկացավ պանիրը կիսել Աղվեսի հետ: Ինչպե՞ս պետք է նա պանիրը կտրի ուղիղ գծով, եթե այն ունի կլոր անցքով ուղղանկյան տեսք (նկար 60): (Պանրի կտորի հաստությունը բոլոր մասերում նույնն է):




Նկար 59



Նկար 60

- 426. Ո՞ր երկու պատկերներն են համարվում համաչափ տրված a ուղղի նկատմամբ:
- 427. Ըստ նկար 61-ի որոշե՛ք, թե որ կետն է a ուղղի նկատմամբ համաչափ հետևյալ կետին.
 - ա) A, բ) B, գ) C, դ) D, ե) M:
- 428. Ըստ նկար 61-ի որոշե՛ք, թե որ հատվածն է a ուղղի նկատմամբ համաչափ հետևյալ հատվածին.
 - ա) AB, բ) BM, գ) BC, դ) CD,
 - ե) AN, զ) ND, է) AD:
- 429. Ըստ նկար 61-ի որոշե՛ք, թե որ պատկերն է a ուղղի նկատմամբ համաչափ հետևյալ ուղղանկյանը.
 - ա) ABMN, բ) MCDN, գ) ABCD:
- 430. Ո՞ր պատկերն են համարում տրված a ուղղի նկատմամբ համաչափ պատկեր:
- 431. Վանդակավոր թղթի վրա կառուցե՛ք 4×6 չափսերով ուղղանկյուն և նրա բոլոր համաչափության առանցքները: Քանի՞ համաչափության առանցք ունի ուղղանկյունը:



Նկար 61

432. Վանդակավոր թղթի վրա կառուցե՛ք քառակուսի և նրա բոլոր համաչափության առանցքները: Քանի՞ համաչափության առանցք ունի քառակուսին:
433. Կառուցե՛ք O կենտրոնով շրջանագիծ և նրա համաչափության որևէ երեք առանցք: Որքա՞ն համաչափության առանցքներ ունի շրջանագիծը:
434. Տեսրում արտանկարե՛ք այբուբենի այն տառերը, որոնք ունեն համաչափության առանցք: Նրանցից յուրաքանչյուրի համար նշեք համաչափության առանցքների քանակը:
- Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ
 Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ
 Զ Ռ Ս Վ Տ Ր Ց ՌԼ Փ Ք ԵՎ Օ Ֆ
435. Տեսրում գծե՛ք պատկեր, որն ունի.
 ա) մեկ համաչափության առանցք,
 բ) երկու համաչափության առանցք:
436. Թղթի թերթը երկտակ ծալե՛ք ուղիղ գծով, մկրատով կտրե՛ք առանցքային համաչափությամբ օժտված մի պատկեր:
437. Տրված են AB հատվածը և այդ հատվածը չհատող b ուղիղը: Կառուցե՛ք b ուղղի նկատմամբ AB հատվածին համաչափ MN հատվածը:
438. Տրված են b ուղիղն ու այն հատող AB հատվածը: Կառուցե՛ք b ուղղի նկատմամբ AB -ին համաչափ MN հատվածը:
439. Տրված են ABC եռանկյունը և այդ եռանկյունը չհատող b ուղիղը: Կառուցե՛ք b ուղղի նկատմամբ ABC եռանկյանը համաչափ եռանկյունը:
440. Տրված են ABC եռանկյունը և նրա երկու կողմերը հատող b ուղիղը: Կառուցե՛ք b ուղղի նկատմամբ ABC եռանկյանը համաչափ եռանկյունը:
441. Տրված են b ուղիղ և այն հատող շրջանագիծ: Կառուցե՛ք b ուղղի նկատմամբ այդ շրջանագծին համաչափ շրջանագիծը:

2.15. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բացասական թվերի մեզ հայտնի առաջին հիշատակումը հանդիպում է «Մաթեմատիկան ինը գրքերում» (Զան Ցան, III դար մ.թ.ա., Չինաստան) գրքերից մեկում: Բացասական թիվն այդ ժամանակ հասկացվում էր որպես պարտք, իսկ դրականը՝ ունեցվածք: Բացասական թվերի գումարումն ու հանումը իրագործվում էր պարտքի մասին դատողություններով:

Օրինակ՝ բացասական թվերի գումարման կանոնը ձևակերպվում էր հետևյալ կերպ. «Եթե մի պարտքին ավելացնենք մի այլ պարտք, ապա կստանանք պարտք, ոչ թե՛ ունեցվածք»: «Մինուս» նշան այն ժամանակ չի եղել, իսկ դրական և բացասական թվերը տարբերելու համար Ջան Ցանը դրանք գրել է տարբեր գույնի թանաքներով:

Հին հույն գիտնական Դիոֆանտը (III դար) ազատորեն գործողություններ էր կատարում բացասական թվերով: Դրանք անընդհատ հանդիպում են նրա «Թվաբանություն» գրքի շատ խնդիրների լուծման միջանկյալ հաշվարկներում: Օրինակ՝ բացասական թվերով բազմապատկման գործողությունները Դիոֆանտը մեկնաբանում էր այսպես. «Հանվողը հանվողով բազմապատկելիս ստացվում է ավելացվող, իսկ հանվողը ավելացվողով բազմապատկելիս ստացվում է հանվող»:

Մեր թվարկության VI–VII դարերում հնդիկ մաթեմատիկոսներն էլ էին արդեն օգտվում բացասական թվերից, բայց դեռևս դրանք հասկանալով որպես պարտք: Առաջին անգամ բացասական թվերով բոլոր չորս թվաբանական գործողությունները բերված են հնդիկ մաթեմատիկոս և աստղագետ Բրամահուպտայի (598–660) կողմից: Օրինակ՝ բաժանման կանոնը նա ձևակերպում էր այսպես. «Դրականը բաժանած դրականի, կամ բացասականը բաժանած բացասականի՝ դառնում է դրական: Բայց դրականը բաժանած բացասականի կամ բացասականը բաժանած դրականի՝ մնում է բացասական»:

Հնդիկներից անկախ, որպես դրական թվերի հակադրություններ, բացասական թվերին է հանգել իտալացի մաթեմատիկոս Լեոնարդո Պիզանսկին (Ֆիբոնաչի) (XIII դար): Առաջինը գերմանացի մաթեմատիկոս Շտիֆելն է, որ բացասական թվերը դիտել է որպես զրոյից փոքր թվեր («փոքր, քան ոչինչը»):

Սակայն XVI–XVII դարերում անգամ եվրոպական շատ մաթեմատիկոսներ չէին ընդունում բացասական թվերը. հաշվարկներում այդպիսի թվեր հանդիպելիս անվանում էին դրանք կեղծ, անհնարին:

Բացասական թվերի ժամանակակից մեկնաբանությունը, հիմնված կոորդինատային առանցքի վրա զրոյից ձախ հատվածներ տեղադրելու վրա, տրված է հոլանդացի մաթեմատիկոս Ա. Ժիրարի (1595–1632) և ֆրանսիացի մաթեմատիկոս ու փիլիսոփա Ռ. Դեկարտի (1596–1650) աշխատանքներում:


Այսպիսով՝ բացասական թվերի ժամանակակից մեկնաբանմանը հանգելու համար բազմաթիվ գիտնականների դեգերումներն ու ջանքերն են պահանջվել Ջան Ցանից մինչև Դեկարտն ընկած 18 երկարաձիգ դարերի ընթացքում:

– Ոչ, սխալվում եք, ես չեմ ծխում արդեն 24 օր:

Ճիշտ գնահատեց արդյոք վարողը խաղացողի պատասխանը:

- 453.** Հանդիպեցին երեք դասընկերուհի՝ Կանաչյանը, Կապուտիկյանը և Սևոյանը: Նրանցից մեկը հագել էր սև շրջագգեստ, մյուսը՝ կապույտ, իսկ երրորդը՝ կանաչ: Կանաչյանը դիմեց Սևոյանին. «Եթե ես ու դու փոխենք մեր զգեստները, ապա երեքիս զգեստների գույները կհամապատասխանեն մեր ազգանուններին»: Ով ո՞ր զգեստով էր:
- 454.** Գոհարը, Լուսինեն, Լիլիթն ու Տիգրանը մրցումներում զբաղեցրին առաջին չորս տեղերը: Այն հարցին, թե ով որ տեղն է զբաղեցրել, նրանցից երեքը պատասխանեցին.
- 1) Գոհարը ոչ առաջինն է, ոչ՝ չորրորդը,
 - 2) Լուսինեն երկրորդն է,
 - 3) Լիլիթը չորրորդը չէ:
- Ո՞ր տեղն էր զբաղեցրել ամեն մեկը:
- 455.** Ունենք մետաղադրամներով լի երեք քսակ: Նրանցից մեկում 9 գրամանոց կեղծ մետաղադրամներ են: Մնացած քսակներում 10 գրամանոց իսկական մետաղադրամներ են: Ունենք կշեռք, որով կարելի է պարզել քսակներից ընտրած մետաղադրամների ցանկացած հավաքածուի ընդհանուր կշիռը: Ինչպե՞ս մեկ կշռումով որոշել, թե որ քսակում են կեղծ մետաղադրամները:
- 456.** Լուծե՛ք նախորդ խնդիրը.
- ա) չորս, բ) հինգ, գ) տասը քսակների համար, եթե մեկ քսակում՝ կեղծ, իսկ մնացածում իսկական մետաղադրամներ են:
- 457.** Աշակերտներն արկղում դրեցին երեք գլխարկ՝ մեկը կապույտ, երկուսը կարմիր: Ուսուցիչը գրատախտակի մոտ կանչեց նրանցից երկուսին, որոնք կանգնեցին դեմքով դեպի դասարանը և փակեցին իրենց աչքերը: Ուսուցիչը յուրաքանչյուրի գլխին մի գլխարկ դրեց, իսկ մյուս գլխարկը թաքցրեց արկղում: Աշակերտները բացեցին աչքերը, և նրանցից յուրաքանչյուրը կարող էր տեսնել մյուսի գլխարկը, բայց չէր տեսնի իրենը: Կարո՞ղ է նրանցից որևէ մեկը որոշել իր գլխարկի գույնը, եթե արկղում թաքցրած գլխարկը.
- ա) կարմիր էր, բ) կապույտ էր:
- 458.** Լուծե՛ք նախորդ խնդիրը երկու կապույտ ու 3 կարմիր գլխարկի և երեք աշակերտի համար: Ի՞նչ դեպքեր է պետք դիտարկել:
- 459.** Քաղաք ժամանելուն պես Խոջա Նասրեդինը թակեց առաջին իսկ պատահած տան դուռը և ապաստան խնդրեց: Նասրեդինը փող չունեք, բայց ուներ 7 օղակով ոսկյա շղթա: Տանտերը համաձայնեց 7 օրով տեղավորել Նասրեդինին՝ այսպիսի պայմաններով.
- 1) մեկ օրվա համար Նասրեդինը պետք է վճարի շղթայի մեկ օղակ,
 - 2) յուրաքանչյուր օրվա վարձը պետք է վճարվի այդ օրվա սկզբում,
 - 3) կարելի է սղոցել մեկից ոչ ավելի օղակ:
- Կհաջողվի՞ Նասրեդինին կատարել այդ պայմանները:

- 460.** Մի տուփում դրված են երկու սպիտակ, մյուսում՝ երկու կարմիր, երրորդում՝ մեկ սպիտակ և մեկ կարմիր գնդակ: Յուրաքանչյուր արկղին պիտակ է փակցված, սակայն այն սխալ է արտահայտում այդ տուփի պարունակությունը (սկար 62): Ո՞ր տուփից առանց նայելու պետք է մի գնդակ հանել, որպեսզի հնարավոր լինի որոշել բոլոր տուփերի ճիշտ պարունակությունը:



Նկար 62

- 461.** Դիանան, Էդգարն ու Անահիտը բակում խաղում էին և նրանցից մեկը անզգուշաբար գնդակով կոտրեց պատուհանի ապակին: Դիանան ասաց. «Այդ ես չեմ կոտրել ապակին»: Էդգարն ասաց. «Այդ Անահիտն է կոտրել ապակին»: Հետագայում պարզվեց, որ այդ երկու պնդումներից մեկը ճիշտ է, մյուսը՝ սխալ: Երեխաներից ո՞վ է կոտրել ապակին:
- 462.** *Ս.Ա. Ռաչինսկիի խնդիրներից:* ա) Որոշել եմ՝ 1892 թվին Պետերբուրգում անցկացնել այնքան բռպե, որքան ժամ որ կանցկացնեմ գյուղում: Այդ տարում այլևս ոչ մի տեղ չեմ լինի: Ինչքա՞ն ժամանակ ես կանցկացնեմ Պետերբուրգում: (Մի տեղից մի այլ տեղ փոխադրվելու ժամանակը հաշվի չի առնվում):
- բ) Ես իմ երկու դուստրերից ու երեք ուսուրերից ամեն մեկին նույն քանակությամբ բլիթներ տվեցի: Երբ տղաները իրենց բաժիններից 5-ական բլիթներ կերան, նրանք միասին ունեցան այնքան բլիթ, որքան աղջիկները միասին: Ընդամենը քանի՞ բլիթ էի բաժանել երեխաներին:
- գ) Մոսկվայից Տամբով 450 վերստ է: Միաժամանակ միմյանց ընդառաջ շարժվեցին Մոսկվայից՝ փոստատար, իսկ Տամբովից՝ ապրանքատար գնացքները: Երկրորդն ամբողջ ճանապարհը կարող է անցնել 18 ժամում, իսկ առաջինը՝ երկու անգամ շուտ: Քանի՞ ժամ հետո նրանք կհանդիպեն:
- դ) Դուստրը գործում է օրական 3 արշին: 4 օր միայնակ գործելուց հետո նրան միացավ նաև մայրը, որը գործում էր օրը 5 արշին: Երբ նրանց գործվածքները հավասարվեցին, նրանք դադարեցրին աշխատանքը: Ընդամենը քանի՞ արշին գործեցին:

3

գլուխ

ՌԱՅԻՈՆԱԿ ԹՎԵՐ

3.1. ԲԱՅԱՍԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Ավելի վաղ ուսումնասիրել ենք սովորական կոտորակները. նրանք նաև կոչվում են դրական կոտորակներ:

Օրինակ՝ $\frac{1}{2}, \frac{2}{3}, \frac{3}{4}, \frac{8}{7}, \frac{6}{6}, \frac{7}{1}$ թվերը դրական կոտորակներ են:

Երբեմն դրական կոտորակի առջև «+» նշան են դնում՝ համարելով, որ դրանից թիվը չի փոխվում, այսինքն՝

$$+\frac{1}{2} = \frac{1}{2}, +\frac{8}{7} = \frac{8}{7}, +\frac{7}{1} = \frac{7}{1}$$

Դրական կոտորակի առջև «-» նշան դնելով՝ համարվում է, որ ստացվում է նոր թիվ. այն անվանում են **բացասական կոտորակային թիվ** կամ **բացասական կոտորակ**:

Օրինակ՝ $-\frac{1}{2}, -\frac{8}{7}, -\frac{7}{1}$ թվերը բացասական կոտորակներ են:

Ինչպես գիտեք, միայն նշանով տարբերվող թվերն անվանում են **հակադիր թվեր**:

Օրինակ՝ $(+\frac{1}{2})$ և $(-\frac{1}{2})$, թվերը հակադիր են:

Հակադիր թվերից մեկը դրական է, մյուսը՝ բացասական: Բացառություն է 0 թիվը՝ 0-ն հակադիր է ինքն իրեն:

$0 = +\frac{0}{n} = -\frac{0}{n}$, որտեղ n -ը ցանկացած բնական թիվ է:

Հիշենք, որ 0-ն ո՛չ դրական է, ո՛չ էլ՝ բացասական:

Եթե ցանկացած նշանի կոտորակի առջև «+» նշան դնենք, ապա կստանանք նույն թիվը, եթե «-» նշան դնենք, ապա կստանանք այդ կոտորակին հակադիր թիվը: Օրինակ՝

$$+\left(-\frac{3}{4}\right) = -\frac{3}{4}$$

$$-\left(+\frac{3}{4}\right) = -\frac{3}{4}$$

Մտցնենք կոտորակի **բացարձակ արժեքի** կամ **մոդուլի** գաղափարը:

Գրական կոտորակի մոդուլ անվանում են այդ կոտորակն ինքը:

Օրինակ՝ $\frac{5}{8}$ կոտորակի մոդուլը $\frac{5}{8}$ է, ինչը գրում են այսպես. $\left|\frac{5}{8}\right| = \frac{5}{8}$:

Բացասական կոտորակի մոդուլ անվանում են նրան հակադիր (դրական) կոտորակը:

Օրինակ՝ $-\frac{5}{8}$ կոտորակի մոդուլը $\frac{5}{8}$ է, ինչը գրում են այսպես. $\left|-\frac{5}{8}\right| = \frac{5}{8}$:

Զրոյի մոդուլը զրո է:

$$|0| = 0$$

Հակադիր թվերի մոդուլները նույնն են:

Օրինակ՝ $\left|\frac{5}{8}\right| = \left|-\frac{5}{8}\right| = \frac{5}{8}$:

Կոտորակի «-» նշանը նրա առջև դնելու փոխարեն կարելի է գրել նրա **համարիչում կամ հայտարարում**: Օրինակ՝ ձիշտ են հետևյալ հավասարությունները.

$$-\frac{1}{2} = \frac{-1}{2} = \frac{1}{-2},$$

$$-\frac{5}{7} = \frac{-5}{7} = \frac{5}{-7},$$

$$-\frac{13}{16} = \frac{-13}{16} = \frac{13}{-16},$$

$$-\frac{0}{2} = \frac{-0}{2} = \frac{0}{-2} = 0:$$

463. Գրե՛ք երեք բացասական կոտորակ:

464. Ո՞ր թվերն են անվանում հակադիր: Բերե՛ք օրինակներ:

465. Ո՞ր թիվն է հակադիր.

ա) զրոյին,

բ) տրված դրական կոտորակին,

գ) տրված բացասական կոտորակին:

466. Ի՞նչն են անվանում.

ա) դրական կոտորակի մոդուլ,

բ) բացասական կոտորակի մոդուլ,

գ) զրոյի մոդուլ:

467. Ո՞ր կոտորակներն են դրական, որոնք՝ բացասական.

$$\frac{1}{6}, \quad -\frac{1}{3}, \quad \frac{0}{4}, \quad -\frac{2}{7}, \quad -\frac{3}{1}, \quad -\frac{0}{2}$$

468. Նշե՛ք $\frac{1}{2}$, $\frac{2}{9}$, $-\frac{1}{3}$, $-\frac{3}{7}$, $\frac{-4}{11}$ կոտորակներին հակադիր կոտորակները:

469. Ո՞ր թիվն է ինքն իր հակադիրը:

Օգտվելով բերված նմուշային օրինակներից՝ պարզեցրե՛ք գրառումը (470, 471).

470. $\text{ա) } |8|=8 \quad \text{բ) } |-7|=7 \quad \text{գ) } \left|\frac{1}{9}\right|=\frac{1}{9}, \quad \text{դ) } \left|\frac{-2}{3}\right|=\frac{2}{3}:$

$\text{ե) } |2|, \quad \text{զ) } |-3|, \quad \text{է) } |0|, \quad \text{ը) } \left|\frac{1}{4}\right| \quad \text{թ) } \left|-\frac{1}{5}\right| \quad \text{ժ) } \left|\frac{2}{7}\right|:$

471. $\text{ա) } \left|\frac{-1}{4}\right|, \quad \text{բ) } \left|\frac{-2}{9}\right|, \quad \text{գ) } \left|\frac{-1}{8}\right|, \quad \text{դ) } \left|\frac{-8}{15}\right|:$

$\text{ե) } \left|-\frac{3}{8}\right|, \quad \text{զ) } \left|-\frac{8}{9}\right|, \quad \text{է) } -\left|-\frac{1}{2}\right|, \quad \text{ը) } -\left|-\frac{1}{5}\right|:$

472. Համեմատե՛ք թվերը.

$\text{ա) } \left|\frac{2}{3}\right| \text{ և } \left|-\frac{2}{3}\right|, \quad \text{բ) } |5| \text{ և } \left|-\frac{1}{2}\right|, \quad \text{գ) } \left|-\frac{1}{5}\right| \text{ և } \left|\frac{1}{4}\right|:$

473. Ըստ բերված նմուշօրինակի գրե՛ք կոտորակն այնպես, որ «-» նշանը լինի կոտորակի համարիչում.

$\text{ա) } -\frac{3}{4} = \frac{-3}{4}:$

$\text{բ) } -\frac{5}{7}, \quad \text{գ) } -\frac{7}{3}, \quad \text{դ) } -\frac{4}{9}, \quad \text{է) } -\frac{1}{9}, \quad \text{զ) } -\frac{13}{12}:$

474. Նմուշային օրինակից օգտվելով՝ կոտորակը գրե՛ք այնպես, որ «-» նշանը լինի կոտորակի հայտարարում.

$\text{ա) } -\frac{3}{4} = \frac{3}{-4}:$

$\text{բ) } -\frac{6}{5}, \quad \text{գ) } -\frac{7}{8}, \quad \text{դ) } -\frac{8}{9}, \quad \text{է) } -\frac{17}{18}, \quad \text{զ) } -\frac{18}{17}:$

475. Գրե՛ք $\frac{-2}{7}, \frac{-6}{11}, \frac{-2}{13}, \frac{5}{-7}, \frac{4}{-9}, \frac{12}{-7}$ կոտորակներն այնպես, որ «-» նշանները լինեն կոտորակների առջևում:

476. Հավասար են արդյոք կոտորակները.

$\text{ա) } -\frac{2}{3} \text{ և } \frac{-2}{3}, \quad \text{բ) } \frac{-5}{8} \text{ և } -\frac{5}{8}, \quad \text{գ) } \frac{4}{9} \text{ և } \frac{-4}{9}, \quad \text{դ) } -\frac{5}{7} \text{ և } \frac{5}{7}:$

477. Գտե՛ք թվի մոդուլը.

$\text{ա) } -\frac{1}{2}, \quad \text{բ) } \frac{-2}{3}, \quad \text{գ) } \frac{3}{4}, \quad \text{դ) } \frac{5}{-9}, \quad \text{է) } 0, \quad \text{զ) } -\frac{5}{4}:$

478. Հաշվե՛ք.

$$\text{ա) } \left| -\frac{1}{2} \right| + \left| \frac{1}{2} \right|,$$

$$\text{բ) } \left| -\frac{11}{3} \right| - \left| -\frac{8}{3} \right|,$$

$$\text{գ) } \left| -\frac{10}{3} \right| \cdot \left| -\frac{12}{5} \right|,$$

$$\text{դ) } \left| 2\frac{3}{5} \right| : \left| -\frac{26}{5} \right|:$$

3.2. ՌԱՅԻՆՆԱԼ ԹՎԵՐ

Այն թիվը, որը կարելի է գրել $\frac{a}{b}$ տեսքով, որտեղ a -ն ու b -ն ամբողջ թվեր են, և b -ն 0 չէ, անվանում են կոտորակ (ռացիոնալ կոտորակ) կամ ռացիոնալ թիվ:

Օրինակ՝ $\frac{2}{3}$, $\frac{-6}{5}$, $\frac{8}{-11}$ և $\frac{-7}{-7}$ թվերը ռացիոնալ թվեր են:

a թիվն անվանում են $\frac{a}{b}$ կոտորակի համարիչ, իսկ b թիվը՝ հայտարար:

Կոտորակների հավասարությունը որոշում են կոտորակի հիմնական հատկության միջոցով.

Եթե կոտորակի համարիչն ու հայտարարը բազմապատկենք գրոյից տարբեր միևնույն ամբողջ թվով, ապա կստանանք սկզբնականին հավասար կոտորակ.

$$\frac{a}{b} = \frac{a \cdot n}{b \cdot n} \quad (1)$$

որտեղ a -ն, b -ն, n -ը ամբողջ թվեր են,

$$\text{Օրինակներ՝ 1) } \frac{3}{4} = \frac{3 \cdot (-2)}{4 \cdot (-2)} = \frac{-6}{-8} \quad 2) \frac{-5}{2} = \frac{(-5) \cdot 3}{2 \cdot 3} = \frac{-15}{6}$$

$$3) \frac{2}{-3} = \frac{2 \cdot (-1)}{(-3) \cdot (-1)} = \frac{-2}{3}$$

(1) հավասարության միջոցով $\frac{a}{b}$ կոտորակից $\frac{a \cdot n}{b \cdot n}$ կոտորակին անցումը անվանում են կոտորակի բերում նոր հայտարարի, իսկ հետադարձ անցումը՝ կոտորակի կրճատում.

$$\frac{a \cdot n}{b \cdot n} = \frac{a}{b} \quad (2)$$

(2) հավասարությունը նշանակում է, որ եթե կոտորակի համարիչն ու հայտարարն ունեն գրոյից տարբեր ընդհանուր n ամբողջ արտադրիչ, ապա կոտորակը կարելի է կրճատել n -ով (համարիչն ու հայտարարը բաժանել n -ի): Այդ դեպքում ստացվում է սկզբնականին հավասար կոտորակ:

$$\text{Օրինակներ՝} \quad 1) \frac{-12}{14} = \frac{(-6) \cdot 2}{7 \cdot 2} = \frac{-6}{7} \quad 2) \frac{-15}{-9} = \frac{(-3) \cdot 5}{(-3) \cdot 3} = \frac{5}{3}$$

Ընդգծենք, որ երկու կոտորակներ հավասար են այն և միայն այն դեպքում, եթե նրանցից մեկը կրճատելով կարելի է ստանալ մյուսը:

Կարելի է նաև ասել. երկու կոտորակներ հավասար են այն և միայն այն դեպքում, եթե նրանցից մեկի համարիչն ու հայտարարը գրոյից տարբեր թվով բազմապատկելով կարելի է ստանալ մյուսը:

$\frac{a}{b}$ ռացիոնալ թիվը.

ա) դրական կոտորակ է, եթե a -ն ու b -ն նույն նշանի են,

բ) բացասական կոտորակ է, եթե a -ն ու b -ն տարբեր նշանի են,

գ) գրո թիվ է, եթե $a = 0$, $b \neq 0$:

Բերենք դրանք հաստատող օրինակներ.

1) $\frac{3}{5}$ -ը դրական կոտորակ է,

$$\frac{-7}{-8} = \frac{(-7) \cdot (-1)}{(-8) \cdot (-1)} = \frac{7}{8}, \text{ այսինքն } \frac{-7}{-8} \text{ը դրական կոտորակ է:}$$

2) $\frac{-3}{5} = -\frac{3}{5}$, այսինքն $\frac{-3}{5}$ -ը բացասական կոտորակ է,

$$\frac{3}{-8} = -\frac{3}{8}, \text{ այսինքն } \frac{3}{-8} \text{ը բացասական կոտորակ է:}$$

3) $\frac{0}{3} = 0$, $\frac{0}{-5} = \frac{0 \cdot (-1)}{(-5) \cdot (-1)} = \frac{0}{5}$ այսինքն $\frac{0}{3} = 0$, $\frac{0}{-5} = 0$:

Ցանկացած a ամբողջ թվի համար ձիշտ է հավասարությունը.

$$\frac{a}{1} = a:$$

Դա ցույց է տալիս, որ

ցանկացած ամբողջ թիվ ռացիոնալ թիվ է:

$$\text{Օրինակ՝ } -3 = -\frac{3}{1} = \frac{-3}{1}:$$

Օգտվելով կոտորակի հիմնական հատկությունից՝ կարելի է ցանկացած կոտորակ բերել դրական հայտարարի:

ե) $-\frac{81}{-72}$, գ) $-\frac{96}{-143}$ է) $-\frac{15}{42}$, ը) $\frac{-55}{-75}$,
 թ) $-\frac{-125}{625}$, ժ) $\frac{100}{-8}$ ի) $\frac{32}{-512}$, լ) $\frac{-32}{-128}$:

493. Կրճատե՛ք կոտորակը: Արդյունքը գրե՛ք դրական հայտարարով կոտորակի տեսքով.

ա) $\frac{-8}{-12}$, բ) $\frac{-35}{21}$ գ) $\frac{36}{-45}$, դ) $\frac{45}{-63}$,
 ե) $-\frac{35}{77}$, զ) $\frac{-96}{-128}$ է) $\frac{-124}{-196}$, ը) $\frac{252}{-444}$:

494. Գտե՛ք այն x թիվը, որի համար ճիշտ է հավասարությունը.

ա) $\frac{-1}{3} = \frac{x}{3}$, բ) $\frac{-4}{5} = \frac{x}{20}$, գ) $-\frac{2}{3} = \frac{x}{9}$,
 դ) $-\frac{5}{6} = \frac{x}{30}$, է) $-\frac{4}{5} = \frac{-20}{x}$, զ) $-\frac{x}{3} = \frac{-12}{18}$:

Պարզեցրե՛ք գրելաձևը (**495, 496**).

495. ա) $-\frac{-5}{7}$, բ) $-\frac{4}{-3}$, գ) $-\frac{-3}{7}$, դ) $-\frac{9}{-10}$:

496. ա) $-\left(\frac{-7}{9}\right) = -\frac{-7}{9} = \frac{-(-7)}{9} = \frac{7}{9}$:

բ) $-\left(-\frac{4}{9}\right)$, գ) $-\left(-\frac{-1}{3}\right)$, դ) $-\left(-\frac{2}{-13}\right)$, է) $-\left(-\frac{-1}{-2}\right)$:

497. Հավասար են արդյոք հետևյալ ռացիոնալ թվերը.

ա) $\frac{1}{4}$ և $\frac{-8}{-32}$, բ) $\frac{-75}{100}$ և $\frac{3}{-4}$,
 գ) $\frac{24}{-40}$ և $\frac{-27}{45}$, դ) $\frac{-77}{-78}$ և $\frac{63}{72}$:

498. Կոտորակը գրե՛ք ամբողջ թվի տեսքով.

ա) $\frac{2}{1}$, բ) $\frac{-13}{1}$, գ) $\frac{0}{2}$, դ) $\frac{-14}{7}$, է) $\frac{-32}{-4}$, զ) $\frac{44}{-11}$:

499. $-\frac{17}{9}$, $\frac{37}{-48}$, $\frac{-15}{-5}$, $\frac{0}{-7}$, $\frac{-17}{-1}$, $\frac{16}{-8}$, $-\frac{-46}{23}$, $\frac{-20}{-30}$ ռացիոնալ թվերից դո՛ւրս գրեք նրանք, որոնք. ա) բնական են, բ) ամբողջ են:

500. Հետևյալ ռացիոնալ թվերից գտե՛ք միմյանց հավասարները:

$\frac{3}{-9}$, $\frac{-5}{-10}$, $\frac{4}{-8}$, $\frac{-25}{50}$, $\frac{0}{100}$, $\frac{17}{34}$, $\frac{0}{-72}$, $\frac{100}{-300}$:

501. Գրե՛ք դրական հայտարարով և տրված թվի՛ն հավասար 3 կոտորակ.

ա) 5, բ) -2, գ) -28, դ) 0:

502. Գրական՝ն է, բացասական՝ն է արդյոք տրված կոտորակը.

ա) $\frac{3}{5}$, բ) $\frac{-5}{9}$, գ) $\frac{4}{-3}$, դ) $\frac{0}{-1}$, ե) $\frac{-6}{-8}$,
 զ) $-\frac{1}{3}$, է) $-\frac{7}{9}$, ը) $\frac{0}{-4}$, թ) $\frac{-9}{17}$, ժ) $\frac{-31}{-4}$.

503. Գրե՛ք տրվածին հակադիր կոտորակը.

ա) $-\frac{1}{5}$, բ) $\frac{-1}{3}$, գ) $\frac{4}{7}$, դ) $-\frac{5}{6}$, ե) $-\frac{7}{8}$, զ) $\frac{-1}{-3}$:

504. Նո՞ւյն, թե՞ տարբեր նշանի են m ու n թվերը ($m \cdot n \neq 0$) եթե ձիշտ է հավասարությունը.

ա) $\left| \frac{m}{n} \right| = \frac{m}{n}$, բ) $\left| \frac{m}{n} \right| = -\frac{m}{n}$:

3.3. ՌԱՅԻՆՆԱԿ ԹՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ

Կամայական երկու կոտորակ կարելի է բերել ընդհանուր դրական հայտարարի:

Օրինակ՝ $\frac{2}{-7}$ և $-\frac{3}{5}$ կոտորակները բերենք ընդհանուր դրական հայտարարի.

$$\frac{2}{-7} = \frac{2 \cdot (-5)}{(-7) \cdot (-5)} = \frac{-10}{35}, \quad -\frac{3}{5} = -\frac{(-3) \cdot 7}{5 \cdot 7} = \frac{-21}{35}.$$

Փաստորեն երկու ռացիոնալ թիվ բերել դրական ընդհանուր հայտարարի՝ նշանակում է նրանք ներկայացնել $\frac{a}{b}$ և $\frac{c}{b}$ տեսքերով, որտեղ b -ն բնական, իսկ a -ն ու c -ն ամբողջ թվեր են:

Ընդհանուր դրական հայտարարով երկու կոտորակներ հավասար են, եթե հավասար են նրանց համարիչները:

Ընդհանուր դրական հայտարարով երկու կոտորակներից մեծ է այն, որի համարիչը մեծ է:

Այսպիսով՝ ընդհանուր դրական հայտարարով կոտորակների համեմատումը հանգում է ամբողջ թվերի՝ այդ կոտորակների համարիչների, համեմատմանը:

Օրինակ 1. Համեմատենք $\frac{-6}{7}$ և $\frac{-5}{7}$ կոտորակները:

Քանի որ $-6 < -5$, ապա $\frac{-6}{7} < \frac{-5}{7}$:

Տարբեր հայտարարներով երկու կոտորակներ համեմատելու համար կարելի է դրանք բերել ընդհանուր դրական հայտարարի և համեմատել ստացված կոտորակները:

Օրինակ 2. Համեմատենք $\frac{5}{-8}$ և $-\frac{3}{4}$ կոտորակները:

$$\frac{5}{-8} = \frac{-5}{8}, \quad -\frac{3}{4} = \frac{-3}{4} = \frac{(-3) \cdot 2}{4 \cdot 2} = \frac{-6}{8}:$$

Քանի որ $-5 > -6$, ապա $\frac{-5}{8} > \frac{-6}{8}$, ուրեմն $\frac{5}{-8} > -\frac{3}{4}$:

Նշենք, որ կոտորակների համեմատման կանոնից հետևում է.

- 1) ցանկացած դրական կոտորակ մեծ է զրոյից,
- 2) ցանկացած բացասական կոտորակ փոքր է զրոյից,
- 3) ցանկացած դրական կոտորակ մեծ է բացասականից,
- 4) երկու կոտորակ հավասար են այն և միայն այն դեպքում, եթե ընդհանուր դրական հայտարարի բերելուց հետո, հավասար են նրանց համարիչները:

505. Ինչպե՞ս են համեմատում.

- ա) ընդհանուր դրական հայտարարով կոտորակները,
բ) տարբեր հայտարարներով կոտորակները:

506. Ձևակերպե՛ք ա) դրական կոտորակի և զրոյի, բ) բացասական կոտորակի և զրոյի, գ) դրական կոտորակի և բացասական կոտորակի համեմատության կանոնը:

Համեմատե՛ք թվերը (**507–512**).

507. ա) 15 և -45, բ) 79 և 0, գ) -81 և 0,
դ) 48 և -1000, ե) -999 և -1, զ) 46 և -46:

508. ա) $\frac{3}{7}$ և $\frac{4}{7}$, բ) $\frac{49}{50}$ և $\frac{4}{5}$, գ) $\frac{11}{20}$ և $\frac{17}{30}$:

509. ա) $\frac{37}{452}$ և $\frac{207}{388}$, բ) $\frac{456}{729}$ և $\frac{895}{891}$, գ) $\frac{999}{1000}$ և $\frac{1000}{1001}$:

510. ա) $\frac{6}{7}$ և $\frac{8}{7}$, բ) 1 և $\frac{7}{8}$, գ) 1 և $\frac{9}{8}$, դ) $\frac{1}{2}$ և $\frac{1}{3}$:

511. ա) -1 և -2, բ) -12 և -7, գ) $-\frac{1}{2}$ և 0, դ) 0 և $\frac{-3}{4}$:

512. ա) $-\frac{1}{2}$ և $\frac{1}{2}$, բ) $-\frac{4}{5}$ և $-\frac{3}{5}$, գ) $-\frac{1}{7}$ և $\frac{-3}{7}$, դ) $-\frac{3}{8}$ և $\frac{5}{-8}$:

513. Թվերը գրե՛ք աճման կարգով.

$$-\frac{1}{8}, \quad -\frac{5}{8}, \quad -\frac{6}{8}, \quad -\frac{2}{8}, \quad -\frac{9}{8}, \quad -1, \quad -\frac{3}{8}, \quad -\frac{4}{8}:$$

514. Թվերը գրե՛ք նվազման կարգով.

